KONRAD ADENAUER STIFTUNG

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Center for European Studies

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՐԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

«ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կոնրադ Ադենաուեր Հիմնադրամ
Երևան 2020

ՀՏԴ 37.016:30(07)
ԳՄԴ 74.266.0g7
Հ 422

Մեթոդական ձեռնարկը մշակվել է Կոնրադ Ադենաուեր Հիմնադրամի աջակցությամբ և երաշխավորվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝ 2017 թվականի մարտի 10-ին ՀՀ կրթության և գիտության նախարարության և Կոնրադ Ադենաուեր Հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի միջև կրթության ոլորտում համագործակցության հուշագրի շրջանակում: Սույն մեթոդական ձեռնարկը մշակվել է Երևանի պետական համալսարանի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի հետ համագործակցությամբ:

Հարությունյան Կարինե, Վարդանյան Գայանե
Հ 422 Մեթոդական ձեռնարկ «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչների համար / Կ. Հարությունյան, Գ. Վարդանյան.- Եր.: Կոնրադ Ադենաուեր Հիմնադրամ, 2020.- 192 էջ:

ՀՏԴ 37.016:30(07)
ԳՄԴ 74.266.0g7

ISBN 978-9939-1-1105-6

© Կոնրադ Ադենաուեր Հիմնադրամ, 2020
© ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԻՐԱՎՈՒՆՔ 6

ԴԱՍ 1.1. Հասարակական կարգավորում, հասարակական նորմեր..... 6

ԴԱՍ 1.2. Հասարակական կարգավորում. իրավունք 12

ԴԱՍ 4.1. Իրավունքի համակարգ..... 16

ԴԱՍ 4.5. Աշխատանքային իրավունք..... 20

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 30

ԴԱՍ 1. Դատական իշխանությունը իշխանությունների բաժանման համակարգում 30

ԴԱՍ 2. Առաջին ատյանի դատարաններ..... 34

ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 47

ԴԱՍ 1. Մարդու իրավունքներ և պետություն..... 47

ԴԱՍ 2. Մարդու իրավունքներ և սահմանադրություն 51

ԳԼՈՒԽ 4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ 77

ԴԱՍ 1. Միջազգային իրավունքի աղբյուրները 77

ԴԱՍ 4. Միջազգային կազմակերպությունները և միջազգային իրավունքը 96

ԳԼՈՒԽ 5. ՄԱՐԴԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 104

ԴԱՍ 1-2. Ինչ է քաղաքականությունը..... 104

ԳԼՈՒԽ 6. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ՀԻՄՆԱՏԱՐՐԵՐԸ... 119

ԴԱՍ 1. Քաղաքական համակարգի էությունը 119

Դաս 5. Քաղաքական առաջնորդություն (լիդերություն) 124

Դաս 4-5. Պետությունը՝ քաղաքական համակարգի ինստիտուտ 129

Այլընտրանքային դաս 1 141
Այլընտրանքային դաս 2 144

Հավելված 1. Կիրառված մեթոդների և հնարների նկարագիր 146
Հավելված 2. Դասանյութերի հիման վրա ստեղծված ծաղրանկարներ 173

Ձեռնարկի բովանդակության մեջ ընդգրկված հեղինակների մասին հակիրճ տեղեկատվություն 180

Հասկացությունների բառարան 183
Գրականության ցանկ 190

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1.
ԻՐԱՎՈՒՆՔ

Թեմայի խորհուրդը

Գործիր միայն այն նորմի համաձայն, որով առաջնորդվելիս միաժամանակ կուզեիր, որ այն դառնա համընդհանուր օրենք:

(Իմանուիլ Կանտ)

Թեմայի ուսումնասիրման նպատակը

Հասկանալ և գնահատել հասարակության մեջ գործող հասարակական նորմերի դերակատարությունը մարդկանց փոխհարաբերությունները կարգավորելու գործում:

ԴԱՍ 1.1. Հասարակական կարգավորում. հասարակական նորմեր

Դասի ընթացքը

Առաջարկում ենք ուսուցչին դասն սկսել հետևյալ դերախաղով:

Ուսուցիչը, նախօրոք պայմանավորվելով 2-3 սովորողի հետ, արհեստական խառնաշփոթ է առաջացնում դասարանում: Զանգը հնչելուց հետո, դեռ կանգնած միջանցքում, զրուցում է մեկ այլ ուսուցչի հետ, երկու աշակերտ չի ցանկանում դասարան մտնել, աշակերտներից մեկն էլ առանց թույլտվության դուրս է գալիս դասարանից, մի ուրիշն էլ ազատ խոսում է հեռախոսով և այլն: Որպեսզի անց ուսուցիչը մտնում է դասարան և հայտարարում դասի սկիզբը: Այնուհետև առաջարկում է հարց քննարկման համար.

? - Ձեր կարծիքով իմ և դպրոցական նորմերին չհետևող 2-3 աշակերտների վարքագիծը արդարացված է, թե՞ անընդունելի:

Իհարկե, կինչեն տարբեր պատասխաններ: Շատերը կքննադատեն կարգազանցների վարքագիծը, կգտնվեն երեխաներ, որոնք կարդարաց-

նեն նման պահվածքը, որից հետո ուսուցիչը եզրակացություն է անում, այն է՝ ցանկացած հասարակության մեջ գոյություն ունեն կանոններ, կարգավորիչ նորմեր, որոնց միջոցով իրականացվում է հասարակության անդամների, կազմակերպությունների, պետական մարմինների փոխհարաբերությունների կարգավորում, հաստատվում է հասարակական կարգ, առանց որի չի կարող գոյություն ունենալ որևէ հասարակություն:

Օգնություն ուսուցչին

Հասարակական կարգը՝ որպես սոցիալական նորմերի և պահանջների կենսագործում, հասարակության մեջ ստեղծում է անհատների և կազմակերպությունների հնարավորությունների երաշխավորված համակարգ, սեփական անվտանգության վստահության գիտակցում, կարգուկանոն, որոշակիություն, համընդհանուր և հավասար կախվածություն հասարակական նորմերից, ներառյալ՝ օրենքից, ոչ թե կամայականություններից ու ապօրինությունից:

Հաջորդ քայլով ուսուցիչը գրատախտակին գրում է հասարակական նորմերի տեսակները՝ բարոյական, կրոնական, էթիկական, իրավական նորմեր և սովորույթներ: Առաջարկում է համեմատել դրանք՝ վեր հանելով նմանություններն ու տարբերությունները: Աշխատանքն ավելի պատշաճ կատարելու համար ուսուցիչն առաջարկում է այդ նորմերի հակիրճ նկարագիրը:

Բաշխման նյութ 1.

Բարոյական նորմերը ժամանակի ընթացքում ձևավորվում են հասարակության ներսում՝ հաշվի առնելով դրա անդամների պատկերացումները ճշմարտության և սխալի, բարու և չարի և այլ երևույթների վերաբերյալ:

Սովորույթները հասարակություններում ընդունված վարքագծի կանոններ են, որոնք ժամանակի ընթացքում պարբերաբար կրկնվելու շնորհիվ բյուրեղացել են և դարձել հասարակության կողմից պահանջվող վարքագծի կանոններ: Երբեմն դրանք կարող են դրսևորվել ավանդույթների տեսքով նաև:

Կրոնական նորմերը որոշակի կրոնի (քրիստոնեություն, մահմեդականություն, բուդդայականություն, հինդուիզմ, հուդայականություն, զրադաշտականություն և այլն) շրջանակներում ընդունված վարքագծի կանոններ են, որոնք կրոնական այդ համայնքի համար սահմանում են անհրաժեշտ, ցանկալի, թույլատրելի կամ արգելված վարքագծի կանոններ:

Էթիկական նորմերը որոշակի մասնագիտական համայնքներում (փաստաբանական, դատավորների, բժիշկների, գործարարների և այլն) գործող վարքագծի կանոններ են, որոնք ևս պարտադիր են կատարման այդ համայնքի ներկայացուցիչների համար: Եթե համայնքի անդամների կողմից այդ կանոնները չեն պահպանվում, ապա այդ համայնքը հնարավորություն է ստանում որոշակի հետևանքներ առաջացնելու այդ նորմերը խախտողի նկատմամբ, ընդհուպ համայնքից հեռացում:

Իրավական նորմերը *մարդու վարքագիծը, հասարակական հարաբերությունները կարգավորող կանոնների համակցություն են, սահմանվում են պետության կողմից, հստակ են և ունեն որոշակի ձև, ամրագրվում են պաշտոնական ակտերում (օրենքներ, հրամաններ և այլն), համապարտադիր են և օժտված են պետական հարկադրանքով, պայմանավորված են մարդու և հասարակության բնույթով (որքան զարգացած են մարդն ու հասարակությունը, այնքան առաջադիմական է իրավունքը), կոչված են արտահայտելու մարդու ազատությունը:*

Հասարակական նորմերի համեմատությունը առավել տեսանելի ներկայացնելու համար առաջարկվում է լրացնել հետևյալ աղյուսակը: Համեմատությունը կարելի է անցկացնել՝ իրավական նորմերը համեմատելով մնացած նորմերի հետ:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ				
Իրավական նորմերի և այլ նորմերի նմանությունները	**Իրավական նորմերի տարբերություններն այլ նորմերից**			
• Կարգավորում են հասարակական հարաբերություններ: • Կանոններ են: • Ստեղծել են մարդկանց որոշակի խմբեր:	**իրավական**	**բարոյական**	**էթիկական**	**կրոնական**
	Գրավոր են, հստակ են և ունեն որոշակի ձև, ամրագրվում են պաշտոնական ակտերում (օրենքներ, հրամաններ և այլն):	Հիմնականում բանավոր են:	Հիմնականում բանավոր են, կարող են ամրագրված լինել ներկազմակերպական փաստաթղթերում:	Կարող են և՛ գրավոր, և՛ բանավոր լինել:
	Համապարտադիր են և համընդհանուր:	Դրանց հետևելը հասարակության ներքին պահանջն է:	Պարտադիր են կատարման միայն մասնագիտական համայնքի ներկայացուցիչների կողմից:	Դրանց հետևելը պարտադիր չէ (եթե դրանք ամրագրված չեն օրենքում):

	Սահմանվում են պետության կողմից:	Ժամանակի ընթացքում ձևավորվում են հասարակության ներսում:	Մշակվում են մասնագիտական համայնքներում (փաստաբանական, դատավորների, բժիշկների, գործարարների և այլն):	Կրոնական տվյալ համայնքի համար սահմանում են անհրաժեշտ, ցանկալի, թույլատրելի կամ արգելված վարքագծի կանոններ:
	Օժտված են պետական հարկադրանքով:	Դրանք խախտելու դեպքում պետության կողմից հարկադրանք սահմանված չէ, սակայն առկա է հասարակական պարսավանք:	Դրանք խախտելու դեպքում կարող է պատիժ սահմանվել տվյալ համայնքի կողմից, ընդհուպ համայնքից հեռացում:	Դրանք խախտելու դեպքում պետության կողմից հարկադրանք սահմանված չէ:

@ Առաջադրանք

Կարդալ հետևյալ իրավիճակը և վեր հանել նորմերի այն տեսակները, որոնք առկա են հատվածում, նշել, թե որ նորմերն են խախտվել: Դուք ինչպե՞ս կկարգավորեիք խախտված նորմերի հետևանքով առաջացած իրավիճակը:

Հասարակագիտության ուսուցչի ուղեկցությամբ քաղաքի դպրոցներից մեկի 11-րդ դասարանի աշակերտները թատրոնում էին: Բեմադրվել էր Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրաման: Երեխաները կլանված հետևում էին ներկայացմանը, սակայն Արամը ժամանակ առ ժամանակ միացնում էր հեռախոսը և հաղորդագրություններ էր ուղարկում ընկերներին, Կարինեն ու Զարուհին շշուկով քննարկում էին դերասանների խաղը: Ներկայացումն սկսվելուց 10 րոպե հետո ներս մտավ նաև Կարենը, որն աղմուկով առաջացավ դեպի համադասարանցիները, չնայած հսկիչը նրան առաջարկել էր նստել վերջին շարքում: Ներկայացման 15-րդ րոպեին Քերոբը ցանկացավ դուրս գալ դահլիճից՝ պատճառաբանելով, որ այդ ներկայացումը դեմ է իր կրոնական համոզմունքներին: Ներկայացման ավարտին Սուրենն ու Արամն օգնեցին դուրս գալ ոտքը կոտրած Մարինեին, որը մեծ դժվարությամբ էր տեղաշարժվում: Երբ բոլորը դուրս եկան, պարզվեց՝ գողացել են Նարինեի դրամապանակը: Ուսուցչուհին անմիջապես դիմեց հսկիչներին, որոնք էլ առաջարկեցին զանգահարել ոստիկանություն:

Քննարկման հարցեր

1. ***Ինչպիսի՞ նորմեր կային իրավիճակում. դրանցից որո՞նք խախտվեցին:***
2. ***Ըստ ձեզ՝ ո՞ր նորմերն էին առավել կարևոր:***
3. ***Հասարակական խախտված նորմերը շտկելու համար ի՞նչ կառաջարկեիք:***

ԴԱՍ 1.2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ. ԻՐԱՎՈՒՆՔ

Դասի ընթացքը

Առաջարկում ենք ուսուցչին դասն սկսել հետևյալ ներածականով:

Ուսուցիչը դասն սկսում է փոքրիկ դասախոսությամբ, որի ընթացքում բացատրում է իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների հիմնական կարգավորիչի կարևոր նշանակության մասին: Նա ընդգծում է հատկապես այն միտքը, որ իրավունքը կոչված է իրականացնելու մարդասիրական դեր. այն մարդկանց հասարակական պաշտպանության միջոց է և համեմատական արդարության իրականացման գործոն: Իրավունքի շնորհիվ հնարավորինս մեղմացվում են հասարակության մեջ տեղ գտած հակասություններն ու անհամաձայնությունները, չեզոքացվում են բախումները: Այս ամենից ելնելով՝ իրավունքն օժտված է բացառիկ հատկանիշներով: Իրավունքն արտահայտվում և մարդկանց տեսանելի է դառնում իրավական նորմերի միջոցով: Իրավական նորմերը մարդկանց վարքագծի կանոններ են, որոնք սահմանվում են պետության կողմից և ունեն հստակ ձև և կառուցվածք:

Այս փոքրիկ դասախոսությունից հետո ուսուցիչն առաջարկում է ընթերցել ՀՀ Սահմանադրության ցանկացած հոդված և քննարկել այն: Սովորողներն իրենք են ընտրում հոդվածը:

Օրինակ՝

Հոդված 14. Զինված ուժերը և պաշտպանությունը

1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը:
2. Հայաստանի Հանրապետության զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և քաղաքացիական վերահսկողության ներքո են:
3. Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:

? Հարց.

- Իրավական նորմի ի՞նչ բնութագրիչներ կարելի է գտնել այս հոդվածում: Առանձնացրե՛ք դրանք:

Երեխաները կարող են տարբեր հատկանիշներ թվարկել այս հոդվածի վերաբերյալ. օրինակ՝ այն գրավոր է, ամրագրված է փաստաթղթում, ուղղված է ՀՀ քաղաքացիներին, օգտագործված է որոշակի բառապաշար, հասարակական որոշակի հարաբերություններ է կարգավորում և այլն: Քննարկումից հետո ուսուցիչը դասարանին է բաժանում **բաշխման նյութ 1-ը,** որն ընթերցելուց հետո կազմակերպում է խմբային աշխատանք ուսումնասիրվող թեմայի շուրջ:

Խմբային աշխատանք՝ համագործակցային քննարկում քարտերով (*մեթոդի նկարագրությունը տե՛ս հավելվածում)*

Բաշխման նյութ 1.

Իրավունքը վարքագծի համապարտադիր կանոնների ամբողջություն է, որ սահմանվում և պահպանվում է պետության կողմից և արտահայտում է երկրի բնակչության ընդհանուր և անհատական շահերը՝ հանդես գալով որպես հասարակության հարաբերությունների պետական կարգավորիչ: Իրավունքը իրավական նորմերի համակցություն է, որոնք իրենց հերթին օժտված են հետևյալ հատկանիշներով: Իրավունքն արտահայտվում և մարդկանց տեսանելի է դառնում իրավական նորմերի՝ կանոնների միջոցով: Իրավական նորմերը մարդկանց վարքագծի կանոններ են, որոնք սահմանվում են պետության կողմից և ունեն հստակ ձև և կառուցվածք: Եթե, օրինակ, բարոյական նորմերը վերացական կանոններ են, խիստ ձև չունեն, գտնվում են մարդկանց գիտակցության մեջ, ապա իրավական նորմերը խիստ որոշակի, հստակ ձև ունեցող կանոններ են և գտնվում են պետության կողմից ընդունված իրավական ակտերում՝ օրենքներում, կառավարության որոշումներում և այլն:

Որպես այդպիսին՝ իրավունքի նորմերն իրավունքի համակարգի բջիջներն են, կառուցվածքային ամենափոքր տարրերը, որոնց միջոցով կառուցվում է ամբողջ իրավունքի համակարգը: Այս ամենով հանդերձ՝ փորձենք ի մի բերել իրավունքի բոլոր հատկանիշները:

Այսպես.

1. *Իրավունքը մարդու վարքագիծը, հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի, կանոնների համակցություն է:*
2. *Իրավունքը սահմանվում է պետության կողմից:*
3. *Այն հստակ է և ունի որոշակի ձև:*
4. *Ամրագրվում է պաշտոնական ակտերում (օրենքներ, հրամաններ և այլն):*
5. *Համապարտադիր է (ուղղված է բոլորին) և օժտված է պետական հարկադրանքով:*
6. *Իրավունքը պայմանավորված է մարդու և հասարակության բնույթով (որքան զարգացած են մարդն ու հասարակությունը, այնքան առաջադիմական է իրավունքը), այն կոչված է արտահայտելու մարդու ազատությունը:*

Բաշխման նյութին ծանոթանալուց հետո դասարանը բաժանվում է 3 խմբի: Քննարկումը վարողը թեմայի վերաբերյալ հակասական հայտարարություններ է անում (հայտարարությունները կարող են նույնիսկ արտառոց տեղեկատվություն պարունակել կամ հակասել ընդունված հատկանիշներին կամ սահմանումներին): Այդ հայտարարությունները փակցվում են սենյակի տարբեր մասերում: Օրինակ՝

1. ***Իրավունքը հասարակական համերաշխության, սոցիալական և քաղաքական փոխզիջումների իրականացման միջոց է:***
2. ***Իրավունքի դրսևորման ձևը օրենքն է, որը, սակայն, չի նույնացվում իրավունքի հետ:***
3. ***Իրավունքի հատկանիշներից ամենակարևորը դրա՝ պետական հարկադրանքով օժտված լինելն է:***

Հաջորդ քայլով յուրաքանչյուր սովորող ընտրում է իրեն հոգեհարազատ միտքը և կանգնում տվյալ հայտարարության մոտ: Ձևավորվում է երեք խումբ: Յուրաքանչյուր խումբ ընտրում է իր խոսնակին՝ իրենց հայտարարությանը **կողմ** փաստարկները ներկայացնելու համար: Խմբերը պատրաստվում են 10 րոպե: Այնուհետև խոսնակները նստում են սեղանի շուրջը և ստանում այսպես կոչված «քննարկման քարտեր» (3-6 քարտ՝ կախված

քննարկման համար սահմանված ժամանակահատվածից և մասնակիցների թվից): Սեղանի շուրջը նստած խոսնակները հերթով ներկայացնում են իրենց փաստարկները ընտրած հայտարարության վերաբերյալ՝ ամեն միտքը արտահայտելուց հետո սեղանին դնելով մեկ քարտ:

1-ին խմբի խոսնակ.

Միտք 1. Ինչպես գիտենք, իրավունքն արտահայտում է մարդկանց ընդհանուր և անհատական շահերը, այդ է պատճառը, որ իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների համապարտադիր նորմատիվ կարգավորչի միջոցով է հաստատվում հասարակական համերաշխություն:

2-րդ խմբի խոսնակ.

Միտք 1. Օրենքը բխում է իրավունքից, սակայն այն չի նույնացվում իրավունքի հետ, քանզի օրենքները պետության կողմից ընդունված համապարտադիր վարքագծի կանոններ են, որոնց գործադրումը ապահովվում է պետության հարկադրանքի ուժով: Հնարավոր է, որ առանձին դեպքերում դրանք չարտահայտեն իրավունքը՝ դրանով իսկ սահմանափակելով մարդու բնական իրավունքները:

3-րդ խմբի խոսնակ.

Միտք 1. Իրավունքի նորմերը պահպանվում և պաշտպանվում են պետության կողմից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև պետական հարկադրանքի ուժով, այսինքն՝ հարկադրանքը իրավունքի նորմերի պահպանման կարևոր միջոց է:

Յուրաքանչյուր խոսնակի հակիրճ ելույթից հետո գալիս է ելույթների երկրորդ շրջանը, որի ժամանակ խոսնակները ներկայացնում են իրենց երկրորդ միտքը իրենց ընտրած հայտարարության մասին, այդպես շարունակվում է այնքան, մինչև սպառվում են թե՛ խոսնակների, թե՛ թիմակիցների բոլոր մտքերը: Ելույթներն ավարտվելուց հետո յուրաքանչյուր խոսնակի առջև հավաքվում են որոշակի թվով քարտեր: Հաղթում է նրա թիմը, ում քարտերն ամենից շատն են:

Ուսուցիչն առաջարկում է կատարել ամփոփում՝ մեկ անգամ ևս թվարկելով իրավունքի և իրավունքի նորմերի հիմնական հատկանիշները:

ԴԱՍ 4.1. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Թեմայի խորհուրդը

Իրավունքն ուժ չունի, քանի դեռ այն ամրագրված չէ փաստաթղթերում:

Թեմայի ուսումնասիրման նպատակը

Պատկերացում կազմել իրավունքի համակարգի՝ իրավունքի ճյուղերի, ինստիտուտների և նորմերի, իրավունքի դասակարգման և հարաբերությունների կարգավորման մեթոդների մասին:

Դասի ընթացքը

Առաջարկում ենք ուսուցչին դասն սկսել հետևյալ նկարագրությամբ:

- Պատկերացնենք մի սենյակ, որտեղ չկան գրապահարաններ, սեղաններ ու դարակներ, սակայն այն լցված է հասարակական հարաբերությունները կարգավորող բազմապիսի կանոններով (նորմերով): Եթե անհրաժեշտ լինի օգտվել որևէ նորմից, ապա այդ բազմազանության և խառնաշփոթի մեջ հնարավոր չի լինի կողմնորոշվել: **Ի՞նչ պետք է անել այդ դեպքում:**

Իհարկե, աշակերտները կմտածեն համակարգել այդ բազմազանությունը և կարգավորել խառնաշփոթը՝ առաջարկելով սենյակ բերել գրապահարաններ, սեղաններ՝ իրենց դարակներով, որոշակի սկզբունքներով դասավորել նորմերն ու կանոնները համապատասխան դարակներում և պահարաններում: Ահա այսպես են վարվել նաև ոլորտի մասնագետները: Նրանք համակարգված մոտեցում են ցույց տվել՝ ստեղծելով իրավունքի եռաստիճան համակարգը:

Իրավունքի ճյուղեր (*իրավական նորմերի համակցություն, որը կարգավորում է հասարակական հարաբերությունների որոշակի բնագավառ*):

Իրավունքի ինստիտուտներ *(իրավական նորմերի համակցություն, որը կարգավորում է հասարակական հարաբերությունների առանձին խումբ՝ համասեռ հասարակական հարաբերություններ*):

Իրավունքի նորմեր (*իրավունքի համակարգի սկզբնական տարրը, որն իրենից ներկայացնում է համապարտադիր վարքագծի կանոն, որով կարգավորվում են հասարակական հարաբերությունները: Իրավական նորմը պաշտպանվում է պետական հարկադրանքի ուժով*):

Ստորև ներկայացված են իրավունքի այն ճյուղերը, որոնք կուսումնասիրվեն դասընթացում:

- ✓ Սահմանադրական իրավունք
- ✓ Քաղաքացիական իրավունք
- ✓ Ընտանեկան իրավունք
- ✓ Աշխատանքային իրավունք
- ✓ Ֆինանսական իրավունք
- ✓ Վարչական իրավունք
- ✓ Քրեական իրավունք

Ուսուցիչը կարճ դասախոսությամբ ներկայացնում է իրավունքի դասակարգման մի քանի եղանակ:

1. **Հանրային** (*հանրային շահով պայմանավորված հասարակական հարաբերությունները կարգավորող նորմեր*) և **մասնավոր** (*մասնավոր շահով պայմանավորված հասարակական հարաբերությունները կարգավորող նորմեր*) իրավունք:
2. **Նյութական** (*սահմանում է պետական մարմինների կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները, այդ ամենի իրականացման կառուցակարգերը և եղանակները*) և **վարույթային/ընթացակարգային** (*սահմանում է, թե ինչպես պետք է իրականացվի իրավունքների օգտագործումն ու պաշտպանությունը*) իրավունք:
3. **Ներպետական** (*կարգավորում է հասարակական հարաբերությունները երկրի ներսում*) և **միջազգային** (*կարգավորում է հարաբերությունները պետությունների ու միջազգային կազմակերպությունների միջև*) իրավունք:

Իրավունքի դասակարգումը ներկայացնելուց հետո ուսուցիչն ու սովորողները բերում են համապատասխան օրինակներ բոլոր դասակարգումների վերաբերյալ: Օրինակ՝ հանրային իրավունք-*սահմանադրական, վարչական, քրեական և այլ իրավունքներ*, մասնավոր-*քաղաքացիական, աշխատանքային, ընտանեկան և այլ իրավունքներ*, նյութական-*քրեական, քաղաքացիական, վարչական իրավունքներ*, վարույթային-*քրեական, քաղաքացիական, վարչական վարույթի իրավունքներ:*

Հաջորդ քայլով ուսուցիչը դասարանին առաջարկում է կարդալ հետևյալ հոդվածները ՀՀ քրեական և ՀՀ աշխատանքային օրենսգրքերից և նշել հոդվածների կարևոր բառերն ու արտահայտությունները: Կարդալուց հետո ուսուցիչը ծանոթանում է սովորողների ընդգծած բառերին և բառակապակցություններին:

ՀՀ քրեական օրենսգիրք

Հոդված 165. Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը

1. *Տասնութ տարին լրացած անձի կողմից տվյալ հանցագործության համար սույն օրենսգրքով քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասին խոստումներ տալու, խաբեության կամ այլ եղանակով հանցանքի կատարմանը ներգրավելը* ***պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով:***
2. *Նույն արարքը, որը կատարվել է ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է անչափահասի դաստիարակության պարտականություն,* ***պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից վեց տարի ժամկետով, կամ առանց դրա:***
3. *Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,* ***պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:***
4. *Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքները՝ զուգորդված անչափահասին կազմա-*

կերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կամ ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելուն ներգրավելով, ***պատժվում են ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:***

ՀՀ աշխատանքային օրենսգիրք

Հոդված 83. Աշխատանքային պայմանագիր հասկացությունը

Աշխատանքային պայմանագիրը ***համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև****, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք կամ մատուցել որոշակի ծառայություններ՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:*

Ուշադրությամբ կարդալուց հետո սովորողները վերլուծում են հոդվածները՝ նշելով, որ առաջին հոդվածը նկարագրում է հանցագործության տեսակը, որն արգելվում է օրենքով և պատժվում է ազատազրկմամբ, իսկ երկրորդ հոդվածը վերաբերում է աշխատանքային պայմանագրին, որը կնքվում է փոխադարձ համաձայնությամբ, առանց հարկադրանքի և երկու կողմերի ազատ կամարտահայտմամբ:

Որպես առաջադրանքի ամփոփում ուսուցիչն ասում է՝ քանի որ մարդկանց միջև հարաբերությունները միատեսակ չեն, դրանց կարգավորման գործիքները, այսինքն՝ մեթոդները նույնպես տարբեր են: Առաջին դեպքում արգելվում է կատարել տվյալ արարքը **(իմպերատիվ/հրամայական մեթոդ),** երկրորդ դեպքում օրենքը թույլ է տալիս մարդուն ընտրելու իրեն նպատակահարմար վարքագիծը **(ավտոնոմիայի/ինքնավարության մեթոդ):**

ԴԱՍ 4.5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Իրավունքի ճյուղերից առաջարկվում է աշխատանքային իրավունքին նվիրված դասը, քանի որ դա անմիջականորեն առնչվում է այդ տարիքի սովորողներին:

Դասի ընթացքը

Առաջադրանք 1.

Ուսուցիչը հանձնարարում է սովորողներին կարդալ բերված իրավիճակը և օգտվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի համապատասխան հոդվածներից՝ գտնել իրավիճակում տեղ գտած խախտումները: Ինչպես նաև հասկանալ՝ ինչ տեղեկատվություն է պակասում, որը հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու խախտումների մասին:

15-ամյա Կարենը միակողմանի ծնողազուրկ է և մորն օգնելու նպատակով աշխատանքի է տեղավորվել մոտակա ավտոլվացման կետում: Նա աշխատանքի է գնում անմիջապես դասերից հետո՝ ժամը 15:00-ին, և տուն է վերադառնում երեկոյան ժամը 22:00-ին: Գործատուն նրան առաջին երկու ամսվա՝ որպես փորձնական շրջանի համար չի վճարել, այնուհետև Կարենը աշխատավարձ է ստանում յուրաքանչյուր շաբաթվա վերջում: Երբեմն գործատուի խնդրանքով առավոտից չի գնում դպրոց, որպեսզի օգնի մյուս աշխատակիցներին:

Իրավիճակը վերլուծելու համար ստորև բերվում են համապատասխան հոդվածները ՀՀ աշխատանքային օրենսգրքից:

Օգնություն ուսուցչին

Հոդված 17.

1. Աշխատողը սույն օրենսգրքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի:

2. Աշխատող են համարվում նաև ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անչափահաս քաղաքացիները:

3. Մինչև տասնչորս տարեկան քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագիր կնքելը կամ նրանց աշխատանքի ներգրավելը արգելվում է:

Հոդված 140. Աշխատաժամանակի կրճատ տևողությունը

1. Աշխատաժամանակի կրճատ տևողություն սահմանվում է՝

1) տասնչորսից մինչև տասնվեց տարեկան աշխատողների համար՝ շաբաթական 24 ժամ, տասնվեցից մինչև տասնութ տարեկանների համար՝ շաբաթական 36 ժամ.

Հոդված 148. Աշխատանքը գիշերային ժամանակ

1. Գիշերային ժամանակ է համարվում ժամը 22-ից մինչև 6-ը:

2. Գիշերային է համարվում այն աշխատանքը, եթե կատարվող աշխատանքի աշխատանքային երեք ժամերը համընկնում են գիշերային ժամանակին: Գիշերային աշխատանքի տևողությունը կրճատվում է մեկ ժամով:

3. Գիշերային աշխատանքի ներգրավել չի թույլատրվում մինչև տասնութ տարեկան անձանց, ինչպես նաև այն աշխատողներին, որոնց գիշերային աշխատանքն արգելված է բժշկական եզրակացությամբ:

Հոդված 153. Լրացուցիչ և հատուկ ընդմիջումները

1. Հաշվի առնելով աշխատանքի պայմանները՝ աշխատանքային օրվա ընթացքում աշխատողներին կարող է տրամադրվել հանգստի համար լրացուցիչ ընդմիջում:

2. Մինչև տասնութ տարեկան աշխատողներին, որոնց աշխատաժամանակի տևողությունը գերազանցում է 4 ժամը, աշխատաժամանակի ընթացքում պետք է տրվի հանգստի համար լրացուցիչ ընդմիջում՝ նվազագույնը 30 րոպե:

Հոդված 155. Ամենշաբաթյա անընդմեջ հանգիստը

7. Մինչև տասնութ տարեկան աշխատողներին շաբաթվա ընթացքում տրվում է ոչ պակաս, քան երկու հանգստյան օր:

http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2131#1.2

Կազմակերպվում է քննարկում վերոհիշյալ իրավիճակի շուրջ, երեխաների տեսակետները լսելուց հետո ուսուցիչը կատարում է ամփոփում՝ ասելով, որ չնայած երեխաները (այս դեպքում 15-ամյա Կարենը) արդեն 14 տարեկանից աշխատելու իրավունք ունեն, աշխատանք ընտրելիս և

գործատուի հետ աշխատանքային պայմանագիր կնքելիս պետք է հաշվի առնել աշխատանքային օրենսգրքի համապատասխան հոդվածները, օրինակ՝ պարտադիր է ծնողի (հոգաբարձուի, որդեգրողի) գրավոր համաձայնությունը, աշխատանքային կրճատ ժամանակը (շաբաթական 24 ժամ) և այլն:

Քանի որ 14-18 տարեկան անչափահասը կարող է կնքել ժամանակավոր աշխատանքային պայմանագիր, նպատակահարմար է դասարան բերել աշխատանքային պայմանագրի մի օրինակ և սովորողներին ծանոթացնել պայմանագրի կառուցվածքին, բովանդակությանը և այլ մանրամասներին:

Պայմանագիրն ուսումնասիրելուց հետո ուսուցիչն առաջարկում է պատասխանել հետևյալ հարցերին.

1. ***Ինչո՞ւ է անհրաժեշտ ուսումնասիրել պայմանագիրը:***
2. ***Ձեր կարծիքով պայմանագրի ո՞ր կետերն են պարտադիր, ինչո՞ւ:***
3. ***Ի՞նչ կետ/կետեր կավելացնեիք պայմանագրին:***

Աշխատանքային օրինակելի պայմանագիր 1.

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Կողմերը պայմանագրի շրջանակներում ընդունում են տերմինների հետևյալ սահմանումները՝

Գործատու՝————————————

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով գործատուն կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը հանձնում է տնօրենին, իսկ տնօրենը պարտավորվում է բարեխղճորեն և խելամտորեն կատարել կազմակերպության գործադիր մարմնի գործառույթները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, այլ իրավական ակտերին, կազմակերպության կանոնադրությանը, պայմանագրին համապատասխան, ի շահ կազմակերպության:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կազմակերպության կանոնադրությամբ և պայմանագրով:

2.1.1. Տնօրենն իրավունք ունի գործատուից պահանջելու կազմակերպության ընթացիկ ղեկավարման ընթացքում իր խախտված իրավունքների վերականգնում:

2.1.2. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի գործում է կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

բ) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

գ) իր իրավասության սահմաններում տնօրինում է կազմակերպության գույքը՝ ներառյալ ֆինանսական միջոցները.

դ) կնքում է պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային).

ե) կատարում է աշխատանքի բաշխում աշխատողների միջև.

զ) սահմանում է աշխատողների աշխատանքի վարձատրության չափը.

է) բացում է բանկային հաշիվներ.

ը) հաստատում է կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները, նշանակում դրանց ղեկավարներին.

թ) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

2.1.3. Տնօրենն իրավունք չունի՝

ա) կատարելու այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.

բ) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ.

գ) լինելու երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից.

դ) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումարներ կամ ծառայություններ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

2.2. Տնօրենը պարտավոր է՝

ա) պայմանագրի կնքման պահից ——— ամսվա ընթացքում լիազորված մարմին ներկայացնել կազմակերպության ——— ամյա ծրագիրը.

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում լիազորված մարմին ներկայացնել կազմակերպության գործունեության մասին տարեկան ու եռամսյակային հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

գ) ինչպես կազմակերպությունում իր աշխատանքային գործունեության ընթացքում, այնպես էլ դրանից հետո չհրապարակել պետական կամ ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունները.

դ) պատշաճ մակարդակով իրականացնել կազմակերպության ընթացիկ ղեկավարումը՝ կազմակերպության կանոնադրությանը և պայմանագրին համապատասխան.

ե) գործատուի պահանջով նրան ներկայացնել հաշվետվություն իր կողմից կատարվող աշխատանքների և հետագա ծրագրերի մասին.

զ) անմիջապես կատարել գործատուի պահանջները աշխատանքում տեղ գտած թերությունների վերացման ուղղությամբ.

է) գործատուին անմիջապես տեղեկացնել իր կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության մասին, եթե գտնում է, որ ինքը չի կարող իրականացնել կազմակերպության արդյունավետ ղեկավարումը.

ը) տարեկան առնվազն —— անգամ անցկացնել գույքագրում՝ վարելով կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող և ամրացված գույքի առանձին հաշվառում.

թ) համապատասխան պաշտոնատար անձանց հետ կնքել նյութական պատասխանատվության պայմանագրեր:

3. Գործատուն իրավունք ունի տնօրենից պահանջելու ներկայացնել հաշվետվություն կազմակերպության ընթացիկ գործունեության մասին:

4. Գործատուն պարտավոր է՝

ա) օժանդակել տնօրենին՝ իրականացնելու պայմանագրից բխող իր իրավունքներն ու պարտականությունները.

բ) վարձատրել տնօրենին՝ պայմանագրով սահմանված չափով և կարգով.

գ) տնօրենի լիազորությունները դադարեցնելիս, օրենքով սահմանված կարգով, լուծել նաև նրա կողմից կազմակերպությանը կամ պետությանը պատճառված վնասի փոխհատուցման հարցը:

5. Տնօրենի վարձատրությունը և աշխատանքի ու հանգստի ժամանակը

5.1. Տնօրենն ստանում է աշխատավարձ՝ ամսական ———— դրամի չափով:

5.2. Վարձատրության այլ տեսակները (պարգևատրումներ, լրավճարներ) սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.3. Տնօրենի համար սահմանվում է 8-ժամյա աշխատանքային օր:

5.4. Տնօրենի համար սահմանվում է 5-օրյա աշխատանքային շաբաթ:

5.5. Տնօրենը կարող է ներգրավվել արտաժամյա աշխատանքներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Տնօրենին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվում է 24 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա վարձատրվող արձակուրդ: Արձակուրդի տրամադրման կոնկրետ ժամկետները համաձայնեցվում են գործատուի հետ:

Տնօրենի խնդրանքով նրան կարող է տրամադրվել լրացուցիչ արձակուրդ՝ առանց աշխատավարձի պահպանման:

6. Պայմանագրի լուծման հիմքերը

6.1. Պայմանագիրը լուծվում է, եթե՝

ա) պայմանագրով նախատեսված ժամկետն ավարտվել է.

բ) կազմակերպությունը լուծարվել է.

գ) տնօրենը ներկայացնում է դիմում պայմանագրի լուծման մասին.

դ) լրացել է տնօրենի 65 տարին.

ե) իր գրավոր համաձայնությամբ տնօրենն ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.

զ) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով տնօրենն ավելի քան 4 ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

է) տնօրենն ավելի քան 3 օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի.

ը) տնօրենը նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ.

թ) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա տնօրենը ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

ժա) տնօրենը դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

ժբ) տնօրենին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել, կամ նա զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

ժգ) տնօրենը նախորդ 3 տարվա ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար.

ժդ) տնօրենը կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

ժե) օրինական ուժի մեջ է մտել տնօրենի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

ժզ) կազմակերպությունը դատական կարգով ճանաչվել է սնանկ կամ ունի դատական կարգով որոշված և դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունվելուց հետո վեց ամսվա ընթացքում իր մեղքով չկատարված գույքային պարտավորություն.

ժէ) կազմակերպության կողմից վճարման ենթակա հարկերը կամ սոցիալական ապահովագրության հիմնադրամի վճարներն իր մեղքով սահմանված ժամկետից հետո հաշվետու ժամանակաշրջանում չի վճարել.

ժը) մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության.

ժթ) սույն պայմանագրով սահմանված ժամկետում ծրագիրը չի ներկայացվել կամ այն չի հաստատվել.

ի) պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարվել են ոչ պատշաճ կամ չեն կատարվել:

6.2. Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարում են նրա մահով:

7. Պայմանագիրն ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու կարգը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է —— տարի ժամկետով:

Պայմանագրով նախատեսված ժամկետը լրանալուց հետո կողմերի փոխադարձ համաձայնությամբ պայմանագիրը կարող է երկարաձգվել:

7.2. Պայմանագրում կատարված փոփոխությունները, լրացումները և հավելվածներն իրավական ուժ ունեն և պայմանագրի անբաժանելի մասն են, եթե դրանք կատարվել են գրավոր և ստորագրվել կողմերի կողմից:

8. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը պատասխանատվություն են կրում օրենքով, կանոնադրությամբ և պայմանագրով սահմանված իրենց պարտականությունների չկատարման, ոչ պատշաճ կատարման կամ վերազանցման համար պայմանագրով և օրենքով նախատեսված կարգով:

9. Վեճերի լուծումը

Կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

10. Այլ դրույթներ

Պայմանագիրը կնքվում է 3 հավասարազոր օրինակից:

Կողմերի հասցեները և ստորագրությունները՝

_____	_____
_____ _____ 202 թ.	_____ _____ 202 թ.

Վերը ներկայացված պայմանագիրն ուսումնասիրելուց և հարցերին պատասխանելուց հետո ուսուցիչն ամփոփում է դասը՝ առաջարկելով լրացնել հետևյալ աղյուսակը: Աղյուսակն անհրաժեշտ է լրացնել յուրաքանչյուր իրավունքի ճյուղ ուսումնասիրելուց հետո: Այս դասի վերջում սովորողները պետք լրացնեն ՀՀ աշխատանքային իրավունքին հատկացված տողը:

Գծագիր 1.

Իրավունքի ճյուղը	**Կարգավորման առարկան** (այն նյութական և ոչ նյութական բարիքները, որոնց կապակցությամբ առաջանում են իրավահարաբերություններ)	**Իրավունքի սուբյեկտները** (նշված իրավահարաբերությունների բնույթով պայմանավորված կողմերը)	**Կարգավորման հիմնական աղբյուրները** (նշված իրավահարաբերությունը կարգավորող փաստաթուղթ)
Սահմանադրական	Կյանքի գրեթե բոլոր կողմերը, պետության բոլոր խնդիրներն ու նպատակները և այլն	ՀՀ քաղաքացիները, օտարերկրացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, պետությունը, պետական մարմինները, պատգամավորները, քաղաքական և հասարակական կազմակերպությունները և այլն	ՀՀ Սահմանադրություն
Քաղաքացիական	Գույքային և անձնական ոչ գույքային հարաբերություններ	Պետություն, համայնքներ, մարդիկ (ֆիզիկական անձինք), կազմակեպություններ	ՀՀ Սահմանադրություն ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
Ընտանեկան	Ամուսնությանն առնչվող հարցեր, ընտանիքի անդամների միջև ծագած հարաբերություններ	Ամուսիններ, ընտանիքի անդամներ	ՀՀ Սահմանադրություն ՀՀ ընտանեկան օրենսգիրք ՀՀ քաղաքացիական օրենսգիրք

Աշխատանքային	Աշխատանքային իրավահարաբերություններ	Գործատու, աշխատող	ՀՀ Սահմանադրություն ՀՀ աշխատանքային օրենսգիրք ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
Ֆինանսական	Պետության գործառույթների իրականացմանն ուղղված ֆինանսական հարաբերություններ, օրինակ՝ բյուջետային, հարկային, մաքսային, բանկային հարաբերություններ, ինչպես նաև մասնավոր ֆինանսական իրավունքը	Պետություն, ֆինանսական կազմակերպություններ, քաղաքացիներ և այլն	ՀՀ Սահմանադրություն ՀՀ հարկային օրենսգիրք ՀՀ մաքսային օրենսգիրք «Բանկերի մասին» ՀՀ օրենք
Վարչական	Պետական-կառավարչական գործունեության հետ կապված հարաբերություններ	Գործադիր իշխանության մարմինը (մի կողմում), ՀՀ քաղաքացիները, օտարերկրացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, առևտրային և պետական տնտեսական կազմակերպությունները և այլն	ՀՀ Սահմանադրություն ՀՀ վարչական օրենսգիրք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք
Քրեական	Այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են հանցագործության փաստով	Պետություն և հանցանք կատարած անձ	ՀՀ Սահմանադրություն ՀՀ քրեական օրենսգիրք

ԳԼՈՒԽ 2.

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Թեմայի խորհուրդը

Արդարամտությունը բոլոր առաքինություններից բարձրագույնն է:

(Ցիցերոն)

Թեմայի ուսումնասիրման նպատակը

Հասկանալ և տարբերակել իրավունքին առնչվող խնդիրները, վերլուծել դրանց իրավական և ոչ իրավական լուծումների տարբերությունը, յուրացնել ու գնահատել օրենքների ու օրինականության նշանակությունը և այդ ամենի հիմքում կարևորել դատական իշխանության անհրաժեշտությունը:

ԴԱՍ 1. Դատական իշխանությունը իշխանությունների բաժանման համակարգում

Դասի ընթացքը

Դասն սկսում ենք հարցադրումով.

«Ինչ է արդարադատությունը»: Խորհուրդ է տրվում կիրառել «Մտագրոհի» մեթոդը:

Կարող են հնչել տարբեր պատասխաններ, օրինակ՝ արդար դատել, ճիշտ որոշում կայացնել, կողմնապահություն չանել և այլն:

Մեթոդի կիրառումից հետո խորհուրդ է տրվում ուսուցչին ամփոփել եզրույթը՝ ասելով, որ *«արդարադատություն» եզրույթն ամենապարզ մեկնաբանման դեպքում հասկացվում է որպես «արդար դատ», դատարանի՝ որպես պետական մարմնի գործունեություն, որն իրականացվում է իրավունքին ու արդարությանը համապատասխան: Դատական իշխանության՝ որպես պետական իշխանության անկախ և առանձին ճյուղի խնդիրը և գործառույթը սոցիալ-իրավական վեճերի լուծումն ու իրավաբանական փաս-*

տերի հաստատումն է արդարադատության իրականացման ճանապարհով: Արդարադատությունը՝ որպես դատարանների բացառիկ լիազորություն, համարվում է դատական իշխանության իրականացման ձևը, այսինքն՝ դատարաններն իրենց վերապահված դատական իշխանությունը կենսագործում են՝ արդարադատություն իրականացնելով:

«Հմտություններ և եզրահանգումներ» մեթոդի օգնությամբ կատարենք հետևյալ քայլերը:

Պարզենք, թե ինչ գիտենք և ենթադրում ենք, որ ճիշտ է:

<u>Առաջին քայլով</u> պարզենք, թե ինչի մասին գիտենք և ենթադրում ենք, որ դա ճիշտ է:

Գիտենք, որ ժամանակակից գրեթե բոլոր պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանությունը բաժանված է ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական:

Ավելին, Հայաստանում արդարադատություն կարող են իրականացնել **միայն** դատարանները: Իսկ դատարաններն արդարադատություն կարող են իրականացնել միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Դատական իշխանությունը, ի դեմս դատարանների, ունի հատուկ գործառույթ: Այն կոչված է իրականացնելու արդարադատություն:

Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է արգելվում որևէ պետական մարմնի, պաշտոնատար անձի կամ այլ անձանց միջամտությունը արդարադատության իրականացմանը:

Քանի որ արդարադատություն իրականացնելը դատարանների բացարձակ իրավասությունն է, մենք պետք է նաև հասկանանք, թե արդարադատությունն ինչ հիմքերի վրա պետք է իրականացվի այդ նույն դատարանների կողմից:

Արդարադատությունն իրականացվում է օրենքով սահմանված եղանակով և վարույթային ընթացակարգով:

Սա նշանակում է, որ դատարանները պարտավոր են առաջնորդվել միայն այն նորմերով, որոնք ամրագրված են օրենսդրության մեջ: Նրանք որևէ այլ կանոնով չեն կարող առաջնորդվել արդարադատություն իրականացնելիս:

Դրանք խիստ կանոնակարգված ընթացակարգեր են, որոնք խստորեն պետք է պահպանվեն: Իսկ եթե դրանք ինչ-որ կերպ խախտվեն, ապա ար-

դարադատություն չի իրականանա, իսկ կայացված որոշումները ենթակա կլինեն բեկանման:

Երկրորդ քայլով ներկայացնենք հիմնավորումներ:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Ցանկացած անձ՝ ՀՀ քաղաքացի, այլ պետության քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ, ինչպես նաև իրավաբանական անձինք արդար և անկողմնակալ դատարանում գործի քննության իրավունք ունեն:

Բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև՝ անկախ քաղաքացիությունից, սեռից, ազգությունից, գույքային և պաշտոնական դրությունից, ծննդավայրից, համոզմունքներից և այլն: Դատավարության կողմերն իրավահավասար են:

Առաջադրանք

Ուսումնասիրելով www.irtek.am կայքը՝ ներկայացրեք, թե հիմնավորումը որտեղ է ամրագրված:

Թվարկենք, թե ինչ դպարաններ են գործում Հայաստանի Հանրապետությունում:

Հայաստանի Հանրապետությունում գործում են՝

- Սահմանադրական դատարանը,
- Վճռաբեկ դատարանը,
- վերաքննիչ դատարանները,
- առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները:

Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել նաև մասնագիտացված դատարաններ: Դրանք են **վարչական** և **սնանկության** դատարանները: **Վարչական դատարանում** քննվում են բացառապես վարչական գործերը: Այսինքն՝ պետական մարմինների և տեղական մարմինների և մարդկանց միջև առաջացող դատական գործերը: **Սնանկության դատարանը** քննում է սնանկության գործերը:

Օրինակ՝ կազմակերպությունն ավելի շատ պարտքեր ունի, քան ակտիվներ և ի վիճակի չէ մարելու այդ պարտքերը: Այս ամենից ելնելով՝ ինքն իրեն հայտարարում է և դատական կարգով ճանաչվում սնանկ:

? Ո՞վ կարող է լինել դատավոր

Նախապես ուսումնասիրելով դասանյութը՝ երրորդ քայլով փորձենք ճիշտ լրացնել բաշխման նյութերում ներկայացված աղյուսակը, որտեղ անկանոն տրված են Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ, վերաքննիչ և առաջին ատյանի դատարանների դատավորներին ներկայացվող պահանջները:

Գործնական աշխատանք 1.

Սահմանադրական դատարանի դատավոր		**Վճռաբեկ դատարանի դատավոր**		**Վերաքննիչ դատարանի դատավոր**					**Առաջին ատյանի դատարանի դատավոր**
Ճիշտ պատասխան	Կարող է նշանակվել այն անձը, որը *Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի ընտրական իրավունք, տիրապետում է հայերենին, բարձրագույն կրթությամբ իրավաբան է:*		**Ճիշտ պատասխան**	Կարող է նշանակվել այն անձը, որն *առնվազն քառասուն տարեկան է, Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի ընտրական իրավունք, տիրապետում է հայերենին, բարձրագույն կրթությամբ իրավաբան է, բարձր մասնագիտական որակներ ունի, մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառություն ունի:*					Կարող է ընտրվել այն անձը, որն *առնվազն քառասուն տարեկան է, Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի ընտրական իրավունք, տիրապետում է հայերենին, բարձրագույն կրթությամբ իրավաբան է, բարձր մասնագիտական որակներ ունի, մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառություն ունի:*

Գործնական աշխատանք 2.

Չորրորդ քայլով նշե՛ք ստորև ներկայացված հարցի ճիշտ պատասխանները.

Օրենքն արգելում է դատավորին.

ա) ունենալ ընտանիք,

բ) զբաղվել քաղաքական գործունեությամբ,

գ) ունենալ սեփականություն,

դ) զբաղեցնել այլ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում,

ե) ունենալ քաղաքական դիրքորոշում,

զ) զբաղեցնել որևէ պաշտոն առևտրային կազմակերպություններում,

է) զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ,

ը) կատարել վճարովի այլ աշխատանք,

թ) զբաղվել գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքով:

Քննարկման հարց.

- Ի՞նչ եք կարծում, մեզ՝ քաղաքացիներիս, ինչո՞ւ է անհրաժեշտ իմանալ արդարադատության, դատական համակարգի մասին:

ԴԱՍ 2. Առաջին ատյանի դատարաններ

Դասի ընթացքը

Առաջարկում ենք դասն սկսել կարճ դասախոսությամբ՝ ներկայացնելով ստորև տրված հատվածը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի Սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարվելու դեպքում իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները:

Իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա պետական իշխանության մարմիններից հենց դատարանի վրա է դրված անհատի և պետության շահերի պաշտպանության առաքելությունը: Դատարանները կոչված են լուծելու անհատի և հասարակության մյուս անդամների, ինչպես նաև պետական մարմինների հետ առաջացած հակասությունները և ապահովելու անհատի իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

Հարց

Վերհիշելով նախորդ դասերը՝ կարո՞ղ եք ասել, թե որն է իշխանությունների տարանջատման սկզբունքը, և թվարկել ազգային դատարանները:

Ամփոփելով կարելի է ասել, որ դատարան դիմելու օրենքով սահմանված կարգը, ըստ էության, քաղաքացիների և իրավաբանական անձանց՝ դատարան դիմելու իրավունքի իրականացման երաշխիքն է:

Ընդհանուր իրավասության դատարան դիմելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք): Ընդհանուր իրավասության դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

Գործնական աշխատանք

Դասարանը բաժանվում է չորս խմբի (փոքրաթիվ դասարաններում կարելի է բաժանել նաև զույգերի), բոլոր խմբերին տրվում է ***բաշխման նյութ 1***–ը և առաջարկվում է ծանոթանալ դրան, այնուհետև խմբերին բաժանվում են բաշխման նյութերը (բաշխման նյութ 2, բաշխման նյութ 3, բաշխման նյութ 4, բաշխման նյութ 5):

Առաջադրանք

*Օգտվելով **բաշխման նյութ 1**-ում ներկայացված պահանջներից՝ փորձե՛ք ձեր խմբի ներսում լրացնել հայցադիմումները և նշել, թե **բաշխման նյութ 1- ում** թվարկված որ կետերի պահանջները կան ձեր հայցադիմումի մեջ:*

Բաշխման նյութ 1.

Հայցադիմումը ներկայացվում է գրավոր, որում պետք է նշվեն՝

- ✓ դատարանի անվանումը, որին ներկայացվում է հայցադիմումը.
- ✓ գործին մասնակցող անձանց անունը, ազգանունը, հայրանունը (այսուհետ՝ անուն), իրավաբանական անձի անվանումը, նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները, այդ թվում՝ հայցվոր քաղա-

քացու անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը դրա առկայության դեպքում, հայցվոր իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը.

- ✓ հայցագինը, եթե հայցը ենթակա է գնահատման.
- ✓ հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները.
- ✓ հայցապահանջները հաստատող ապացույցները.
- ✓ բռնագանձման ենթակա կամ վիճարկվող գումարի հաշվարկը.
- ✓ հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ հայց հարուցելիս հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները.
- ✓ հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

<u>Հայցադիմումում</u> կարող են նշվել նաև այլ տեղեկություններ, եթե դրանք անհրաժեշտ են վեճի ճիշտ լուծման համար, ինչպես նաև հայցվորի միջնորդությունները: Հայցադիմումը ստորագրում է հայցվորը կամ նրա կողմից հայցադիմումը ստորագրելու լիազորություն ունեցող լիազորված ներկայացուցիչը:

Հայցադիմումին կցվում են սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը կամ օրենքով նախատեսված դեպքերում պետական տուրքի վճարումից ազատելու, ժամկետը հետաձգելու, տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդությունը: Կցվում է նաև հայց հարուցելու լիազորությունները հավաստող լիազորագիրը, եթե հայցադիմումը ստորագրված է հայցվորի ներկայացուցչի կողմից, իսկ այն դեպքում, երբ հայցադիմումը պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջի մասին է, համապատասխան պայմանագրի նախագիծը: Հայցադիմումին կարող են կցվել նաև հայցապահանջները հաստատող ապացույցներ:

Լեզուն

Օրենսգիրքը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն անցկացվում է հայերեն: Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը:

Բաշխման նյութ 2

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ 1.

Ձև թիվ 1

_____
(դատարանի անվանումը)

Հայցվոր _____
(անուն, ազգանուն, հասցե)

Պատասխանող _____
(անվանումը, հասցեն)

Հայցադիմում 1.
(անորակ ապրանքի փոխանակման մասին)

_____ Պատասխանողից առուվաճառքի պայմանագրով գնել եմ
(ամիս, ամսաթիվ)

_____
(նշել ապրանքը, մակնիշը և այլ տվյալներ)

_____ վճարելով _____ դրամ:

Պատասխանող կողմը, ըստ պայմանագրի, պատասխանատու է ապրանքի որակի համար: Սակայն _____ այժմ չի համապատասխանում որակին: Ըստ
(նշել ապրանքը)

պայմանագրի՝ պատասխանողը _____

_____ չի կատարում

իր _____ պարտականությունները:
(նշել պատճառաբանությունները)

Նրա պատճառաբանություններն անհիմն են:

Վերոգրյալի հիման վրա խնդրում եմ՝

Ղեկավարվելով ՀՀ քաղ. օրենսգրքի 485-487 հոդվածներով՝ պատասխանողին պարտադրել անորակ _____ փոխարինել նորով:
(նշել ապրանքը)

Կից ներկայացնում եմ.

1. առուվաճառքի պայմանագիրը
2. վճարման անդորրագիրը
3. հայցադիմումի 2 օրինակ
4. պետտուրքի վճարման անդորրագիրը

(ստորագրություն)	*(անուն, ազգանուն)*	*(ամիս, ամսաթիվ)*

Պարզաբանում

Հոդված 485. Ապրանքի որակը

1. Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել առուվաճառքի պայմանագրին համապատասխանող որակի ապրանք:
2. Առուվաճառքի պայմանագրում ապրանքի որակի մասին պայմանների բացակայության դեպքում վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել ապրանք, որը պիտանի է այն նպատակներին, որոնց համար այդ տեսակի ապրանքը սովորաբար օգտագործվում է: Եթե պայմանագիրը կնքելիս գնորդը վաճառողին տեղեկացրել է ապրանքը ձեռք բերելու կոնկրետ նպատակների մասին, վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել այդ նպատակներին համապատասխան օգտագործելու համար պիտանի ապրանք:
3. Նմուշով և (կամ) նկարագրով ապրանք վաճառելիս վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել նմուշին և (կամ) նկարագրին համապատասխանող ապրանք:
4. Եթե օրենքով սահմանված կարգով նախատեսված են վաճառվող ապրանքի որակին առաջադրվող պարտադիր պահանջներ, ապա ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել այդ պարտադիր պահանջներին համապատասխանող ապրանք:

Վաճառողի և գնորդի համաձայնությամբ կարող է հանձնվել օրենքով նախատեսված կարգով սահմանված պարտադիր պահանջների համեմատությամբ որակի առավել բարձր պահանջների համապատասխանող ապրանք:

Հոդված 487. Երաշխիքային ժամկետի հաշվարկը

1. Երաշխիքային ժամկետն սկսվում է ապրանքը գնորդին հանձնելու պահից (հոդված 474), եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով:
2. Եթե գնորդը, վաճառողից կախված հանգամանքներով, զրկված է պայմանագրով սահմանված երաշխիքային ժամկետ ունեցող ապրանքն օգտագործելու հնարավորությունից, երաշխիքային ժամկետն սկսվում է վաճառողի կողմից համապատասխան հանգամանքները վերացվելուց հետո:

   Երաշխիքային ժամկետը երկարաձգվում է այն ժամանակով, որի ընթացքում ապրանքը չի կարող օգտագործվել դրանում հայտնաբերված թերությունների պատճառով, և վաճառողին, սույն օրենսգրքի 499-րդ հոդվածով սահմանված կարգով, ապրանքի թերությունների մասին ծանուցելու պայմանով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
3. Կոմպլեկտավորող տարրերի երաշխիքային ժամկետը համարվում է հիմնական ապրանքի երաշխիքային ժամկետին հավասար և սկսվում է հիմնական ապրանքի երաշխիքային ժամկետի հետ միաժամանակ, եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով:
4. Ապրանքի (կոմպլեկտավորող տարրի) փոխարեն, որում երաշխիքային ժամկետի ընթացքում հայտնաբերվել են թերություններ (հոդված 492), գնորդին հանձնված այլ ապրանքի (կոմպլեկտավորող տարրի) նկատմամբ սահմանվում է նույն տևողությամբ երաշխիքային ժամկետ, ինչը սահմանված էր փոխարինվածի համար, եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով:

Բաշխման նյութ 3.

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ 2.

Ձև թիվ 2

_____
(դպրարանի անվանումը)

Հայցվոր _____
(անուն, ազգանուն, հասցե)

Պատասխանող _____
(անվանումը, հասցեն)

Հայցադիմում 2.

(ապրուստի միջոց բռնագանձելու վերաբերյալ)

Ես _____ տարեկան եմ, այժմ չեմ աշխատում: _____ թվականից ստանում եմ _____ դրամ կենսաթոշակ: Սակայն գտնվում եմ նյութական ծանր վիճակում: Պատասխանողը որդիս է, բնակվում է ինձնից առանձին և ինքնակամ նյութապես ինձ չի օգնում:

Պատասխանողը աշխատում է _____ և նրա մեկ ամսվա
(նշել աշխատանքի վայրը)

Եկամուտը կազմում է _____ դրամ:

Վերոգրյալի հիման վրա խնդրում եմ՝

Ղեկավարվելով ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 87-րդ հոդվածով՝ պատասխանողից հօգուտ ինձ ամեն ամիս բռնագանձել _____ դրամ գումար:

Կից ներկայացնում եմ.

1. տեղեկանք պատասխանողի աշխատավայրից
2. տեղեկանք պատասխանողի աշխատավարձի (եկամտի) վերաբերյալ
3. տեղեկանք կենսաթոշակի չափի վերաբերյալ
4. հայցադիմումի 2 օրինակ

_____	_____	_____
(ստորագրություն)	*(անուն, ազգանուն)*	*(ամիս, ամսաթիվ)*

Պարզաբանում

Հոդված 87. (ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգիրք)

Օգնության կարիք ունեցող անաշխատունակ ծնողներին պահելու համար զավակներից յուրաքանչյուրի մասնակցության չափը որոշում է դատարանը՝ ամեն ամիս վճարվող կայուն դրամական գումարով՝ ելնելով ծնողների և զավակների նյութական և ընտանեկան դրությունից:

Գումարը որոշելիս դատարանը հաշվի է առնում տվյալ ծնողի բոլոր զավակներին, անկախ այն հանգամանքից՝ պահանջը ներկայացվել է բոլոր զավակներին, թե միայն մեկին կամ նրանցից մի քանիսին:

Հոդված 86. Զավակները պարտավոր են հոգ տանել ծնողների մասին և նրանց օգնություն ցույց տալ:

Անաշխատունակ, օգնության կարիք ունեցող ծնողներին պահելը նրանց չափահաս զավակների պարտականությունն է:

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ 3.

Ձև թիվ 5

_____
(դատարանի անվանումը)

Հայցվոր _____
(անուն, ազգանուն, հասցե)

Պատասխանող _____
(անուն, ազգանուն, հասցե)

Հայցադիմում 3.

(բնակարանի վարձակալության պայմանագիրը լուծելու մասին)

_____ պատասխանող _____ - ի հետ
(ամիս, ամսաթիվ) *(անուն, ազգանուն)*

կնքել ենք բնակարանի վարձակալության պայմանագիր, համաձայն որի՝ ինձ պատկանող _____ բնակարանը _____ վարձակալության
(բնակարանի հասցե) *(ժամկետը)*

եմ տրամադրել պատասխանողին, որի դիմաց պատասխանողը պարտավորվել է ամեն ամսվա համար ինձ վճարել _____ դրամ: Մեր պայմանագիրը վավերացվել է նոտարի կողմից: Սակայն պատասխանողը չի կատարում իր պարտականությունները: Մի քանի անգամ պատասխանողից պահանջել եմ ազատել

բնակարանը, սակայն նա պատճառաբանում է _____

(նշել պատճառաբանությունները)

և չի ազատում այն:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ՝

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 622-րդ հոդվածով՝ լուծել

_____

(հասցեն)

բնակարանի վարձակալության պայմանագիրը:

Կից ներկայացնում եմ.

1. բնակարանի սեփականության վկայականի պատճենը
2. վարձակալության պայմանագրի պատճենը
3. հայցադիմումի 2 օրինակ
4. պետտուրքի վճարման անդորրագիրը

(ստորագրություն)	*(անուն, ազգանուն)*	*(ամիս, ամսաթիվ)*

<u>Պարզաբանում</u>

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 610-րդ հոդված.

1. Վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր.
2. Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 622-րդ հոդված.

Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե վարձակալը՝

1. Գույքն օգտագործել է պայմանագրի պայմանների կամ գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով.
2. էականորեն վատթարացրել է գույքի վիճակը.
3. պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը.

4. վարձակալության պայմանագրով սահմանված ժամկետներում, իսկ պայմանագրում դրանց բացակայության դեպքում ողջամիտ ժամկետում չի կատարել գույքի հիմնական վերանորոգում այն դեպքերում, երբ օրենքին, այլ իրավական ակտերին կամ պայմանագրին համապատասխան՝ հիմնական վերանորոգում կատարելը վարձակալի պարտականությունն է:

Բաշխման նյութ 5.

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ 4.

Ձև թիվ 8

_____
(դպրարանի անվանումը)

Հայցվոր _____
(անուն, ազգանուն, հասցե)

Պատասխանող _____
(անուն, ազգանուն, հասցե, հեռախոս)

Հայցադիմում 4.

(ամուսնալուծության թույլտվության մասին)

Պատասխանողի հետ օրինական կարգով ամուսնացել եմ _____:
(ամիս, ամսաթիվ)

Մեր ամուսնությունը գրանցվել է _____:
(ամիս ամսաթիվ)

Համատեղ կյանքի ընթացքում ունեցել ենք երեխա _____
_____:
(անուն, ազգանուն, ծննդյան թվական)

Պատասխանողի հետ մեր համատեղ կյանքը չդասավորվեց հետևյալ պատճառներով

_____ :

(նշել պատճառները)

Նման իրադրության պայմաններում մեր հետագա համատեղ կյանքն անհնարին է: Գույքի բաժանման և երեխայի(ների) խնամքի հարցում պատասխանողի հետ համաձայնության ենք եկել:

Պատասխանողը մեր ամուսնալուծությանը դեմ չէ:

Վերոգրյալի հիման վրա խնդրում եմ՝

Ընդունել և քննության առնել իմ հայցադիմումը և ղեկավարվելով ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝ թույլատրել մեզ ամուսնալուծվել առանց հաշտության համար ժամկետ սահմանելու:

Կից ներկայացնում եմ.

1. ամուսնության վկայական
2. երեխայի ծննդյան վկայականի պատճեն
3. տեղեկանք բնակավայրից
4. պետտուրքի վճարման անդորրագիր

_____ _____

(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

Պարզաբանում

Հոդված 33. Ամուսնալուծությունը դատական կարգով

Ամուսնալուծության վերաբերյալ գործերի քննությունը կատարվում է դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հայցային վարույթի կարգով:

Դատարանը միջոցներ է ձեռնարկում ամուսիններին հաշտեցնելու համար: Դատարանը իրավասու է, հետաձգելով գործի քննությունը, ժամկետ նշանակել ամուսինների հաշտվելու համար: Այդ ժամկետը չպետք է անցնի վեց ամսից:

Ամուսնությունը լուծվում է, եթե դատարանը կպարզի, որ ամուսիններիի հետագա համատեղ կյանքը և ընտանիքի պահպանումը անհնարին են դարձել:

Ամուսնալուծության մասին վճիռ կայացնելիս դատարանն անհրաժեշտ դեպքերում միջոցներ է ձեռնարկում պաշտպանելու անչափահաս երեխաների և անաշխատունակ ամուսնու շահերը:

Առաջադրանքի ավարտից հետո խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները և փորձում հիմնավորել, թե պարզաբանման բաժնում օրենքի հոդվածը իրավունքի ո՞ր ճյուղին է ուղղված:

? ***Ամփոփիչ հարց.***

Ի՞նչ եք կարծում, ինչու է անհրաժեշտ քաղաքացուն իմանալ հայցադիմումների լրացման կարգը:

ԳԼՈՒԽ 3.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Թեմայի խորհուրդը

Մարդու իրավունքները տրված են բոլոր մարդկանց՝ անկախ ազգային պատկանելությունից, բնակության վայրից, լեզվից, կրոնից, ազգային ծագումից և այլ կարգավիճակից: Դրանք գործում են միշտ և ամենուր, քանզի համընդհանուր են և հավասարազոր բոլոր մարդկանց համար:

Թեմայի ուսումնասիրման նպատակը

Հասկանալ, թե որն է պետության դերը մարդու իրավունքների պաշտպանության և երաշխավորման գործում, ինչ հարաբերակցության մեջ է Սահմանադրությունը մարդու իրավունքների հետ: Կարողանալ տարանջատել պետության պարտականությունները պետության երաշխիքներից: Կարևորել մարդու իրավունքները հարգելու և պաշտպանելու պարտականությունը:

ԴԱՍ 1. Մարդու իրավունքներ և պետություն

Դասի ընթացքը

Առաջարկում ենք ուսուցչին դասն սկսել հետևյալ ներածականով:

Նախորդ տարիների ընթացքում հասարակագիտության դասերից մենք արդեն գիտենք, թե ինչ են մարդու իրավունքները, որոնք են բնական իրավունքները, ինչու են դրանք անքակտելի, որոնք են անձնական, քաղաքական, տնտեսական, մշակութային իրավունքները, և ինչպես դրանք տարանջատել հասարակությունում մարդկանց վարքագիծը կարգավորող բարոյական, կրոնական և այլ կանոններից:

Այժմ մենք պետք է հասկանանք, թե որն է պետության դերը մարդու իրավունքների պաշտպանության և երաշխավորման գործում:

Այս դասընթացի արդյունքում մեզ համար արդեն հստակ կլինեն մարդու իրավունքների և ազատությունների զարգացման օրինաչափությունները: Տեսանելի կլինեն պետական իշխանության հետ հարաբերությունում մարդու իրավունքների դրսևորման անցյալի, ներկայի և ապագայի յուրահատկությունները: Ճանաչելի կլինեն այն բոլոր կառուցակարգերը, որոնք հնարավորություն են տալիս արդյունավետորեն պաշտպանելու մարդու իրավունքները:

Արդյունքում մենք կկարողանանք ճիշտ ընկալել ժամանակի ընթացքում պետության կողմից մարդու իրավունքների ասպիճանական ճանաչման, սահմանադրություններում ամրագրման և պաշտպանության տրամաբանությունը:

Իսկ այս դասի համար մենք ունենք մի քանի հարցեր, որոնց պատասխանները կփորձենք գտնել առաջադրանքները կատարելուց հետո: Քննարկման ընթացքում կկարողանանք ցույց տալ, որ մարդու իրավունքներն անհրաժեշտ նախադրյալներ են յուրաքանչյուրին արժանապատիվ կյանք վարելու համար, կկարողանանք կապ ստեղծել ցանկությունների, հիմնական կարիքների և մարդու իրավունքների միջև: Մարդկանց հիմնական կարիքները բավարարելով՝ արժանապատիվ կյանք վարելու հնարավորություն է տրվում: Ցանկություններն ու կարիքները կարող են դառնալ այն հիմքերը, որոնց վրա ձևավորվել են մարդու իրավունքները:

Այս դասի համար առաջարկում ենք կիրառել **«Հարցերի կամ հարցադրումների մեթոդը»**:

Հարցեր.

1. ***Ո՞րն է պետության դերը մարդու իրավունքների պաշտպանության և երաշխավորման գործում:***
2. ***Ինչո՞ւ հենց պետությունն է ստանձնում մարդու իրավունքների պաշտպանության և դրանց բնականոն կենսագործման երաշխավորի դերը:***

Առաջադրանք 1.

Խմբերով կամ զույգերով լրացնել աղյուսակը հետևյալ տրամաբանությամբ:

Ցանկություններ *(որևէ բան անելու, որևէ բանի հասնելու, ձեռք բերելու ներքին մղում) աղյուսակում լրացնել չորս ցանկություն,* ***կարիքներ*** *(որևէ բանի ձգտում, պետք, պահանջմունք, հարկավորություն, անհրաժեշտություն) աղյուսակում այդ ցանկության համապատասխան կարիքը և* ***իրավունքներ*** *(հասարակական հարաբերությունների կարգավորիչներից մեկը, իրավական նորմերի համակարգ) աղյուսակում այդ ցանկության և կարիքի համար սահմանված իրավունքը:*

Ցանկություններ	**Կարիքներ**	**Իրավունքներ**
Սիրված լինել	Ամուսնություն	Ընտանիք կազմելու իրավունք
Գնալ ճամփորդության	Հանգիստ	Հանգստի իրավունք

Լրացված աղյուսակները ներկայացնելուց առաջ սովորողներին առաջարկում ենք ուշադրություն դարձնել այն բանին, թե ինչի կարիք ունեք դուք, և ինչի կարիք ունեն մյուսները արժանապատիվ կյանք վարելու համար:

Աշխատանքները ներկայացնելուց հետո փորձում ենք պատասխանել վերը թվարկված հարցերից երկուսին.

- **Ո՞րն է պետության դերը մարդու իրավունքների պաշտպանության և երաշխավորման գործում:**
- **Ինչո՞ւ հենց պետությունն է ստանձնում մարդու իրավունքների պաշտպանության և դրանց բնականոն կենսագործման երաշխավորի դերը:**

Լսելով սովորողների կողմից տրված պատասխանները՝ առաջարկում ենք ամփոփել՝ ներկայացնելով հետևյալը:

Պետության առաջնային և կարևորագույն գործառույթներից է ապահովել մարդկանց բնականոն համակեցությունն այնպես, որ նրանք կարողանան օգտագործել հասարակության տված հնարավորությունները, ինքնակատարելագործվել, զարգացնել սեփական հնարավորությունները և այդ ամենով հանդերձ՝ կյանքի կոչել սեփական երջանկությունը:

Եվ, իրոք, երբ մարդիկ ստեղծում էին պետությունները, իրենց առաջնային նպատակն էլ այն էր, որ ձևավորեն այնպիսի կառույց, որը կկարողանար աջակցել իրենց անձնական և հավաքական (ազգային և ոչ միայն) ամենօրյա և հեռանկարային ծրագրերը կյանքի կոչելուն:

Սակայն միևնույն ժամանակ նրանք պետություն ձևավորում էին՝ նպատակ ունենալով այդ նոր ձևավորված կառույցի ներքո ավելի անվտանգ և պաշտպանված զգալ, և պետությունը կարողանար երաշխավորել իրենց բնական իրավունքների անխափան կենսագործումը:

Այլ կերպ ասած՝ մարդիկ պետության մեջ են տեսել իրենց իրավունքների պաշտպանի և կենսագործողի դերը և դրանից ելնելով՝ պետությանն են լիազորել և միաժամանակ պարտավորեցրել ամրագրել ու պաշտպանել իրենց իրավունքները, այդ թվում՝ հենց այդ նույն պետությունից:

Մարդու իրավունքների պաշտպանության ***հասցեատերը պետությունն է:***

ԴԱՍ 2. Մարդու իրավունքներ և սահմանադրություն (երկու դասաժամ)

Դասի ընթացքը

Առաջարկում ենք ուսուցչին դասն սկսել հետևյալ ներածականով:

Փորձենք միասին հստակեցնել Սահմանադրության դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում:

2015 թվականի դեկտեմբերի 6-ին Հայաստանում տեղի ունեցած սահմանադրական փոփոխություններից հետո մենք արդեն Սահմանադրության մակարդակով տարանջատում ենք մարդու **հիմնական** իրավունքները (ՀՀ Սահմանադրություն, գլուխ 2) մարդու **այլ** իրավունքներից (ՀՀ Սահմանադրություն, գլուխ 3): Հետևաբար տարբերում ենք նաև այդ իրավունքների նկատմամբ հանրային իշխանության պարտականությունները **(Հավելված 1. Ուսուցչի համար):**

Հիմնական իրավունքներ ասելիս նախ պետք է հասկանալ, որ ոչ թե պետությունն է հիմնական իրավունքների միջոցով մարդուն տալիս կամ շնորհում որոշակի ազատություններ և իրավունքներ, այլ այն, որ այդ հիմնական իրավունքները, որոնք արտահայտում են մարդու բնական ազատությունը և էությունը, նախորդում են պետությանը, սահմանադրությանը, ոչ թե ստեղծվում վերջիններիս կողմից:

Մարդն ունի գործելու, իր կյանքը կազմակերպելու հնարավորություններ, որոնք հատուկ են միայն իրեն՝ որպես մարդ արարածի: Այս առումով դրանք անկախ են պետությունից, սահմաններ չեն ճանաչում, համամարդկային են: Սահմանադրությամբ ամրագրված մարդու հիմնական իրավունքների դրույթները նրան ընձեռում են հանրային իշխանությունից որոշակի վարքագիծ պահանջելու իրավունք:

Մարդը նախ և առաջ ունենում է իրավունք պետությունից պահանջելու ձեռնպահ մնալ այդ իրավունքներին միջամտելուց, ինչպես նաև հավելյալ պահանջ՝ իր իրավունքը կենսագործելու համար:

Առաջին քայլով սովորողներին տրվում է բաշխման նյութ 1-ը և հանձնարարվում է, ուսումնասիրելով բաշխման նյութ 1-ում ներկայացված Սահմանադրության հոդվածները, պատասխանել ստորև ներկայացված հարցերին:

Քննարկման հարցեր

1. ***Արդյոք հնարավո՞ր է ապահովել մարդկանց համակեցությունն առանց Սահմանադրության մեջ ամրագրված հոդվածների: Հիմնավորել պատասխանները:***
2. ***Ինչպե՞ս կարող է պետությունը պաշտպանել մարդու իրավունքներն ու ազատությունները:***

Բաշխման նյութ 1.

ՀՀ Սահմանադրություն, գլուխ 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները ***(http://www.president.am/hy/constitution-2015/)***

Հոդված 24. Կյանքի իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:
2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:
3. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

Հոդված 25. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք:
2. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:
3. Բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը:
4. Ոչ ոք չի կարող առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ փորձե-

րի: Մարդը նախապես տեղեկացվում է նման փորձերի հնարավոր հետևանքների մասին:

Հոդված 27. Անձնական ազատությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

   1) անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար.

   2) դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար.

   3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.

   4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

   5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով.

   6) հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով.

   7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

2. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին:

3. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը: Այս իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով

սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:

4. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով ազատությունից զրկված անձի վերաբերյալ ազատությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում:

5. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը իրավաչափ չէ:

6. Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները:

Ամփոփելով սովորողների պատասխանները՝ առաջարկում ենք ներկայացնել հետևյալը:

Հանրային իշխանությունը՝ ի դեմս պետության, պարտավոր է.

ԱՌԱՋԻՆ. *հարգել և պաշտպանել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները:*

ԵՐԿՐՈՐԴ. *կանխել Սահմանադրությամբ երաշխավորված մարդու իրավունքների ու ազատությունների խախտումներն այլ անձանց կողմից, իսկ այդպիսի խախտումներ լինելու դեպքում այդ խախտումները կատարած անձանց ենթարկել պատասխանատվության՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:*

Կարող ենք ասել, որ մարդու իրավունքները, դասական իմաստով, կարող է խախտել միայն պետությունը, քանի որ Սահմանադրությամբ նա է համարվում մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորը և հասցեատերը:

ԵՐԿՐՈՐԴ քայլով. *դասի նպատակը ամրապնդելու համար, առաջարկում ենք իրականացնել հետևյալ գործնական առաջադրանքը: Սովորողներին բաժանել բաշխման նյութ 2-ը և կիրառել* ***«Անկյուններ» ուսուցման***

բանավիճային մեթոդական հնարը» (*մեթոդի նկարագրությունը տես ձեռնարկի համապատասխան բաժնում*):

Բաշխման նյութ 2.

Պարզվում է՝ Երևանում կան դպրոցներ, որտեղ տեղադրված տեսախցիկները տասնյակներով են հաշվվում: Ընդ որում, երբեմն դրանք նախատեսված են եղել նաև դասասենյակներն ու ուսուցչանոցները հսկելու համար:

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի անձնական տվյալների պաշտպանության գործակալությունից տրամադրվել է այն դպրոցների ցանկը, որոնց հետ կապված վարույթ է հարուցվել և իրականացվել են համապատասխան ուսումնասիրություններ: Այդպիսի 20 հաստատություն կա, և բոլորն էլ գործում են մայրաքաղաքում:

Նշված գործակալության վարչական վարույթների իրականացման բաժինը տեղեկացրել է, որ դպրոցներից մի քանիսի դեպքում գործը կարճվել է, մյուսների դեպքում արձանագրվել է համաչափության սկզբունքի խախտում: Օրինակ՝ հաստատությունում չեն կարողացել հիմնավորել, որ եթե դասասենյակներում տեղադրված տեսանկարահանող սարքի գոյության նպատակն է գույքն ու նյութերը պաշտպանելը, ապա ինչո՞ւ են սարքի տեսադաշտում ամբողջ դասարանն ու երեխաները:

Պնդում. տեսախցիկների տեղադրումը ոտնահարում է մարդու իրավունքները:

Առաջադրանք

*Ընթերցելով **բաշխման նյութ 2**-ում ներկայացված իրավիճակը՝ փորձել շարադրել կարծիքը՝ ըստ պնդման: Ըստ դիրքորոշման՝ հրահանգից հետո կանգնել դասասենյակի արդեն որոշված անկյուններում (**կողմ եմ, դեմ եմ, չեմ կողմնորոշվում**):*

Բոլոր մասնակիցների փաստարկված կարծիքներն ու համապատասխան հիմնավորումները լսելուց հետո սովորողներին առաջարկվում է ճշտել իրենց նախնական վերաբերմունքը, դիրքորոշումը և տեղափոխվել համապատասխան անկյուն:

Վերջում սովորողներին հանձնարարվում է անհատապես ձևակերպել և շարադրել իրենց վերջնական կարծիքը:

? ***Ամփոփիչ հարց.***

- Ինչի՞ համար է մեզ՝ քաղաքացիներիս, անհրաժեշտ իմանալ Սահմանադրության դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում:

Հավելված 1. Ուսուցչի համար

1. Մարդու հիմնական իրավունքներ
2. http://www.president.am/hy/constitution-2015/

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 23. Մարդու արժանապատվությունը

Մարդու արժանապատվությունն անխախտելի է:

Հոդված 24. Կյանքի իրավունքը

4. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:
5. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:
6. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

Հոդված 25. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը

5. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք:
6. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:
7. Բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները

շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը:

8. Ոչ ոք չի կարող առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ փորձերի: Մարդը նախապես տեղեկացվում է նման փորձերի հնարավոր հետևանքների մասին:

Հոդված 26. Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:
2. Մարմնական պատիժներն արգելվում են:
3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

Հոդված 27. Անձնական ազատությունը

2. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

   1) անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար.
   2) դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար.
   3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.
   4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.
   5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով.
   6) հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով.
   7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կան-

խելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

7. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին:
8. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը: Այս իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:
9. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով ազատությունից զրկված անձի վերաբերյալ ազատությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում:
10. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:
11. Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները:

Հոդված 28. Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը

Բոլորը հավասար են օրենքի առջև:

Հոդված 29. Խտրականության արգելքը

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Հոդված 30. Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը

Կանայք և տղամարդիկ իրավահավասար են:

Հոդված 31. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:
2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 32. Բնակարանի անձեռնմխելիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք:
2. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:
3. Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքով կարող են սահմանվել դատարանի որոշմամբ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման այլ դեպքեր:

Հոդված 33. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:
2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով:

Հոդված 34. Անձնական տվյալների պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք:
2. Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:
3. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքված տվյալներին և պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում:
4. Անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:
5. Անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող մանրամասները սահմանվում են օրենքով:

Հոդված 35. Ամուսնանալու ազատությունը

1. Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն: Ամուսնության տարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով:
2. Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս կինը և տղամարդն ունեն հավասար իրավունքներ:
3. Ամուսնանալու ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ առողջության և բարոյականության պաշտպանության նպատակով:

Հոդված 36. Ծնողների իրավունքները և պարտականությունները

1. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին:
2. Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն օրենքով, դատարանի որոշմամբ՝ երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով:
3. Չափահաս աշխատունակ անձինք պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների մասին: Մանրամասները սահմանվում են օրենքով:

Հոդված 37. Երեխայի իրավունքները

1. Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում:
2. Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:
3. Յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին: Մանրամասները սահմանվում են օրենքով:
4. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության ներքո են:

Հոդված 38. Կրթության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:
2. Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք:
3. Բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը:

Հոդված 39. Մարդու ազատ գործելու իրավունքը

Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Հոդված 40. Ազատ տեղաշարժվելու իրավունքը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:
2. Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք:
3. Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունք:
4. Ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ:

Հոդված 41. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը:
2. Մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:
3. Յուրաքանչյուր քաղաքացի, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, ունի օրենքով սահմանված կարգով այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք:

4. Կրոնական կազմակերպություններն իրավահավասար են և օժտված են ինքնավարությամբ: Կրոնական կազմակերպությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

Հոդված 42. Կարծիքի արտահայտման ազատությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:
2. Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:
3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 43. Ստեղծագործության ազատությունը

Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն:

Հոդված 44. Հավաքների ազատությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք:
2. Բացօթյա տարածքներում կազմակերպվող հավաքներն օրենքով սահմանված դեպքերում անցկացվում են ողջամիտ ժամկետում ներկայացված իրազեկման հիման վրա: Ինքնաբուխ հավաքների իրականացման համար իրազեկում չի պահանջվում:
3. Օրենքով կարող են սահմանվել դատավորների, դատախազների, քննիչների, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների

հավաքների ազատության իրավունքի իրականացման սահմանափակումներ:

4. Հավաքների ազատության իրականացման և պաշտպանության պայմաններն ու կարգը սահմանվում են օրենքով:
5. Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 45. Միավորումների ազատությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ մասնավոր միավորման:
2. Միավորումների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:
3. Միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:
4. Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ միայն դատարանի որոշմամբ:

Հոդված 46. Կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու իրավունքը

1. Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության:
2. Դատավորները, դատախազները և քննիչները չեն կարող լինել կուսակցության անդամ: Օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ:

3. Կուսակցությունները տարեկան հաշվետվություններ են հրապարակում իրենց ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև իրենց գույքի մասին:
4. Օրենքով սահմանված դեպքերում կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել Սահմանադրական դատարանի որոշմամբ: Այն կուսակցությունները, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով, հակասահմանադրական են և ենթակա են արգելման Սահմանադրական դատարանի որոշմամբ:

Հոդված 47. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունքը

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:
2. Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:
3. Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու պահից ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:
4. Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ձեռք են բերում օրենքով սահմանված պարզեցված կարգով:
5. Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիությունից: Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիությունը փոխելու իրավունքից:
6. Սույն հոդվածով սահմանված իրավունքների իրականացման կարգը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման այլ հիմքերը, ինչպես նաև դադարեցման հիմքերը սահմանվում են օրենքով:
7. Սույն հոդվածի 2-4-րդ մասերով, ինչպես նաև 5-րդ մասի 2-րդ նախադասությամբ սահմանված իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, ինչպես նաև այլ հանրային շահերի պաշտպանության նպատակով:
8. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, միջազգային իրավունքի հիման վրա, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո են:

Հոդված 48. Ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը

1. Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք:
2. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:
3. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:
4. Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

Հոդված 49. Հանրային ծառայության անցնելու իրավունքը

Յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

Հոդված 50. Պատշաճ վարչարարության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:
2. Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների:
3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտո-

նատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Հոդված 51. Տեղեկություններ ստանալու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք:
2. Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:
3. Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով:

Հոդված 52. Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունքը
Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների խախտման դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

Հոդված 53. Հանրագիր ներկայացնելու իրավունքը
Յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

Հոդված 54. Քաղաքական ապաստանի իրավունքը
Քաղաքական հետապնդման ենթարկվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան հայցելու իրավունք: Քաղաքական ապաստանի տրամադրման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

Հոդված 55. Արտաքսման կամ հանձնման արգելքը

1. Ոչ ոք չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում են-

թարկվել մահապատժի, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

Հոդված 56. Ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք:
2. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:
3. Սույն հոդվածով սահմանված իրավունքների իրականացումը կարգավորվում է օրենքով:

Հոդված 57. Աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները

1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:
2. Յուրաքանչյուր աշխատող ունի աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք: Աշխատանքից ազատման հիմքերը սահմանվում են օրենքով:
3. Մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին ունի հղիության և ծննդաբերության դեպքում վճարովի արձակուրդի իրավունք: Յուրաքանչյուր աշխատող ծնող երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման դեպքում ունի արձակուրդի իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:
4. Մինչև տասնվեց տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Նրանց ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:
5. Պարտադիր կամ հարկադիր աշխատանքն արգելվում է: Պարտադիր կամ հարկադիր աշխատանք չի համարվում՝

   1) այն աշխատանքը, որը, օրենքին համապատասխան, կատարում է դատապարտված անձը.
   2) զինվորական կամ այլընտրանքային ծառայությունը.
   3) յուրաքանչյուր աշխատանք, որը պահանջվում է բնակչության կյան-

քին կամ բարօրությանն սպառնացող արտակարգ իրավիճակների ժամանակ:

Հոդված 58. Գործադուլի իրավունքը

1. Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք: Գործադուլի իրականացման կարգը սահմանվում է օրենքով:
2. Գործադուլի իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 59. Տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը

1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:
2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:
3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

Հոդված 60. Սեփականության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:
2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:
3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:
4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:
5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:
6. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քա-

ղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:
8. Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:
2. Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:

Հոդված 62. Վնասի հատուցման իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:
2. Եթե հանցանք կատարելու համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձն արդարացվել է այն հիմքով, որ նոր կամ նոր երևան եկած որևէ հանգամանք ապացուցում է նրա դատապարտման ոչ իրավաչափ լինելը, ապա այդ անձն ունի օրենքին համապատասխան հատուցում ստանալու իրավունք, եթե չի ապացուցվում, որ այդ հանգամանքի ժամանակին բացահայտումը լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից:

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Դատական վարույթը կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:
3. Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:

Հոդված 64. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:
2. Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Հոդված 65. Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը

Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:

Հոդված 66. Անմեղության կանխավարկածը

Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Հոդված 67. Մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը

Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք.

2) անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք.
3) իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք.
4) իր դեմ ցուցմունք տվող անձանց հարցման ենթարկելու իրավունք, կամ որ այդ անձինք ենթարկվեն հարցման, ինչպես նաև, որ իր օգտին ցուցմունք տվող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված անձինք.
5) թարգմանչի անվճար ծառայությունից օգտվելու իրավունք, եթե նա չի տիրապետում հայերենին:

Հոդված 68. Կրկին դատվելու արգելքը

1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:
2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա:

Հոդված 69. Դատապարտվածի բողոքարկման իրավունքը

Հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական ատյանի կողմից վերանայման իրավունք:

Հոդված 70. Ներման խնդրանքի իրավունքը

Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման, ներառյալ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

Հոդված 71. Մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը

1. Հանցանք կատարած անձի պատժի հիմքը նրա մեղքն է:
2. Օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին:

Հոդված 72. Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը

Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործութ-

յան համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:

Հոդված 73. Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը

1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:
2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Հոդված 74. Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունն իրավաբանական անձանց նկատմամբ

Հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

Հոդված 75. Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը

Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Հոդված 76. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ

Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Հոդված 77. Հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը

Արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

Հոդված 78. Համաչափության սկզբունքը

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Հոդված 79. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Հոդված 80. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունը

Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

Հոդված 81. Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան

1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:
2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հոդված 82. Աշխատանքային պայմանները

Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:

Հոդված 83. Սոցիալական ապահովությունը

Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

Հոդված 84. Արժանապատիվ գոյությունը և նվազագույն աշխատավարձը

1. Յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք:
2. Նվազագույն աշխատավարձի չափը սահմանվում է օրենքով:

Հոդված 85. Առողջության պահպանությունը

1. Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք:
2. Օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը:

Հոդված 86. Պետության քաղաքականության հիմնական նպատակները

Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝

1) գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը.
2) բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը.
3) բնակարանային շինարարության խթանումը.
4) կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը.

5) ծնելիության և բազմազավակության խթանումը.
6) երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը.
7) բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը.
8) հաշմանդամության կանխարգելման, բուժման, հաշմանդամների առողջության վերականգնման ծրագրերի իրականացումը, հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը.
9) սպառողների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը.
10) տարածքային համաչափ զարգացումը.
11) ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը.
12) քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանումը.
13) անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացումը.
14) հիմնարար և կիրառական գիտության զարգացումը.
15) ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը.
16) բարեգործության խթանումը՝ մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

Հոդված 87. Պետության քաղաքականության հիմնական նպատակների իրագործումը

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պարտավոր են իրագործել Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակները:
2. Կառավարությունը Սահմանադրության 156-րդ հոդվածով նախատեսված զեկույցի շրջանակներում տեղեկատվություն է ներկայացնում Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործման վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 4.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ԴԱՍ 1. Միջազգային իրավունքի աղբյուրները

Դասի ընթացքը

Առաջարկում ենք ուսուցչին դասն սկսել հետևյալ ներածականով:

Միջազգային իրավունքի այս դասընթացն ուսումնասիրելով՝ մենք հնարավորություն կունենանք կուտակելու անհրաժեշտ գիտելիքներ պետությունների, միջազգային կազմակերպությունների և ժողովուրդների միջև հարաբերությունները կարգավորող իրավունքի վերաբերյալ: Մենք կկարողանանք հասկանալ, թե ինչպես պետք է և ինչպես չպետք է պետությունները հարաբերվեն միմյանց հետ, որոնք են այն հիմնական կանոնները, որոնք համարվում են միջազգային հարաբերությունների հիմքը և որոնց վրա կառուցվում է ամբողջ միջազգային իրավունքը:

Պատմությունից մենք հիշում ենք, որ պետությունները միշտ գտնվել են տարբեր հարաբերությունների մեջ միմյանց հետ: Նրանք պատերազմել են, առևտրային հարաբերություններ են հաստատել, դիվանագետներ ու բանագնացներ են ընդունել և ուղարկել, ինչ-որ հարցի շուրջ բանակցել են, եկել են համաձայնության, համատեղ ջանքերով փորձել են լուծել երկկողմ շահեկան խնդիրներ և այլն:

Այս ամեն տեսակի հարաբերություններում նրանք փորձել են սահմանել երկուստեք ընդունելի կանոններ, որոնք եղել են ուղենիշներ նրանց հետագա հարաբերությունների համար: Այդ կանոնները նրանք ամբողջացրել են փաստաթղթերում և կնքել դրանք՝ պարտավորվելով հետևել այդ կանոններին:

Պատմության ընթացքում պետություններն ու ժողովուրդներն իրենք են գիտակցել, որ իրենց համար առավել շահեկան է միմյանց հետ համագործակցության ճանապարհը, քան պայքարի: Եվ հենց այդ գիտակցումով է, որ այսօր պետությունները ձգտում են ցանկացած տարաձայնություն հարթել փոխադարձաբար ընդունելի բանակցությունների և վեճերի լուծման այլ խաղաղ ճանապարհներով, քան թե պատերազմներով և փոխադարձ ոչնչացման քաղաքականությամբ:

Ուստի պետությունները հանգել են այն մտքին, որ պետք է համաձայնեցնել իրենց ձգտումները հանուն ավելի փոխշահավետ միջազգային համակեցության, իսկ այդ ձգտումների համաձայնեցման արդյունքը հենց միջազգային իրավունքն է:

<u>Երկրորդ քայլով առաջարկում ենք ուսուցչին</u> գրատախտակին գրել հետևյալ բառերն ու արտահայտությունները և առաջարկել սովորողներին միասին դուրս բերել միջազգային իրավունքի սահմանումը:

Միջազգային կազմակերպություններ
Միջազգային իրավունք
Իրավունքի սկզբունքներ և նորմեր
Կարգավորում
Պետություններ
Այլ սուբյեկտներ
Համակարգ
Միջազգային հարաբերություններ

Օգնություն ուսուցչին
Միջազգային իրավունքը կարելի է բնորոշել որպես իրավունքի սկզբունքների և նորմերի համակարգ, որը կարգավորում է պետությունների, միջազգային կազմակերպությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների միջև միջազգային հարաբերությունները:

<u>Երրորդ քայլով առաջարկում ենք ուսուցչին</u> *շարունակել դասը հետևյալ հարցադրումով.*

- **Ինչ է միջազգային պայմանագիրը**:

Խորհուրդ է տրվում կիրառել «Մտագրոհի» մեթոդը:

Կարող են հնչել տարբեր պատասխաններ, օրինակ՝ երկկողմ պարտավորություններ, բանակցային գործընթաց և այլն:

Մեթոդի կիրառումից հետո խորհուրդ է տրվում ուսուցչին ամփոփել եզրույթը:

Միջազգային պայմանագրերը կնքվում են պետությունների միջև երկար բանակցությունների արդյունքում: Պետությունները բոլոր դրույթները համաձայնեցնելուց հետո ստորագրում են միջազգային պայմանագիրը, իսկ պետությունների օրենսդիր մարմինները վավերացնում են այն:

Միջազգային պայմանագրերը լինում են երկկողմ և բազմակողմ:

Երկկողմ պայմանագրերը նրանք են, որոնք կնքվում են երկու պետությունների միջև և կարգավորում են միայն այդ պետությունների միջև առաջացող հարաբերությունները:

Բազմակողմ պայմանագրերի պարագայում մի շարք պետություններ միանգամից դառնում են մեկ միջազգային պայմանագրի անդամ պետություն: Այսպիսին են հիմնականում միջազգային կազմակերպությունների շրջանակներում կնքված պայմանագրերը:

Այս պայամանագրերի յուրաքանչյուր կողմ իրավունք ունի պայմանագրի ցանկացած կողմից պահանջել, որ վերջինս պատշաճորեն և բարեխղճորեն կատարի իր պայմանագրային պարտավորությունները:

<u>Երրորդ քայլով առաջարկում ենք ուսուցչին</u> *բաժանել սովորողներին ստորև ներկայացված աղյուսակը և բաշխման նյութերը:*

Սյունակում նշված են բազմակողմ պայմանագրի տեսակները, տերմինների բացատրությունները, նմանությունները և տարբերությունները:

<u>Առաջադրանք 1.</u>

Օգտվելով դասանյութում տրված նյութից, աղյուսակի սյունակում ներկայացված տերմինների բացատրությունները համարակալելով՝ վերադասավորել այնպես, որ բացատրությունը լինի ճիշտ:

Բազմակողմ պայմանագրի տեսակները	**Տերմինների բացատրությունը**	**Պայմանագրի անվանումը**	
1. լոկալ	Կնքվում են աշխարհագրորեն չսահմանափակված պետությունների միջև:		
2. տարածաշրջանային	Կնքվում են որոշակի աշխարհագրական սահմանափակ տարածք ներկայացնող պետությունների միջև:		
3. համընդհանուր	Կնքվում են որոշակի ավելի մեծ աշխարհագրական տարածություն ընդգրկող տարածաշրջանի պետությունների միջև:		

Առաջադրանք 2.

Զույգերով ուսումնասիրելով նախապես տրված բաշխման նյութերը (բաշխման նյութ 1., բաշխման նյութ 2., բաշխման նյութ 3.)՝ աղյուսակի համապատասխան բաժնում նշել պայմանագրի անվանումը՝ նշված տեսակին զուգահեռ:

Ամփոփելով առաջադրանքները՝ առաջարկում ենք հարցն ուղղել սովորողներին.

- ***Ի՞նչ կառուցվածքային և բովանդակային նմանություններ ունեին ներկայացված պայմանագրերը:***

Օգնություն ուսուցչին

Լոկալ պայմանագրերը նրանք են, որոնք կնքվում են որոշակի աշխարհագրական սահմանափակ տարածք ներկայացնող պետությունների միջև:

Տարածաշրջանային պայմանագրեր կնքում են որոշակի ավելի մեծ աշխարհագրական տարածություն ընդգրկող տարածաշրջանի պետությունների միջև:

Համընդհանուր պայմանագրերը աշխարհագրորեն սահմանափակված չեն:

Բաշխման նյութ 1.

(Ուսուցչի համար. Լոկալ պայմանագիր, տես ավելին՝ **https://www.arlis.am/documentview.aspx?docid=120340)**

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը՝ մի կողմից և Հայաստանի Հանրապետությունը՝ մյուս կողմից, այսուհետ՝ Կողմեր,

հաստատելով Կողմերին ու դրանց ժողովուրդներին միավորող բարեկամական հարաբերությունները և դրանց բարգավաճումն ապահովելուն ուղղված ձգտումները,

վճռականորեն տրամադրված լինելով նորովի խթանելու առավել սերտ ինտեգրումն ու Կողմերի տնտեսությունների միջև կապերի սերտացումը ժողովուրդների սոցիալական առաջընթացի և բարեկեցության բարելավման նպատակով,

հաստատելով եվրասիական ինտեգրման գործընթացի զարգացման հարցում իրենց շահագրգռվածությունը, առաջնորդվելով եվրասիական ինտեգրման գործընթացին Հայաստանի Հանրապետության մասնակցության վերաբերյալ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության ղեկավարների կողմից 2013 թվականի հոկտեմբերի 24-ին արված հայտարարությամբ, հաշվի առնելով, որ այն միջազգային պայմանագրերը, որոնց հիման վրա ձևավորվել է Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային հիմքը, դարձել են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի հիմքը, փաստելով նշված միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունները կատարելու հարցում Հայաստանի Հանրապետության պատրաստակամության մասին, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կողմից Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Մաքսային միությանն ու Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի Հանրապետության միանալու հետ կապված անհրաժեշտ միջոցառումների իրականացումը՝

պայմանավորվեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը միանում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին, ինչպես նաև Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային հիմքի ձևավորման շրջանակներում կնքված ու Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի՝ սույն Պայմանագրի 1-ին հավելվածով սահմանված ցանկին համապատասխան և սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից դառնում է Եվրասիական տնտեսական միության անդամ:

Հայաստանի Հանրապետության միանալու առնչությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում և սույն Պայմանագրի 1-ին հավելվածում նշված միջազգային պայմանագրերում փոփոխություններ են կատարվում՝ համաձայն սույն Պայմանագրի 2-րդ հավելվածի:

Հայաստանի Հանրապետության կողմից «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի և սույն Պայմանագրի 1-ին հավելվածով նախատեսված միջազգային այլ պայմանագրերի առանձին նորմերի կիրառումն իրականացվում է սույն Պայմանագրի 3-րդ հավելվածով նախատեսված պայմաններին և անցումային դրույթներին համապատասխան և հաշվի առնելով սույն Պայմանագրի 4-րդ հավելվածով սահմանված ցանկով նախատեսված ապրանքների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագների կիրառման վերաբերյալ պայմանավորվածությունները:

Եթե մինչև սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելը ստորագրվի կամ ուժի մեջ մտնի Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության ու Ռուսաստանի Դաշնության միջև կնքված Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի գործունեությանն առնչվող հարցերով միջազգային պայմանագիր, որի մասին նշված չէ սույն Պայմանագրի 1-ին հավելվածում, ապա Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է առանձին արձանագրությամբ այդ միջազգային պայմանագրին միանալու պարտավորություն՝ վերջինս ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ, սակայն ոչ շուտ, քան սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

Հոդված 2

Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերը, ինչպես նաև Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի (Եվրասիական տնտեսական ընկերակցության միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի)) որոշումները, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (Մաքսային միության հանձնաժողովի) որոշումները, որոնք գործում են սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից, ենթակա են կիրառման Հայաստանի Հանրապետության տարածքում՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 3-րդ հավելվածով սահմանված դրույթները:

Հոդված 3

Հայաստանի Հանրապետության՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելու հետ կապված հարցերի կարգավորման վերաբերյալ դրույթները սահմանված են սույն Պայմանագրի 3-րդ հավելվածով:

Հոդված 4

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք չհանդիսացող տարածքներով Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դեպի Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման առանձնահատկությունները սահմանվում են սույն Պայմանագրի 5-րդ հավելվածով:

Հոդված 5

Սույն Պայմանագրի դրույթների մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 112-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 6

Սույն Պայմանագիրը դառնում է Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս:

Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ է մտնում սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական

ընթացակարգերը Կողմերի կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից, բայց ոչ շուտ, քան «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը:

Կատարված է Մինսկ քաղաքում, 2014 թվականի հոկտեմբերի 10-ին, մեկ օրինակից՝ ռուսերենով:

Սույն Պայմանագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն Պայմանագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կուղարկի դրա հաստատված պատճենը:

Բելառուսի Հանրապետության կողմից	**Ղազախստանի Հանրապետության կողմից**	**Ռուսաստանի Դաշնության կողմից**
/ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/

Հայաստանի Հանրապետության կողմից

/ստորագրություն/

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 2-ին:

Բաշխման նյութ 2.

(Ուսուցչի համար. Տարածաշրջանային պայմանագիր՝տես ավելին. **https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24616)**

Կ Ո Ն Վ Ե Ն Ց Ի Ա

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները (այսուհետ՝ Կողմեր),

ելնելով Անկախ պետությունների համագործակցության կանոնադրության նպատակներից և սկզբունքներից, հաստատելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի նշանակությունը, որոնք սահմանում են, որ իշխանության նկատմամբ իրավասությունները պետք է հիմնվեն իրական և պարբերական ընտրությունների ընթացքում ժողովրդի դրսևորած կամարտահայտության վրա, ինչպես նաև Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության, Եվրոպայի խորհրդի, այլ միջազգային կազմակերպությունների՝ ազատ և արդար ընտրությունների անցկացման վերաբերյալ փաստաթղթերի նշանակությունը, համոզված լինելով, որ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ճանաչումը, պահպանումը և պաշտպանումը, ժողովրդական կամարտահայտման ժողովրդական ինստիտուտների զարգացումն ու կատարելագործումը՝ դրանց իրականացման ընթացակարգերի միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան, ազգային սահմանադրության և իրավական ակտերի հիման վրա, իրավական պետության նպատակն ու պարտականությունն է, հասարակական կայունության և պետությունների միջև համագործակցության հետագա ամրապնդման անքակտելի պայմաններից մեկը՝ հանուն ընդհանուր ժողովրդավարական ձեռքբերումներ հանդիսացող նպատակների ու սկզբունքների իրականացման և պաշտպանության,

ձգտելով իրավունքի և օրենքի գերակայության հիման վրա աջակցել ներկայացուցչական կառավարման ժողովրդավարական համակարգերի, ընտրությունների անցկացման ժամանակ ժողովրդի կամարտահայտման ժողովրդավարական ավանդույթների, ժողովրդական իշխանության այլ ձևերի իրականացման հաստատմանն ու կատարելագործմանը՝ առավելագույնս հաշվի առնելով ազգային և պատմական ավանդույթները, համոզված լինելով, որ ընտրությունները կայուն քաղաքացիական հասարակության և պետության հաստատուն զարգացման քաղաքական և իրավական միջոց-

ներից մեկն են, ընդունելով Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների կուտակած ընտրությունների իրավական կարգավորման ազգային փորձի, մարդու և քաղաքացու ընտրական իրավունքների և ազատությունների երաշխիքների արժեքը, վճռականությամբ լի՝ ապահովել ընտրությունների հանրաճանաչ չափանիշների և ընտրությունների կարգավորման ազգային նորմերի, մարդու և քաղաքացու ընտրական իրավունքների և ազատությունների համակցումը, ինչպես նաև դրանց իրականացման և պաշտպանության երաշխիքները, կյանքի կոչել սույն Կոնվենցիայի դրույթները սահմանադրության ու ազգային օրենսդրության և համապատասխան պետական քաղաքականության հիման վրա, ձգտելով ամրագրել երաշխիքներ սույն Կոնվենցիայի մասնակից պետություններում ընտրությունների հասարակական և միջազգային դիտարկման համար, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1.Ժողովրդավարական ընտրությունների չափանիշները

1. Ժողովրդավարական ընտրությունները ժողովրդի իշխանության և կամքի բարձրագույն անմիջական արտահայտություններից մեկն են, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման ընտրովի մարմինների, ժողովրդական (ազգային) ներկայացուցչական այլ մարմինների, ընտրովի պաշտոնատար անձանց հիմքը:

2. Կողմերն ընդունում են, որ ժողովրդավարական ընտրությունների չափանիշներն են պետական իշխանության, տեղական ինքնակառավարման, ժողովրդավարական (ազգային) ներկայացուցչական այլ մարմիններում քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքը՝ ընդհանուր, հավասար, ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ, ընտրողների կամքի ազատ արտահայտումն ապահովող պարբերական ու պարտադիր, արդար, իրական և ազատ ընտրությունների սկզբունքները, ընտրությունների թափանցիկ և հրապարակային բնույթը, մարդու և քաղաքացու ընտրական իրավունքների և ազատությունների դատական և այլ պաշտպանության, ընտրությունների հասարակական և միջազգային դիտարկման իրականացումը, ընտրական գործընթացի մասնակիցների ընտրական իրավունքների և ազատությունների իրականացման երաշխիքները:

3. Քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքն ամրագրվում է Սահմանադրությամբ և (կամ) օրենքներով, իսկ դրա իրականացման կարգը սահմանվում է օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով: Ընտրելու և ընտրվելու իրավունքի, ընտրությունների կարգի (ընտրական համակարգերի) օրենսդրական կարգավորումը, ինչպես նաև ընտրական իրավունքնե-

րի և ազատությունների սահմանափակումները չպետք է սահմանափակեն կամ չեղյալ համարեն մարդու և քաղաքացու հանրաճանաչ իրավունքներն ու ազատությունները և դրանց իրականացման սահմանադրական և (կամ) օրենսդրական երաշխիքները կամ կրեն խտրական բնույթ:

4. Ընտրությունների նշանակումը, նախապատրաստումը և անցկացումն իրականացվում են սահմանադրության և օրենքների հիման վրա:

5. Սահմանադրությամբ, օրենքով սահմանված անհրաժեշտ ձայներ ստացած ընտրված անձինք իրենց պաշտոնը ստանձնում են օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դրանով իսկ ընդունելով իրենց պատասխանատվությունն ընտրողների առջև և պաշտոնավարում են մինչև իրենց լիազորությունների ժամկետի ավարտը կամ մինչև այլ կերպ դրանց դադարումը, որը կարգավորվում է սահմանադրությամբ, օրենքներով՝ ժողովրդավարական խորհրդարանական և սահմանադրական ընթացակարգերին համապատասխան:

6. Ընտրությունների օրինական և հրապարակային բնույթը ընտրություններին մասնակցող քաղաքացիների, թեկնածուների, քաղաքական կուսակցությունների (դաշինքների) ընտրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ու իրականացումը, իրավակիրառ պրակտիկայում ընտրական գործընթացի կազմակերպման սահմանադրական սկզբունքների իրականացումն ապահովվում են դատական, վարչական և պաշտպանության այլ միջոցներով:

7. Օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, շարժումների, միջազգային կազմակերպությունների ուղղակի կամ անուղղակի որևէ մասնակցություն՝ օժանդակող կամ խոչընդոտող գործունեություն պետական իշխանության և տեղական ինքնակառավարման ընտրովի մարմինների, ժողովրդական (ազգային) ներկայացուցչական այլ մարմինների ընտրովի պաշտոնատար անձանց ընտրությունների նախապատրաստմանն ու անցկացմանը չի թույլատրվում:

Հոդված 2. Ընդհանուր ընտրական իրավունք

Ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի պահպանում նշանակում է հետևյալը.

ա) Սահմանադրությամբ, օրենքներով սահմանված տարիքը լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ընտրելու և ընտրվելու պետական իշխանության, տեղական ինքնակառավարման մարմիններում, ժողովրդական (ազգային) ներկայացուցչական այլ մարմիններում ընտրովի պաշտոն-

ներում՝ սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պայմաններով և կարգով:

բ) Իշխանության, տեղական ինքնակառավարման մարմիններում, ժողովրդական (ազգային) ներկայացուցչական այլ մարմիններում ընտրովի պաշտոններում քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքն իրականացվում է անկախ սեռական, լեզվական, դավանական կամ կրոնական հատկանիշներից, առանց քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագումի, ազգային փոքրամասնության կամ էթնիկ խմբի պատկանելու, գույքային կամ այլ նմանատիպ հանգամանքների որևէ խտրական բնույթի սահմանափակումների:

գ) Ազգային ընտրությունների անցկացման ժամանակ իր պետության սահմաններից դուրս բնակվող կամ գտնվող յուրաքանչյուր քաղաքացի ունի իր պետության մյուս քաղաքացիներին հավասար ընտրական իրավունքներ: Դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները, դրանց պաշտոնատար անձինք աջակցում են քաղաքացիների ընտրական իրավունքների և ազատությունների իրականացմանը:

դ) Յուրաքանչյուր քաղաքացու երաշխավորվում է ընտրողների ցուցակում իրեն ընդգրկելու մասին տեղեկություն ստանալու, դրա ամբողջականությունը և իսկությունն ապահովելու նպատակով այդ տեղեկատվությունը ճշտելու, ընտրողների ցուցակում ընդգրկելու մերժումը օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու իրավունք:

Հոդված 3. Հավասար ընտրական իրավունք

1. Հավասար ընտրական իրավունքի սկզբունքի պահպանում նշանակում է հետևյալը.

ա) Յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն կամ մյուս քաղաքացիների հետ հավասար ձայներ և մյուս քաղաքացիների հետ հավասարապես իրավունք ունի իրականացնելու իր քվեարկելու իրավունքը, ընդ որում՝ նրա ձայնը (ձայները) ունի նույն ազդեցությունը, ինչ մյուս ընտրողների ձայները, ընդ որում՝ պետությունում կիրառվող ընտրական համակարգը չպետք է ազդի ընտրողի ձայնի (ձայների) ազդեցության վրա:

բ) Միամանդատ և (կամ) բազմամանդատ ընտրական համակարգով քվեարկության անցկացման ժամանակ այդ ընտրատարածքները կազմավորվում են հավասար հիմունքով, այնպես, որ քվեարկության արդյունքները հնարավորինս ճիշտ և լրիվ արտահայտեն ընտրողի կամքը: Հավասարության սկզբունքի չափանիշները կարող են լինել ընտրողների թվի մոտավոր հավասարությունը միամանդատ ընտրատարածքում կամ ընտրողների

թվի մոտավոր հավասարությունը մեկ պատգամավորական մանդատին՝ բազմամանդատ ընտրատարածքում: Ներկայացուցչության միջին նորմայից շեղման հիմք կարող են լինել տարածքի դժվար հասանելիությունը և հեռավորությունը, փոքրաքանակ բնիկ ազգությունների կամ այլ ազգային փոքրամասնությունների և էթնիկ խմբերի բնակության խտությունը:

2. Յուրաքանչյուր ընտրող ազատ քվեարկությանը մասնակցելու իր իրավունքն իրականացնելու համար ունի ընտրական տեղամաս, ինչպես նաև քվեարկության համար հատկացված տարածք մուտք գործելու հավասար և անարգել իրավունք:

3. Քաղաքացուն կարող է հնարավորություն տրվել իրականացնել քվեարկությանը մասնակցելու իր իրավունքը վաղաժամկետ քվեարկություն, քվեարկության համար հատկացված տարածքից դուրս քվեարկություն կազմակերպելու կամ ընտրողների համար քվեարկության առավել հարմար պայմաններ ապահովող ընթացակարգերի միջոցով:

4. Յուրաքանչյուր քաղաքացի պետք է ունենա հավասար իրավական հնարավորություններ ընտրություններին իր թեկնածությունն առաջադրելու համար:

5. Նոր ժամկետով ընտրովի պաշտոնում առաջադրված թեկնածուների ընտրարշավին մասնակցության առանձնահատկությունների հետ կապված սահմանափակումները կարգավորվում են սահմանադրությամբ և օրենքներով: Սահմանված սահմանափակումների պահպանումը չպետք է խոչընդոտի պատգամավորների և ընտրովի պաշտոն զբաղեցնող անձանց կողմից իրենց լիազորությունների իրականացմանն ու ընտրողների առջև իրենց ունեցած պարտականությունների կատարմանը:

6. Թեկնածուներն իրավունք չունեն ընտրվելու նպատակով օգտագործել իրենց ծառայողական կամ պաշտոնական դիրքի առավելությունները: Հավասար ընտրական իրավունքի սկզբունքների խախտումների ցանկը և այդպիսի խախտումների համար պատասխանատվության չափը սահմանվում են օրենքով:

Հոդված 4. Ուղղակի ընտրական իրավունք

1. Ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքի պահպանում նշանակում է, որ ընտրությունների ժամանակ քաղաքացիները քվեարկում են անմիջականորեն՝ համապատասխան թեկնածուին և (կամ) թեկնածուների ցուցակներին «կողմ» կամ թեկնածուին, թեկնածուներին և (կամ) թեկնածուների ցուցակներին «դեմ» կամ բոլոր թեկնածուների և (կամ) թեկնածուների ցուցակներին «դեմ»:

2. Ազգային օրենսդիր մարմնի որևէ պալատի պատգամավորական բոլոր մանդատները համաժողովրդական ընտրությունների ընթացքում թեկնածուների և (կամ) թեկնածուների ցուցակների ազատ մրցակցության օբյեկտն են:

3. Եթե ազգային օրենսդիր մարմինը երկպալատ է և մյուս պալատի պատգամավորական մանդատների մի մասը կամ բոլոր մանդատները համաժողովրդական ընտրությունների ընթացքում թեկնածուների և (կամ) թեկնածուների ցուցակների ազատ մրցակցության օբյեկտ չեն, ապա դա չի հակասում սույն Կոնվենցիային:

Հոդված 5. Գաղտնի քվեարկություն

1. Գաղտնի քվեարկության սկզբունքի պահպանումը նշանակում է ընտրողի կամքի արտահայտման նկատմամբ ցանկացած տեսակի վերահսկողության բացառում, ազատ ընտրությունների համար հավասար պայմանների ապահովում:

2. Քաղաքացիների քվեարկելու գաղտնիության իրավունքը ոչ մի կերպ և ոչնչով չի կարող սահմանափակվել:

3. Ընտրություններն անց են կացվում գաղտնի քվեարկության ընթացակարգերի կիրառմամբ:

4. Ընտրական մարմիններն ապահովում են Սահմանադրությամբ, օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված պայմանների պահպանումը, որոնք բացառում են քվեաթռրթիկը լրացնելու նկատմամբ որևէ հսկողության կամ դիտարկման, որևէ մեկի կողմից ընտրողի կամարտահայտման գաղտնիությունը խախտող գործողության իրականացման հնարավորությունը:

Հոդված 19. Կոնվենցիայի մասնակից պետությունների պարտավորությունները

1. Կողմերը ժողովրդավարական ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար ընտրական իրավունքների և ազատությունների երաշխիքների ամրապնդման, սույն Կոնվենցիայի դրույթների իրականացման նպատակով կընդունեն օրենսդրական և այլ միջոցներ: Սույն Կոնվենցիայում հռչակված ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշները կարող են ապահովվել՝ դրանք Սահմանադրության, օրենսդրական ակտերի մեջ ներառելով:

2. Կողմերը պարտավորվում են՝

ա) երաշխավորել ընտրական իրավունքի ժողովրդավարական

սկզբունքների և նորմերի պաշտպանությունը, ընտրությունների ժողովրդավարական բնույթը, ընտրություններին քաղաքացիների կամքի ազատ արտահայտումը, ընտրությունները կայացած, իրական և օրինական ճանաչելուն ուղղված պահանջների հիմնավորումը.

բ) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որպեսզի ընտրությունների ամբողջ օրենսդրական բազան ընդունվի ազգային օրենսդիր մարմնի կողմից և ընտրությունների անցկացումն ապահովող իրավական չափորոշիչները չսահմանվեն գործադիր իշխանության ակտերով.

գ) ձգտել, որ համաժողովրդական ուղղակի ընտրությունների ընթացքում ազգային օրենսդիր մարմնի մյուս պալատի պատգամավորական մանդատներն ամբողջությամբ կամ մասնակի՝ օրենքներով նախատեսված կարգով, լինեն թեկնածուների և (կամ) թեկնածուների ցուցակների ազատ մրցակցության օբյեկտ.

դ) ձգտել քաղաքացիների ընտրական իրավունքներն ու ազատություններն ապահովող իրավական, կազմակերպչական, տեղեկատվական երաշխիքների համակարգի ստեղծմանը ցանկացած մակարդակի ընտրության նախապատրաստման և անցկացման ժամանակ, ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական միջոցներ, որպեսզի սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պայմաններին և կարգին համապատասխան՝ ապահովվեն կանանց արդար և իրական, տղամարդկանց հետ հավասար ընտրովի մարմիններում, ընտրովի պաշտոններում ինչպես անձամբ, այնպես էլ քաղաքական կուսակցությունների (դաշինքների) կազմում ընտրելու և ընտրվելու իրավունքների իրականացման հնարավորություն, ինչպես նաև ֆիզիկական շեղումներով անձանց (հաշմանդամներին և այլն) քվեարկությանը մասնակցելու համար ստեղծել լրացուցիչ երաշխիքներ և պայմաններ.

ե) իրականացնել ընտրողների գրանցում (հաշվառում) օրենսդրորեն սահմանված ոչ խտրական և գործող՝ գրանցման (հաշվառման) այնպիսի չափանիշներ նախատեսող ընթացակարգերի հիման վրա, ինչպիսիք են տարիքը, քաղաքացիությունը, բնակության վայրը, քաղաքացու անձը հաստատող հիմնական փաստաթղթի առկայությունը.

զ) օրենսդրական կարգով ամրագրել ընտրողների մասին տեղեկություն տվող անձանց պատասխանատվությունը՝ համապատասխան տեղեկությունների հավաստիության, ամբողջության և դրանք ժամանակին փոխանցելու, գաղտնի բնույթի անձնական տվյալների պահպանումը օրենսդրությանը համապատասխան ապահովելու համար.

է) աջակցել քաղաքական կուսակցությունների ձևավորմանը և նրանց օրինական ազատ գործունեությանը, օրենսդրորեն կարգավորել քաղաքա-

կան կուսակցությունների և ընտրական գործընթացի ֆինանսավորումը, ապահովել, որ օրենքները և պետական քաղաքականությունն իրականացնեն կուսակցության և պետության բաժանում, ազատության և արդարության մթնոլորտում ընտրարշավի անցկացում, ինչը կնպաստի նրան, որ կուսակցությունները և թեկնածուները ազատ շարադրեն իրենց հայացքները և գնահատականները, նախընտրական ծրագրերի (պլատֆորմների) դրույթները, իսկ ընտրողները ծանոթանան դրանց, քննարկեն և ազատ քվեարկեն «կողմ» կամ «դեմ»՝ չվախենալով պատժից կամ որևէ հետապնդումից.

ը) ապահովել զանգվածային լրատվության միջոցներով, այդ թվում՝ ինտերնետային ցանցով ընտրարշավի լուսաբանման անկողմնակալությունը երաշխավորող միջոցների ձեռնարկում, իրավաբանական կամ վարչական խոչընդոտների սահմանման անհնարինություն քաղաքական կուսակցությունների և թեկնածուների համար, ոչ խտրական հիմքով զանգվածային լրատվության միջոցներից օգտվելու համար, ձևավորել ընտրությունների հետ կապված հասարակական կարծիքի հարցումների արդյունքների միասնական տեղեկատվական տվյալների բազա, որի տվյալները պետք է տրամադրվեն ընտրական գործընթացի մասնակիցներին, ինչպես նաև միջազգային դիտորդներին՝ նրանց հարցումով, ծանոթացման կամ պատճենահանման համար, ներդնել ընտրությունների թափանցիկ բնույթն ապահովող, քվեարկության և ընտրությունների արդյունքների նկատմամբ ընտրողների վստահության մակարդակը բարձրացնող նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ.

թ) ընդունել քաղաքացիական կրթության ազգային ծրագրեր և մասնակցել նմանատիպ միջպետական ծրագրերի մշակմանն ու ընդունմանը, պայմաններ ապահովել քաղաքացիներին և ընտրարշավի մյուս մասնակիցների ընտրական ընթացակարգերին և կանոններին ծանոթացնելու և ուսուցանելու, նրանց իրավական մշակույթի և ընտրությունների կազմակերպիչների մասնագիտական որակավորումը բարձրացնելու համար.

ժ) ապահովել օրենսդրությանը և պետության միջազգային պարտավորություններին համապատասխան ժողովրդավարական, ազատ, արդար, իրական և պարբերական ընտրությունների անցկացումը կազմակերպող անկախ, անկողմնակալ ընտրական մարմինների կազմավորում.

ժա) ապահովել հնարավորություն՝ օրենքով սահմանված անհրաժեշտ քանակի ձայներ ստացած թեկնածուներին պաշտոնը ստանձնելու պատշաճ կերպով և պաշտոնավարելու մինչև իրենց լիազորությունների ժամկետի ավարտը կամ մինչև օրենքով կարգավորվող այլ ձևով դրանց դադարումը.

ժբ) ձեռնարկել միջոցներ քաղաքացիների իրավունքների և ազատությունների խախտումների, ինչպես նաև բռնության, խաբեության, սպառնալիքի, կեղծիքի կամ այլ միջոցներով քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքի ազատ իրականացմանը, սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված այլ ընտրական իրավունքների և ազատությունների իրականացմանը խոչընդոտող անձանց քրեական, վարչական կամ այլ պատասխանատվության ենթարկելու կարգի և հիմունքների ցանկը օրենսդրորեն կարգավորելու համար,

ժգ) աջակցել ընտրական օրենսդրության մասին տեղեկատվություն, ընտրական գործընթացի մասնակիցների (հաշվի առնելով, որ անձնական տվյալներն ունեն գաղտնի բնույթ), իրավակիրառ և դատական փորձի, ընտրական համակարգի կատարելագործման օրենսդրական առաջարկությունների, ինչպես նաև ընտրական գործընթացի կազմակերպմանը վերաբերող այլ տեղեկատվություն պարունակող միջպետական միասնական տվյալների բազայի ստեղծմանը՝ տեղեկատվության փոխանակման և համատեղ օգտագործման նպատակով.

ժդ) աջակցել սույն կոնվենցիայի մասնակից պետությունների ընտրական մարմինների համագործակցության զարգացմանը՝ ներառյալ ընտրական մարմինների գործող միջպետական ընկերակցությունների լիազորությունների ընդլայնումը և (կամ) ստեղծումը:

Կոնվենցիան ստորագրել են Հայաստանի Հանրապետությունը, Վրաստանը, Ղրղզստանի Հանրապետությունը, Մոլդովայի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը, Տաջիկստանի Հանրապետությունը, Ուկրաինան:

Կոնվենցիան ուժի մեջ է մտել Ղրղզստանի Հանրապետության համար՝ 11.11.2003 թ., Ռուսաստանի Դաշնության համար՝ 11.11.2003 թ., Տաջիկստանի Հանրապետության համար՝ 11.11.2003 թ., Մոլդովայի Հանրապետության համար՝ 14.01.2005 թ., Հայաստանի Հանրապետության համար՝ 17.03.2005 թ.:

Բաշխման նյութ 3.
(Ուսուցչի համար. Համընդհանուր պայմանագիր՝ տես ավելին՝
http://www.un.am/res/UN%20Treaties/XIV_1.pdf)

ԿՈՆՎԵՆՑԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Սույն կոնվենցիայի մասնակից պետությունները, հաշվի առնելով միջազգային հարաբերությունների պատմության մեջ պայմանագրերի հիմնարար դերը, ընդունելով պայմանագրերի, որպես միջազգային իրավունքի աղբյուրի և որպես ազգերի միջև, անկախ նրանց սահմանադրական ու հասարակական համակարգերից, խաղաղ համագործակցության զարգացման միջոցի հարաճուն նշանակությունը, նշելով, որ ազատ համաձայնության և բարեխղճության սկզբունքները և pacta sunt servanda նորմն ընդհանուր ճանաչում ունեն, հաստատելով, որ պայմանագրերին վերաբերող վեճերը, ինչպես նաև միջազգային մյուս վեճերը պետք է լուծվեն միայն խաղաղ միջոցներով և արդարության ու միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխան, հիշեցնելով Միավորված ազգերի կազմակերպության ժողովուրդների վճռականության մասին ստեղծելու պայմաններ, որոնց դեպքում կարող են պահպանվել արդարությունը և պայմանագրերից բխող պարտավորությունների հարգումը, ընդունելով ի գիտություն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ մարմնավորված միջազգային իրավունքի սկզբունքները, ինչպիսիք են ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման, բոլոր պետությունների ինքնիշխան հավասարության և անկախության, պետությունների ներքին գործերին չմիջամտելու, ուժի սպառնալիքի կամ դրա կիրառման արգելման և բոլորի համար մարդու իրավունքների և ազատությունների համընդհանուր հարգման և պահպանման սկզբունքները, համոզված լինելով, որ սույն կոնվենցիայով իրագործվող պայմանագրերի իրավունքի կոդիֆիկացումը և առաջադիմական զարգացումը կնպաստեն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ նշված նպատակներին, հատկապես միջազգային խաղաղության և անվտանգության պահպանմանը, ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը և միմյանց հետ նրանց համագործակցության իրագործմանը, հաստատելով, որ միջազգային սովորութային իրավունքի նորմերը նախկինի պես կկարգավորեն այն

հարցերը, որոնք իրենց լուծումը չեն գտել սույն կոնվենցիայի դրույթներում, պայմանավորվեցին հետևյալի շուրջ:

Միավորված ազգերի կազմակերպության Հանրային տեղեկատվության վարչության երևանյան գրասենյակ

Մ ա ս 1. Ներածություն

Հոդված 1. Սույն կոնվենցիայի կիրառման ոլորտը

Սույն կոնվենցիան կիրառվում է պետությունների միջև կնքված պայմանագրերի նկատմամբ:

Հոդված 2. Հասկացությունների օգտագործումը

1. Սույն կոնվենցիայի նպատակների համար.

ա) «պայմանագիր» նշանակում է պետությունների միջև գրավոր ձևով կնքված և միջազգային իրավունքով կարգավորվող միջազգային համաձայնություն, անկախ նրանից՝ այդ համաձայնությունը պարունակվում է մեկ կամ երկու, թե միմյանց հետ կապված մի քանի փաստաթղթերում, ինչպես նաև անկախ դրա կոնկրետ անվանումից,

բ) «վավերացում», «ընդունում», «հաստատում» և «միացում» նշանակում է, պայմանավորված դեպքով, նման անվանում ունեցող միջազգային գործողություն, որի միջոցով պետությունը միջազգային մակարդակով հաստատում է իր համար պայմանագրի պարտադիրության համաձայնությունը,

գ) «լիարժեք լիազորություն» նշանակում է պետության իրավասու մարմնի կողմից տրվող փաստաթուղթ, որով մեկ կամ մի քանի անձինք նշանակվում են ներկայացնելու այդ պետությունը բանակցություններ վարելու, պայմանագրի տեքստն ընդունելու կամ դրա բնագրային բնույթը հաստատելու, այդ պետության համար պայմանագրի պարտադիրության համաձայնությունն արտահայտելու կամ պայմանագրին առնչվող ցանկացած ուրիշ գործողություն կատարելու նպատակով,

դ) «վերապահում» նշանակում է պայմանագրի ստորագրման, վավերացման, ընդունման կամ հաստատման կամ դրան միանալու ժամանակ ցանկացած ձևակերպումով և ցանկացած անվանումով պետության կողմից արված միակողմանի հայտարարություն, որի միջոցով նա ցանկանում է բացառել կամ փոփոխել պայմանագրի որոշակի դրույթների իրավական ուժը դրանք տվյալ պետության նկատմամբ կիրառելիս,

ե) «բանակցող պետություն» նշանակում է պետություն, որը մասնակցել է պայմանագրի տեքստը կազմելուն և ընդունելուն,

զ) «պայմանավորվող պետություն» նշանակում է պետություն, որը համաձայնել է պայմանագրի պարտադիրությանը, անկախ նրանից՝ այդ պայմանագիրն ուժի մեջ է մտել, թե ոչ,

է) «կողմ» նշանակում է պետություն, որը համաձայնել է պայմանագրի պարտադիրությանը, և որի համար պայմանագիրն ուժի մեջ է,

ը) «երրորդ պետություն» նշանակում է պետություն, որը պայմանագրին կողմ չէ,

թ) «միջազգային կազմակերպություն» նշանակում է միջկառավարական կազմակերպություն:

…

Հայաստանի Հանրապետությունը Միջազգային պայմանագրերի մասին Վիեննայի կոնվենցիան վավերացրել է նրա 66-րդ հոդվածի վերաբերյալ հետևյալ վերապահումով. «Հայաստանի Հանրապետությունն իրեն կապված չի համարում Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969 թ.Վիեննայի կոնվենցիայի 66-րդ հոդվածի դրույթներով և հայտարարում է, որ կոնվենցիայի 5-րդ բաժնի ցանկացած հոդվածի կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ պայմանավորվող կողմերի միջև ցանկացած վեճը Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային դատարանի լուծմանը հանձնելու կամ հաշտարար հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է վեճի բոլոր մասնակիցների պարտադիր համաձայնությունը»:

Ուժի մեջ է մտել 2005 թ. հունիսի 16-ին

ԴԱՍ 4. Միջազգային կազմակերպությունները և միջազգային իրավունքը

Դասի ընթացքը

Առաջարկում ենք ուսուցչին դասն սկսել հետևյալ ներածականով:

Միջազգային հարաբերությունների զարգացմանը զուգընթաց՝ պետությունները սկսեցին գիտակցել, որ այդ հարաբերություններն ավելի կայուն և արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է ձևավորել միջազգային կազմակերպություններ՝ ընդհանուր շահերն ավելի լավ պաշտպանելու համար:

Այդ նպատակով ձևավորվել են և հիմա էլ շարունակում են ձևավորվել համապատասխան կենտրոններ, որոնք կունենան պետությունների կողմից նրանց փոխանցված հստակ լիազորություններ, նպատակներ և խնդիրներ: Եվ այդ կազմակերպությունները պարտավոր են դուրս չգալ իրենց փոխանցված լիազորությունների շրջանակից:

Պատմության ընթացքում այդ կազմակերպությունները ձևավորվել են կոնկրետ նպատակի համար, ունեցել են հստակ կառուցվածք, որոշումներ ընդունելու ընթացակարգեր և այլն:

Պետությունները, ձևավորելով միջազգային կազմակերպություններ, նրանց են փոխանցել որոշակի իրավասություններ, համատեղ որոշումներ ընդունելու իրավունք, և իրենք էլ պարտավորվում են ենթարկվել կամ առնվազն հաշվի նստել այդ կազմակերպությունների որոշումների հետ:

Օգնություն ուսուցչին

Համաշխարհային խաղաղ համայնքի գաղափարը

Միավորված ազգերի կազմակերպությունը կյանքի կոչվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ (1939-1945 թթ.), սակայն խաղաղ գոյակցող պետությունների համայնք ստեղծելու բարձրագույն նպատակը շատ ավելի վաղ է առաջացել:

Դեռևս 1795 թ. գերմանացի փիլիսոփա Էմանուել Կանտն առաջ քաշեց հարատև խաղաղության գաղափարը. ուսմունք, որի վրա է հիմնված իրավունքի գերակայության այժմյան սկզբունքը: Նա առաջարկում էր, որ պետություններն ստեղծեն խաղաղ համաշխարհային համայնք, բայց ոչ համաշխարհային կառավարության միջոցով, այլ յուրաքանչյուր երկիր դառնա ազատ պետություն, որը հարգում է իր քաղաքացիներին և օտարերկրյա այցելուներին՝ այդպիսով նպաստելով ամբողջ աշխարհում խաղաղ հասարակության ստեղծմանը:

Այս գաղափարով Կանտը ոչ միայն ազդեցություն ունեցավ քաղաքական և փիլիսոփայական մտածողության վրա, այլև զարկ տվեց միջազգային իրավունքի զարգացմանն ու նպաստեց այնպիսի հաստատությունների ստեղծմանը, ինչպիսին է Միջխորհրդարանական միությունը (ստեղծվելով 1889 թ.՝ այն եղել է Ազգերի լիգայի «նախնին», իսկ ներկայումս ՄԱԿ-ում մշտական դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է): Նրա ազդեցությունը հստակ նկատելի է նաև ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի՝

1918 թ. հունվարի 8-ի ԱՄՆ կոնգրեսին ուղղված «Տասնչորս կետ» ելույթում, որում առաջին անգամ հիշատակվում է Ազգերի լիգան:

ՄԱԿ-ի ստեղծումը

Միավորված ազգերի կազմակերպության գաղափարը ծնվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Դաշնակից համաշխարհային առաջնորդները, որոնք համագործակցում էին հանուն պատերազմի դադարեցման, խիստ անհրաժեշտություն զգացին մի մեխանիզմի, որը կօգնի խաղաղության հաստատմանը և հետագա պատերազմների կանխարգելմանը: Նրանք գիտակցեցին, որ դա հնարավոր կլինի միայն այն պարագայում, երբ բոլոր պետությունները համագործակցեն մեկ համաշխարհային կազմակերպության միջոցով: ՄԱԿ-ը կոչված էր լինելու այդ կազմակերպությունը:

ՄԱԿ-ի հռչակագիրը

1942 թ. Ամանորին ԱՄՆ-ի, Միացյալ Թագավորության, Խորհրդային Միության և Չինաստանի ներկայացուցիչներն ստորագրեցին մի համառոտ փաստաթուղթ, որը հայտնի է որպես «ՄԱԿ-ի հռչակագիր»: Հաջորդ օրն իրենց ստորագրություններն ավելացրին 22 այլ երկրների ներկայացուցիչներ: Այս կարևոր փաստաթղթով ստորագրող պետությունների կառավարությունները հանձն էին առնում առավելագույնս կենտրոնացնել ուժերը հանուն պաշտպանության և պարտավորվում էին չկատարել խաղաղության հաստատման անջատ գործողություններ:

Երեք տարի անց, երբ ընթանում էին Սան Ֆրանցիսկոյի խորհրդաժողովի նախապատրաստման աշխատանքները, հրավիրվեցին մասնակցելու միայն այն պետությունները, որոնք պատերազմ էին հայտարարել «Բեռլին-Հռոմ-Տոկիո» առանցքին և մինչև 1945 թ. մարտը միացել էին ՄԱԿ-ի հռչակագրին:

Ինչ է ՄԱԿ-ը

ՄԱԿ-ը եզակի կազմակերպություն է՝ կազմված անկախ պետություններից, որոնք ի մի են եկել համաշխարհային խաղաղության և սոցիալական առաջընթացի համար պայքարելու նպատակով: Կազմակերպությունը պաշտոնապես կյանքի կոչվեց 51 պետությունների մասնակցությամբ: 2014 թ. դրությամբ ՄԱԿ-ի անդամ պետությունների թիվը հասել է 193-ի:

Բոլոր երկրների ֆորում, ոչ թե համաշխարհային կառավարություն

Կառավարությունները ներկայացնում են երկրները և ժողովուրդներին: Միավորված ազգերի կազմակերպությունը ոչ որևէ առանձին կառավարություն է ներկայացնում, ոչ էլ պետություն: Այն ներկայացնում է իր բոլոր անդամներին և կատարում է միայն այն, ինչ որոշում են անդամ պետությունները:

Միավորված ազգերի կազմակերպության ուղենշային սկզբունքները

ՄԱԿ-ի **Կանոնադրությունը** հիմնադիր փաստաթուղթ է, որով ղեկավարվում են նրա բոլոր ձեռնարկումները: Այն ուղեցույցների լրակազմ է, որով բացատրվում են յուրաքանչյուր անդամ պետության իրավունքներն ու պարտականությունները և այն, ինչ հարկ է անել սահմանված նպատակների իրագործման համար: Երբ որևէ պետություն դառնում է ՄԱԿ-ի անդամ, ընդունում է կանոնադրության նպատակները և կանոնները:

Խորհրդանշանը

Նախօրինակ խորհրդանշանը նախագծվել է Սան Ֆրանցիսկոյի խորհրդաժողովի համար: Չնչին փոփոխություններից հետո 1946 թ. դեկտեմբերի 7-ին այն հաստատվեց որպես ՄԱԿ-ի խորհրդանշան: Խորհրդանշանի հիմքում աշխարհի քարտեզն է՝ եզերված ձիթապտղի ճյուղերից հյուսված պսակով: Աշխարհի քարտեզը կենտրոնացած է Հյուսիսային բևեռի շուրջը և ձգվում է մինչև հարավային լայնության 60-րդ աստիճանը. այս նախագծումը հնարավորություն է տալիս պատկերելու բոլոր պետությունները՝ միաժամանակ դրանցից ոչ մեկին կենտրոնական դիրքում չդնելով, ինչը համահունչ է բոլոր պետությունների հավասարության սկզբունքին: Ձիթապտղի ճյուղերը խաղաղություն են խորհրդանշում: Նախնական խորհրդանշանը ոսկեգույն էր՝ գորշերկնագույն ֆոնով, իսկ ջրային ողջ տարածքը սպիտակ էր:

Դրոշը

Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական դրոշն ընդունվել է 1947 թ. հոկտեմբերի 20-ին: Այն կազմված է ՄԱԿ-ի սպիտակ պաշտոնական խորհրդանշանից կապույտ ֆոնին: Խորհրդանշանը դրոշի բարձրության կեսի չափով է և տեղակայված է ուղիղ կենտրոնում:

Միավորված ազգերի կազմակերպություն

Միջազգային կազմակերպություններն ունեն ներքին կառուցվածք՝ վարչական մարմին, վեճերի լուծման մարմիններ, ներկայացուցչական մարմիններ, որտեղ այդ կազմակերպությանն անդամակցող պետությունների ներկայացուցիչները հավաքվում են, քննարկումներ կազմակերպում և որոշումներ ընդունում: Որոշումները, որպես կանոն, պարտադիր են լինում անդամ պետությունների համար:

Ներկայացնենք Միավորված ազգերի կազմակերպության ներքին կառուցվածքը՝ որպես օրինակ:

ՄԱԿ-ի մարմիններն են՝ ***Ընդհանուր վեհաժողովը (Գլխավոր ասամբլեան), Արդարադատության միջազգային դատարանը, Անվտանգության խորհուրդը, Տնտեսական և սոցիալական խորհուրդը, Խնամակալության խորհուրդը, Քարտուղարությունը:***

<u>Երկրորդ քայլով առաջարկում ենք ուսուցչին</u>

ա) *Գրատախտակին պատկերել ստորև ներկայացված աղյուսակը և հանձնարարել սովորողներին, օգտվելով դասանյութից, աղյուսակի համապատասխան բաժնում խմբով, զույգով կամ անհատապես լրացնել ՄԱԿ-ի մարմինների գործառույթները:*

բ) *Այդ նույն աշխատանքը կարելի է կատարել նախապես տրված բաշխման նյութի օգնությամբ: Աղյուսակի ստորին հատվածում խառը թվարկված են ՄԱԿ-ի մարմինների գործառույթները: Հանձնարարվում է սովորողներին, նախապես ծանոթանալով դասանյութին, համապատասխան գործառույթները տեղադրել աղյուսակի աջ մասում:*

Բաշխման նյութ

ՄԱԿ-ի մարմինները	գործառույթները
Ընդհանուր վեհաժողով	
Արդարադատության միջազ-գային դատարան	
Անվտանգության խորհուրդ	
Տնտեսական և սոցիալական խորհուրդ	
Խնամակալության խորհուրդ	
Քարտուղարություն	

- ✓ Իրավունք ունի ռազմական ուժ կիրառելու որոշում կայացնել:
- ✓ Որոշակի տարածքների նկատմամբ իրականացնում է խնամակալություն:
- ✓ Լուծում է պետությունների միջև առաջացող վեճերը:
- ✓ Պարտավորություն ունի պահպանել միջազգային խաղաղությունը և անվտանգությունը:
- ✓ Կազմակերպում է քաղաքական երկխոսություններ:
- ✓ Համակարգում է պետությունների քաղաքականությունը:
- ✓ ՄԱԿ-ի ներկայացուցչական մարմին է:
- ✓ Ընդունում է խորհրդատվական բնույթի բանաձևեր:
- ✓ Պատասխանատու է ՄԱԿ-ի աշխատանքների անխափան կազմակերպման համար:
- ✓ Տալիս է խորհրդատվական եզրակացություններ:
- ✓ Իրականացնում է քաղաքականության վերանայում:
- ✓ Որոշումները պարտադիր են կատարման համար բոլոր պետությունների կողմից:

Օգնություն ուսուցչին

Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ է դարձել 1992 թվականի փետրվարին: Երևանում գործում է ՄԱԿ-ի գրասենյակը (1992 թվականից):

ՄԱԿ-ը Ղարաբաղյան հիմնախնդրին անդրադարձել է դեռևս մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը:

1991 թվականի մարտի 5-ին ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովում քննարկվել է ԼՂԻՄ-ում տիրող իրավիճակը և նշվել, որ Արցախում ոտնահարվում են հայ բնակչության ազատությունները, նրա ինքնորոշման իրավունքը: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը (ԱԽ) Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ 1993 թվականին ընդունել է չորս բանաձև:

822 բանաձևը (ընդունվել է ապրիլի 30-ին) պահանջել է ռազմական գործողությունների անհապաղ դադարեցում, հրադադարի հաստատում և տեղական հայկական ուժերի դուրսբերում Քելբաջարի շրջանից: Կոչ է արել բոլոր կողմերին անհապաղ վերսկսել ԵԱՀԽ Մինսկի խմբի

խաղաղ գործընթացի շրջանակներում հակամարտության կարգավորման բանակցությունները:

853 բանաձևը (հուլիսի 29) հակամարտության երկու կողմերին կոչ է արել կատարել 822 բանաձևի պահանջները, դատապարտել է Ադրբեջանին հայաբնակ շրջանների ռմբակոծման և քաղաքացիական բնակչության վրա հարձակումների համար, դատապարտել է Հայաստանին, որպես պատասխան քայլ հայկական ուժերի կողմից Աղդամ քաղաքի գրավումը:

Մինչև օգոստոսի 8-ը տևած նիստում ընդունվել է «ՄԱԿ-ի ԱԽ 822 և 853 բանաձևերի իրականացման անհետաձգելի միջոցառումների ժամանակացույցը»:

874 բանաձևը (հոկտեմբերի 14) կոչ է արել կողմերին արդյունավետ և մշտական դարձնել ուղիղ բանակցությունների միջոցով հաստատված զինադադարը, վերահաստատել է ԱԽ-ի լիակատար աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող խաղաղ գործընթացին, ողջունել Մինսկի խմբի առաջարկած ԱԽ 822 և 853 բանաձևերի իրականացման անհետաձգելի միջոցառումների հարմարեցված ժամանակացույցը և կոչ է արել կողմերին անհապաղ իրականացնել այդ ժամանակացույցում մատնանշված միջոցառումները:

884 բանաձևը (նոյեմբերի 12) տագնապով նշել է Ադրբեջանի կողմից հրադադարի խախտումն ու ռազմական գործողությունների ծավալումը, և որպես հետևանք ու պատասխան հայկական ուժերի կողմից Զանգելանի շրջանի և Հորադիզ քաղաքի գրավումը:

<u>Քննարկման հարց</u>

-Ի՞նչ եք կարծում, կարևորո՞ւմ ենք մենք արդյոք մեր երկրի անդամակցությունը ՄԱԿ-ի կառույցին: Հիմնավորել պատասխանը:

ԳԼՈՒԽ 5.

ՄԱՐԴԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 1-2. Ի՞նչ է քաղաքականությունը

Թեմայի խորհուրդը

Քաղաքականությունը համատեղ ապրելու արվեստ է:

(Պլատոն)

Թեմայի ուսումնասիրման նպատակը

Իմանալ քաղաքականության բնորոշ գծերը և տեսակները, ինչպես նաև կարողանալ մասնակցել քաղաքականության մշակմանը:

Դասի ընթացքը

Առաջարկում ենք ուսուցչին դասն սկսել հետևյալ ներածականով:

Որպես սկիզբ ուսուցիչը հակիրճ ներկայացնում է քաղաքականության նկարագիրն ու հիմնական հատկանիշները՝ նշելով, որ *քաղաքականությունը շատ լայն իմաստ ունի: Այն իր սուբյեկտներով, գործառույթներով, արժեքներով, նորմերով, ավանդույթներով և մշակույթով ապահովում է հասարակության տարբեր՝ տնտեսական, սոցիալական, հոգևոր-մշակութային ոլորտների միասնականությունը, և կարելի է ասել, որ այն հենց այդ ոլորտների էությունն արտահայտող երևույթ է:*

Այնուհետև առաջարկում է սովորողներին թվարկել կյանքի այնպիսի ոլորտներ, որոնք, ըստ նրանց, որևէ կապ չեն կարող ունենալ քաղաքականության հետ: Իհարկե, սովորողները կարող են ջանալ գտնել նմանատիպ մի ոլորտ, օրինակ՝ դպրոցը, թատրոնը, կինոն և այլն, սակայն, որպես ամփոփում այս փոքրիկ քննարկման, ուսուցիչն ասում է, որ քաղաքականությունն ամենուրեք է՝ և՛ դպրոցում, և՛ թատրոնում, և՛ կինոյում. կյանքի տարբեր ոլորտներն այսպես թե այնպես առնչվում են քաղաքականությանը:

Դասի հիմնական հատվածում ուսուցիչն անդրադարձ է կատարում **քաղաքականության ձևավորման պատմությանը**, որն այստեղ ներկայացված է բուրգի տեսքով: Պատմական զարգացման ուղեգիծը կարելի է ներկայացնել թե՛ ժամանակագրական աղյուսակով, թե՛ բուրգով, որի ստորին մասը քաղաքականության առաջացման նախնական փուլն է, իսկ վերին հատվածը բուն քաղաքականությունն է՝ այսօրվա ընկալմամբ: Ստորև ներկայացվում է քաղաքականության առաջացման պատմական գործընթացը: Այս բուրգը կարելի է անվանել ***քաղաքականության կենսագրության*** բուրգ (գծապատկեր 1): Առաջարկվում է ուսուցիչներին կիրառել տարբեր աղյուսակներ և գծապատկերներ, որոնք առավել բարդ նյութը դարձնում են մատչելի և հեշտ բացատրելի: Ուսուցիչն այդ աղյուսակը գծում է գրատախտակին՝ սովորողների օգնությամբ լրացնելով այն կամ առաջարկում է սովորողներին ինքնուրույն գծել և լրացնել՝ օգտվելով **բաշխման նյութ 1-ից:**

Բաշխման նյութ 1.

Քաղաքականության ձևավորումը պատմականորեն պայմանավորված է եղել ***քաղաքների առաջացման և զարգացման*** *հետ, երբ* ***արհեստների, առևտրի և մշակութային վերելքը*** *խթանեց քաղաքային կյանքի ակտիվացումը՝ հանգեցնելով քաղաքաբնակների սոցիալ-տնտեսական գործունեության կանոնակարգմանը և քաղաքների պաշտպանության կազմակերպմանը: Քաղաքակրթական առաջընթացին զուգահեռ՝ քաղաքներին բնորոշ դարձան սահմանները, համայնքները, ինքնատիպ կազմակերպական կառուցվածքը (ինքնակառավարումը), խորհրդանիշները (դրոշը, զինանշանը, օրհներգը) և իշխանությունը (ինքնիշխանությունը)՝ վերածելով դրանք* ***քաղաք-պետությունների (պոլիսների****): Աստիճանաբար քաղաք-պետություններում մարդկանց համատեղ գործունեության հենքի վրա ձևավորվեց քաղաքացիական կայուն կապերի ու հարաբերությունների «կարգավորիչ-ուղղորդող» համակարգը: Այդ համակարգի միջոցով ապահովվեց մարդկանց գործողությունների կարգավորվածությունը՝ պահանջելով հարգել և պահպանել հաստատված վարվելակերպի ու վարքագծի կանոնները: Փաստորեն քաղաքականությունը դարձավ քաղաքացիականություն և քաղաքացիական կյանքի կազմակերպման ու կառավարման գործողությունների ծրագիր, որի շնորհիվ ապահովվեց քաղաքացիների միջև կապերի ու հարաբերությունների կարգա-*

վորվածությունը և ուղղորդվածությունը: Քաղաքականությունը համախմբեց և միավորեց հասարակական կյանքի տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային ոլորտները՝ ապահովելով հասարակության միասնականությունը և կայունությունը:

Գծապատկեր 1



<u>Քննարկման հարցեր.</u>

1. Քաղաքների առաջացումը ինչպե՞ս կարող էր ազդել քաղաքականության ձևավորման վրա:
2. Որքանո՞վ էին կարևոր հաստատված վարվելակերպի ու վարքագծի կանոնները քաղաքականության ձևավորման գործում:

Իսկ գծապատկեր 2-ի օգնությամբ կարելի է բացատրել **քաղաքականություն** եզրույթի տարբեր իմաստները, բնութագիրը և այլն, քանի որ այս հասկացության բազմիմաստությունը կարող է իմաստային շփոթ առաջացնել սովորողների շրջանում:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ եզրույթը
Գծապատկեր 2

Իմաստը	Բացատրությունը/սահմանումը	Գործունեության նպատակը
Հայեցակարգ, ռազմավարություն, ծրագիր	Հանդես է գալիս որպես պետական իշխանության և ՏԻՄ-երի, ՔՀԿ-ների, ակտիվ քաղաքացիների և սոցիալական խմբերի կողմից ընդունվող որոշումների հաջորդականություն՝ ուղղված հասարակական նշանակության խնդիրների լուծմանը: Ենթադրում է հասարակական կյանքի կոնկրետ ոլորտի նպատակների և խնդիրների ուսումնասիրության արդյունքներ և առաջարկվող լուծումներ, որոշակի ժամանակահատվածում հասարակական կյանքի կոնկրետ ոլորտի նպատակների և խնդիրների իրագործման կոնկրետ միջոցառումները, արդյունքները և ժամկետները:	Հասարակական նշանակության խնդիրների լուծում
Իրավակարգ	Այն ներառում է հասարակական կյանքի կազմակերպման և վարվելակերպի կանոնները: Դրանք ենթադրում են իրավական ակտերի ընդունում և կայուն հասարակական հարաբերությունների կարգավորում՝ ապահովելով իրավունքի և օրենքի գերակայությունը:	Հասարակական կյանքի կազմակերպմանն ուղղված քայլեր
Մրցակցություն, պայքար	Նշանակում է հասարակական գործընթացներում մրցակցություն և պայքար, երբ հանուն իշխանության, ազդեցիկ կարգավիճակ և դիրք ունենալու կամ պահպանելու համար մրցակցում և պայքարում են քաղաքականության սուբյեկտները (դերակատարները):	Քաղաքականության սուբյեկտների՝ հանրային իշխանությունն ունենալու/ պահպանելու ցանկություն

@ Առաջադրանք

Օգտվելով վերը բերված աղյուսակից՝ փորձել հասկանալ և նշել, թե քաղաքականություն եզրույթի որ իմաստն է ներկայացված ստորև բերված մտքերից յուրաքանչյուրում: Կազմել վերոհիշյալ երեք իմաստներով նախադասություններ:

1. Նոր հիմնադրված կրթօջախի վարած կրթական քաղաքականությունը բխում է մեր երկրի շահերից: ----------
2. ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգի առաջարկած քաղաքականությունը մոտ ժամանակներս կտա իր շոշափելի արդյունքները: ----------
3. Երկար քննարկումներից հետո հայտնի իրավաբանը որոշեց մտնել քաղաքականություն: ----------
4. ՀՀ արտաքին քաղաքականությունը մեծապես պայմանավորված է հայկական սփյուռքի գործոնով:----------
5. Քաղաքականության մեջ հաջողության հասնելու բոլոր միջոցներն ընդունելի են:----------
6. ՀՀ ընտրական օրենսգիրքը՝ որպես ընտրությունների ողջ ընթացքը կարգավորող քաղաքականության վավերացում, վիճելի կողմեր ունի: ----------

Սովորողների հետ աշխատանքը քննարկելուց հետո ուսուցիչը ամփոփում է՝ ասելով, որ քաղաքականությունը **հայեցակարգ է, ռազմավարություն և ծրագիր**, որոնք քաղաքականության սուբյեկտների կողմից նախապատրաստվում, ընդունվում, իրականացվում և վերահսկվում են **իրավակարգի շրջանակներում**: Քաղաքականությունը նաև **պայքար է և մրցակցություն** քաղաքականության սուբյեկտների միջև, որոնք ցանկանում են ունենալ կամ պահպանել հանրային իշխանությունը: Առաջինը բնութագրում է **քաղաքականության կազմակերպական կողմը,** երկրորդը՝ **կանոնները և նորմերը**, իսկ երրորդը՝ **շահերը և պահանջմունքները:**

Ամփոփումից հետո ուսուցիչն անցնում է թեմայի հաջորդ բաժիններին՝ քաղաքականության գործառույթներին ու տիպաբանությանը:

Դրանք բացատրելու համար առաջարկվում է հետևյալ առաջադրանքը:

Գործնական առաջադրանք 1.

Սովորողները բաժանվում են չորս խմբի կամ զույգերի՝ կախված դասարանի թվաքանակից: Օգտվելով նախապես դասարան բերված թերթերից՝ տպագրված վերջին օրերին կամ համացանցից՝ առաջարկվում է խմբերին կարդալ և պատասխանել հետևյալ հարցերին (լուրերը կարող են լինել տարբեր բնագավառներից): Թերթերի կամ համացանցի բացակայության դեպքում առաջարկում ենք օգտվել ստորև տրված **չորս բաշխման նյութերից:**

1. Կյանքի ո՞ր բնագավառին է վերաբերում ձեր կարդացած լուրը:
2. Ի՞նչ եք կարծում, տվյալ լուրը որևէ առնչություն ունի՞ քաղաքականության հետ: Եթե այո, ապա ինչպիսի՞:

Բաշխման նյութ 1.

Սահմանային ուժեղացված հսկողություն ներկրվող ձվի նկատմամբ

Նոյեմբեր 27, 2018 12:04

Օրենսդրության պահանջներին չհամապատասխանող սննդային ձվի ներմուծումը կանխելու նպատակով Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը նոյեմբերի 27-ից խստացրել է սահմանային պետական վերասկողությունը երրորդ երկրներից և Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդային ձվի նկատմամբ: Խստացման համար հիմք է ընդունվել նաև Ռուսաստանի Դաշնությունում «Կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ գոտիավորման վերաբերյալ» որոշումը՝ կապված այդ երկրի մի շարք շրջաններում արձանագրված թռչնի գրիպ հիվանդության հետ (բարձր ռիսկայնությամբ պայմանավորված՝ գործում են ՀՀ ներկրելու սահմանափակումներ):

Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն

Բաշխման նյութ 2.

Անցյալ տարվա սեպտեմբեր ամսի համեմատ՝ Սևանա լճի մակարդակը բարձրացել է երեք սանտիմետրով: Դա նշանակում է, որ Սևանում այժմ մոտ 40 միլիարդ խորանարդ մետր ավելի ջուր կա: Այս մասին այսօր խորհրդարանում հայտարարեց ՀՀ բնապահպանության նախարար Էրիկ Գրիգորյանը՝ «Սևանա լճի հիմնախնդիրները» թեմայով ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի կազմակերպած խորհրդարանական լսումների ժամանակ: Մոտ մեկ ամիս առաջ կառավարության ներկայացրած նախագիծը՝ Սևանից 40 միլիոն խորանարդ մետր լրացուցիչ ջրառի մասով, հանրության շրջանում կրկին անհամաձայնություններ առաջացրեց: Դա է պատճառը, որ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ Արայիկ Հովհաննիսյանը նախաձեռնել է այս լսումները: Ի դեպ, երեկ կառավարությունը հաստատել է Սևանա լճի վերաբերյալ 2019 թվականի գործողությունների ծրագիրը:

https://www.aravot.am/2018/09/28/983907/

© 1998 - 2018 Առավոտ – Լուրեր Հայաստանից

Բաշխման նյութ 3.

Կիրակի Բոսնիա և Հերցեգովինայում (ԲևՀ) բացվել են ավելի քան 5,5 հազար ընտրական տեղամասեր, որտեղ անցկացվում են համընդհանուր ընտրություններ, հաղորդում է ՏԱՍՍ-ը՝ վկայակոչելով երկրի Գլխավոր ընտրական հանձնաժողովին (ԳԸՀ): ԲևՀ Դաշնության երկու սուբյեկտների՝ Սերբական Հանրապետության (ՍՀ) և Բոսնիա և Հերցեգովինայի դաշնության (ԲևՀԴ), ինչպես նաև Բռչկո շրջանից ընտրողները պետք է 7494 թեկնածուներից 518 մարդու ընտրեն, որոնք հանրապետությունում բոլոր առանցքային պաշտոնները կզբաղեցնեն: Երկրում ընտրություններին հետևում է 6424 դիտորդ, այդ թվում՝ 1.5 հազար օտարերկրացի: Քա-

ղաքապետարաններում ընտրական գործընթացը վերահսկվում է քաղաքական կուսակցությունների մոտ 60 հազար ներկայացուցիչների կողմից: Վերլուծաբանների կարծիքով՝ ընտրողների մասնակցությունը անկախությունից հետո ամենացածրն է լինելու: Քվեարկության նախօրեին բնակչության ավելի քան 40 տոկոսը պատրաստ էր մասնակցելու ընտրություններին: Վերլուծաբանները դա բացատրում են ընտրողների հոգնածությամբ քաղաքականության մեջ եղած նույն դեմքերից, ինչպես նաև թեկնածուների քաղաքական ծրագրերի միօրինակությունից և անփոփոխելիությունից:

https://www.aravot.am/2018/11/27/995659/

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Բաշխման նյութ 4.

Հոկտեմբերի 5-ին Փարիզի Լեզ Էնվալիդ համալիրի բակում սկսվել է Շառլ Ազնավուրի հրաժեշտի արարողությունը: Արարողությանը, Շառլ Ազնավուրի ընտանիքի անդամներից բացի, ներկա էր Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, երկրի ողջ պետական վերնախավը: Շառլ Ազնավուրի հոգեհանգստյան արարողությանը մասնակցում էին ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանն ու վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Վեհափառը և հոգևոր ու պետական այլ այրեր: Մեծն Ազնավուրին առաջինը հրաժեշտի խոսք հնչեցնելու պատիվը տրվեց Նիկոլ Փաշինյանին: Ապա խոսեց Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը: Իր գնահատանքի խոսքում ՀՀ վարչապետն ասաց, որ 8 տասնամյակ Ազնավուրի անունը ժպիտ է դրոշմել միլիոնավոր դեմքերի վրա, փայլ է ներարկել միլիոնավոր աչքերի մեջ: «Այս անունը 2018-ի հոկտեմբերի 1-ին մի պահ կանգնեցրեց Երկիր մոլորակի և միջազգային կյանքի ընթացքը»,- ասաց Փաշինյանը Վաղինակ Ազնավուրյանի մասին, որ պետք է հետո Շառլ Ազնավուր դառնար: Հայերեն երգի հնչյունները թևածեցին Լեզ Էնվալիդ համալիրի կամարների ներքո: Ապա հետևեց նախագահ Մակրոնի հուզումնալից խոսքը: Ազնավուրը հեռացավ, նրա հետևից հնչեցին ամենավերջին բուռն ծափահարությունները:

https://www.aravot.am/2018/10/05/985491/

© 1998 - 2018 Առավոտ – Լուրեր Հայաստանից

Լուրերը վերցված են «Առավոտ» օրաթերթի պաշտոնական կայքէջից և ***news.am*** կայքից:

Աշխատանքը վերլուծելուց և ամփոփելուց հետո ուսուցիչը, նույն բաշխման նյութերը օգտագործելով, սովորողների հետ քննարկում է քաղաքականության տիպաբանությունը և առաջարկում կատարել գործնական աշխատանք:

Գործնական առաջադրանք 2.

Օգտվելով դասանյութից (**բաշխման նյութ 5)՝** լրացնել ստորև բերված աղյուսակը և հիմնավորել, թե քաղաքականության որ տիպաբանությունն է ներկայացված (ըստ հասարակական ոլորտների, մակարդակների, ժամկետայնության, քաղաքականության սուբյեկտների, պետության գործառույթների և այլն): Նաև պատասխանել հետևյալ հարցին.

- Քաղաքականության բազմաթիվ գործառույթներից ո՞րն է արտացոլված ձեր կարդացած լուրում:

Բաշխման նյութ 5.

- ***Ըստ հասարակական կյանքի ոլորտների***՝ *տնտեսական, սոցիալական, հոգևոր-մշակութային.*
- ***Ըստ մակարդակների***՝ *տեղական (գյուղ, քաղաք), տարածքային (մարզային), համապետական (ազգային), տարածաշրջանային (Հարավային Կովկաս, եվրասիական, եվրոպական), միջազգային, համաշխարհային (գլոբալ).*
- ***Ըստ քաղաքականության սուբյեկտների***՝ *հանրային, կուսակցական, մարդակենտրոն, քաղաքացիակենտրոն.*
- ***Ըստ պետական իշխանության մարմինների***՝ *խորհրդարանական, նախագահական, դատական, գործադիր.*
- ***Ըստ պետության գործառույթների***՝ *ներքին և արտաքին, պաշտպանական, անվտանգային, արդյունավետ, ռացիոնալ, զարգացման.*

- ***Ըստ քաղաքական վարչակարգի***՝ *ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական.*
- ***Ըստ ծրագրային լուծումների***՝ *ռազմավարական և մարտավարական, հրատապ և անհետաձգելի, կառուցողական, նորարարական և գիտելիքահեն.*
- ***Ըստ թիրախային խմբերի***՝ *երիտասարդական, կանանց, երեխաների, հաշմանդամների, փախստականների և միգրանտների իրավունքների պաշտպանվածության:*

Աղյուսակ 1.

Լուրեր	Ըստ հասարակական կյանքի ոլորտների	Ըստ մակարդակների	Ըստ քաղաքականության սուբյեկտների	Ըստ պետական իշխանության մարմինների	Ըստ պետության գործառույթների	Ըստ ծրագրային լուծումների	Ըստ թիրախային խմբերի
Բաշխման նյութ 1.							
Բաշխման նյութ 2.							
Բաշխման նյութ 3.							
Բաշխման նյութ 4.							
Բաշխման նյութ 5.	տնտեսական	համապետական	հանրային	գործադիր	ներքին	Ռազմավարական, հրատապ	բոլորին

Աղյուսակը լրացնելուց հետո ուսուցիչը քննարկում է սովորողների կատարած աշխատանքը:

Օգնություն ուսուցչին

(Օրինակը բերվում է, որպեսզի ուղղորդի ուսուցչին վերոհիշյալ աղյուսակը լրացնելու համար)

Բաշխման նյութ 5.

Հայաստանը միջազգային ներդրողների հետ բանակցում է նոր ատոմակայան կառուցելու համար: Այս մասին նոյեմբերի 21-ին մամուլի ասուլիսի ժամանակ ասաց էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պաշտոնակատար Գարեգին Բաղրամյանը: Նրա խոսքով՝ կոնկրետ առաջարկներ են ստացվում ռուս, ֆրանսիացի, չինացի ներդրողներից: «Մենք պետք է ուսումնասիրենք բոլոր առաջարկները, հասկանանք, թե որքանով են դրանք գրավիչ և համադրելի մեր պայմանների հետ, որից հետո արդեն համապատասխան որոշում կկայացնենք»,- ասաց Բաղրամյանը: Նա ավելացրեց, որ հայկական կողմը համապատասխան հաշվետվություն կներկայացնի ԱԷՄԳ Կառավարիչների խորհրդի հաջորդ նիստին (նոյեմբերի 28):

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Քաղաքականության գործառույթները ժամանակակից աշխարհում

1. Կառավարման և կարգավորման գործառույթ. քաղաքականությունը մշակվում և իրականացնում է հասարակության սոցիալական, տնտեսական և մշակութային գործընթացների կառավարումը՝ կարգավորելով դրանք:
2. Հասարակության ամբողջականության և կայունության ապահովման գործառույթ. քաղաքականությունը ձևավորում է հանրային նպատակները՝ սահմանելով կայուն զարգացման հիմնական թիրախները, ուղենիշներն ու արժեքները՝ հայթայթելով դրանց համար անհրաժեշտ ռեսուրսները:

3. Քաղաքական սոցիալականացման գործառույթ. քաղաքականությունը ձևավորում է անհատի քաղաքական գիտակցությունը՝ նպաստելով նրա քաղաքացիական մասնակցությանը և ներառելով նրան հանրային որոշումների ընդունման գործընթացում:
4. Քաղաքակրթման գործառույթ. քաղաքականությունը ձևավորում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության քաղաքակիրթ ընթացակարգեր՝ ապահովելով պետական իշխանության մարդակենտրոնությունը, խաղաղ համակեցությունը, հանդուրժողականությունը, ներդաշնակությունն ու համերաշխությունը:
5. Համախմբվածության և հավաքականության ապահովման գործառույթ. քաղաքականությունը համակարգում է հասարակական փոխհարաբերություններն ու կապերը:

@ Առաջադրանք

Ուսուցիչը դասարանում ունի ՀՀ Սահմանադրությունը, նաև սովորողներին բաժանում է ՀՀ Անկախության հռչակագիրը, կարող է օգտագործվել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը: Օգտագործելով վերոհիշյալ աղբյուրները՝ սովորողները առանձնացնում են 2-3 հոդված, որոնք ամրապնդում են քաղաքականության գործառույթները հետևյալ կերպ:

Նմուշօրինակ

1. ***Կառավարման և կարգավորման գործառույթ***. քաղաքականությունը մշակում և իրականացնում է հասարակության սոցիալական, տնտեսական և մշակութային գործընթացների կառավարումը՝ կարգավորելով դրանք: ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածներ:
2. ***Հասարակության ամբողջականության և կայունության ապահովման գործառույթ***. քաղաքականությունը ձևավորում է հանրային նպատակները՝ սահմանելով կայուն զարգացման հիմնական թիրախները, ուղենիշներն ու արժեքները՝ հայթայթելով դրանց համար անհրաժեշտ ռեսուրսները:

Վերոհիշյալ նպատակները մենք կարող ենք գտնել ՀՀ Անկախության հռչակագրում, ՀՀ Սահմանադրության մեջ, դրանց գործարկումը մենք տեսնում ենք իշխանությունների վարած քաղաքականության, այսինքն՝ ամենօրյա գործունեության մեջ:

Օրինակ

ՀՀ Անկախության հռչակագիր. «Հայաստանի Հանրապետությունը ապահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից»: «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»:

3. Քաղաքական սոցիալականացման գործառույթ. քաղաքականությունը ձևավորում է անհատի քաղաքական գիտակցությունը՝ նպաստելով նրա քաղաքացիական մասնակցությանը և ներառելով նրան հանրային որոշումների ընդունման գործընթացում:

Օրինակ
ՀՀ Սահմանադրություն

ՀՈԴՎԱԾ 28. Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք:

Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք:

Կուսակցություններ և արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի ծառայողների և պետական ծառայողների առանձին խմբերի նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 29. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունք:

ՀՈԴՎԱԾ 30. Տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն անմիջականորեն և կամքի ազատ արտահայ-

տությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետության կառավարմանը մասնակցելու իրավունք:

4. ***Քաղաքակրթման գործառույթ***. քաղաքականությունը ձևավորում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության քաղաքակիրթ ընթացակարգեր՝ ապահովելով պետական իշխանության մարդակենտրոնությունը, խաղաղ համակեցությունը, հանդուրժողականությունը, ներդաշնակությունն ու համերաշխությունը:

Օրինակ

ՀՀ Անկախության հռչակագիր. «Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում ապահովում է խոսքի, մամուլի, խղճի ազատություն, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացում»:

ՀՀ Սահմանադրության ողջ 2-րդ գլուխը. «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները», օրինակ.

ՀՈԴՎԱԾ 18. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:

Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին, եթե սպառվել են ներպետական իրավական պաշտպանության բոլոր միջոցները:

5. ***Համախմբվածության և հավաքականության ապահովման գործառույթ.*** քաղաքականությունը համակարգում է հասարակական փոխհարաբերություններն ու կապերը:

ՀՀ Սահմանադրության հոդվածներ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1

Անդրադարձ

Որպես անդրադարձ, առաջարկվում է պատասխանել հետևյալ հարցերին: Սովորողները ասում են, թե տվյալ թեմայի վերաբերյալ մինչ դասը ինչ գիտեին և ինչ սովորեցին դասի ավարտին:

Ինչ գիտեի	**Ինչ սովորեցի**

Քննարկման հարցեր

1. Քաղաքականության իրականացրած գործառույթներից ո՞րն (որո՞նք) է (են) առաջնային, ինչո՞ւ:
2. Որքանո՞վ է արդարացված քաղաքականության գերակայությունը հասարակական կյանքում:

ԳԼՈՒԽ 6.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ՀԻՄՆԱՏԱՐՐԵՐԸ

Թեմայի խորհուրդը

Քաղաքական համակարգը նման է ժամացույցի մեխանիզմի, որի գործարկման համար անհրաժեշտ է դրա բոլոր բաժինների ներդաշնակ ու անխափան աշխատանքը:

Թեմայի նպատակը

Իմանալ քաղաքական համակարգի և ենթահամակարգերի բնորոշ գծերը: Կարողանալ դասակարգել քաղաքական համակարգի տեսակները:

ԴԱՍ 1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Դասի ընթացքը

Առաջարկվում է ուսուցչին դասն սկսել հետևյալ հարցի քննարկմամբ.

- Ի՞նչ եք կարծում, մարդն իր ծնված օրվանից ինչ կարիքներ ու ցանկություններ ունի, և դրանք տարիների ընթացքում փոփոխվո՞ւմ են, թե՞ ոչ:

Անշուշտ, կինչեն տարբեր պատասխաններ, ինչպես, օրինակ՝ սնվելու, քնելու, հանգստանալու, խաղալու, տուն ունենալու, խոսելու, կատակներ անելու, կարդալու, լսելու, երգելու, շրջապատը մաքրելու, բանավիճելու, մարդկանց օգնելու, դպրոց գնալու, թատրոն, համերգ հաճախելու, բանաստեղծություն գրելու, գործ սկսելու, ղեկավար դառնալու, ամուսնանալու, այգին մշակելու, երեխա ունենալու, ընտանիքը պաշտպանելու և շատ այլ կարիքներ ու ցանկություններ: Սովորողների կողմից հնչեցված բոլոր պատասխանները գրվում են գրատախտակին: Այնուհետև խմբավորման օգնությամբ դրանք դասարակարգվում են արդեն ուսուցչի առաջարկած աղյուսակում:

Աղյուսակը բաղկացած է քաղաքական համակարգի չորս ենթահամակարգերից.

Քաղաքական	**Սոցիալական**	**Տնտեսական**	**Մշակութային**
Բանավիճել Ղեկավար դառնալ Ընտանիքը պաշտպանել	Սնվել Քնել Խոսել Դպրոց գնալ Կատակներ անել Լսել Շրջապատը մաքրել Մարդկանց օգնել Ամուսնանալ Երեխա ունենալ	Տուն ունենալ Գործ սկսել Այգին մշակել	Հանգստանալ Խաղալ Կարդալ Երգել Բանաստեղծություն գրել Թատրոն, համերգ հաճախել

Փաստորեն, այս աղյուսակից պարզ է դառնում, որ սովորողների թվարկած բոլոր կարիքներն ու ցանկություններն առնչվում են քաղաքական համակարգին, քանի որ այդ համակարգը կազմված է կյանքի բոլոր բնագավառներն արտացոլող չորս ենթահամակարգերից՝ **քաղաքական** (*ապահովում է քաղաքական պահանջմունքների բավարարումը, համընդհանուր շահերի և նպատակների սահմանումը՝ համախմբելով ռեսուրսները դրանց հասնելու համար*), **սոցիալական** (*ապահովում է սոցիալական պահանջմունքների բավարարումը՝ իրավական նորմերի միջոցով կարգավորելով հարաբերությունները և նվազեցնելով բախման հավանականությունը*), **տնտեսական** (*ապահովում է նյութական պահանջմունքների բավարարումը, նյութական բարիքների արտադրությունը և սպառումը*) և **մշակութային** (*ապահովում է մշակութային արժեքների, նորմերի և ավանդույթների սերնդափոխությունը՝ պահպանելով գոյություն ունեցող կարգը և «օրինակելի» վարքագծի վերարտադրությունը*):

Իսկ ահա քաղաքական համակարգի տեսակներն առավել մատչելի ուսումնասիրելու համար ուսուցիչը կազմակերպում է «Ավտոբուսային կանգառ» խմբային աշխատանքը, որը հնարավորություն է տալիս աշխատելու բոլոր խմբերի հետ՝ ծանոթանալով այլ խմբերի տեսակետներին և հավելելով սեփական տեսակետը:

(Մեթոդի նկարագրությունը տե՛ս հավելվածում):

Նախ՝ դասանյութի օգնությամբ սովորողները ծանոթանում են քաղաքական համակարգի դասակարգման տարածված ձևերից երեքին.

- ***Ժողովրդավարական****:* Հանրային իշխանությունը պատկանում է ժողովրդին և ժողովրդաիշխանությունն իրականացնում է քաղաքակիրթ ընտրությունների և հանրաքվեների, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:
- ***Ավտորիտար (անձնիշխանություն)****:* Հանրային իշխանության ձևավորման և իրականացման մենաշնորհը պատկանում է պետական իշխանության մարմիններից մեկի ղեկավարին, որը կարողանում է տարածել սեփական քաղաքական ազդեցությունը և վերահսկել հասարակության քաղաքական կյանքը:
- ***Տոտալիտար (ամբողջատիրական)*****:** Պետական իշխանության մարմինները ձգտում են վերահսկել կամ էլ վերահսկում են հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Ամբողջատիրության պայմաններում հասարակական հարաբերությունները լիովին վերահսկվում են և ուղղորդվում:

Այնուհետև դասարանը համապատասխանաբար բաժանվում է երեք խմբի, յուրաքանչյուր խումբ նստում է իր համար նախատեսված սեղանի շուրջը: Նշենք, որ նախօրոք ուսուցիչը անվանակոչել է այդ սեղանները՝ ըստ քաղաքական համակարգի տվյալ ձևի, և յուրաքանչյուր խումբ, քայլ առ քայլ հետևելով ուսուցչի ցուցումներին, յուրացնում է նախ իրեն բաժին հասած քաղաքական համակարգի ձևերից մեկի նկարագիրը, գրում է երկու միտք դրա վերաբերյալ, հետո իր խմբով մոտենում է մյուս երկու սեղաններին և հերթականությամբ մեկական միտք ավելացնում նաև մյուս համակարգերի վերաբերյալ:

Այսպես ձևավորվում է երեք կանգառ՝ հետևյալ անուններով և համապատասխան հարցով (անունները պետք է բնորոշեն տվյալ քաղաքական համակարգի ձևը և կարող են հումորային բնույթ կրել)։

1. Ազատության հրապարակ
Ի՞նչ նկարագիր ունի ժողովրդավարական համակարգը։

2. Լենինի հրապարակ
Ամբողջատիրական համակարգում ինչպե՞ս են վերահսկվում հասարակական կյանքի բոլոր բնագավառները։

3. Պինոչետի հրապարակ
Ավտորիտար պետության ղեկավարն ի՞նչ լիազորություններ ունի։

Այսպես այն խմբի անդամները, որոնք պատասխանատու են ժողովրդավարական քաղաքական համակարգի համար, այսինքն՝ Անկախության հրապարակի ներկայացուցիչները դասանյութի համապատասխան հատվածը կարդալուց հետո կարող են գրել հետևյալ երկու միտքը.

1. Հանրային իշխանությունը պատկանում է ժողովրդին։

2. Ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների միջոցով ձևավորվում են իշխանությունները։

Այնուհետև ժամացույցի սլաքի ուղղությամբ շարժվում են առաջ՝ մեկական միտք ավելացնելով մյուս խմբերի՝ արդեն լրացված թղթերի վրա։ Իսկ ահա երկրորդ խումբը իրեն վերաբերող համակարգի երկու բնորոշումը գրելուց հետո, ժամացույցի սլաքի ուղղությամբ շարժվելով, հայտնվում է առաջին սեղանի մոտ և արդեն գրված երկու մտքին ավելացնում իր միտքը. օրինակ՝

3. Այս համակարգին բնորոշ են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը, բազմազանությունը և բազմակարծությունը։

Հաջորդ երրորդ խումբը, գալով առաջին սեղանի մոտ, նոր միտք է ավելացնում.

4. Այս համակարգին բնորոշ է քաղաքական մեծամասնության և փոքրամասնության գործընկերությունը:

Այսպիսով, մեթոդն ավարտին է հասնում, երբ բոլոր խմբերը մոտենում են բոլոր սեղաններին և ավելացնում մեկական միտք: Դասն ամփոփվում է յուրաքանչյուր խմբի՝ իր թեմայի ներկայացմամբ՝ ըստ բոլորի կողմից կատարված գրառումների:

Հաջորդ քայլին ուսուցիչը, որպես դասի ամփոփում, առաջարկում է իրավիճակի քննարկում:

Իրավիճակի քննարկման համար (իրավիճակը կարող է հորինվել ուսուցչի կողմից կամ կարող է վերցվել օրվա լրահոսից)

«Միասնությունն ուժ է» միավորումը, որում ընդգրկվել է 11 ընդդիմադիր կուսակցություն, չի ընդունում Վրաստանում նոյեմբերի 28-ին կայացած նախագահական ընտրությունների երկրորդ փուլի արդյունքները: Ընդդիմությունը մատնանշում է մի շարք լուրջ խախտումներ, որոնք հայտնաբերվել են միջազգային դիտորդների կողմից: Դրանք, մասնավորապես, ընտրողներին ահաբեկելու և ընտրակաշառք բաժանելու դեպքերն են, կրկնակի քվեարկությունն ու ադմինիստրատիվ ռեսուրսի օգտագործումը: Այսօր Թբիլիսիում ընդդիմությունն անցկացրել է խաղաղ բողոքի ցույց, որի ժամանակ հնչեցվել են արտահերթ խորհրդարանական ընտրությունների և ընտրական համակարգի բարեփոխումների վերաբերյալ պահանջները: Միավորված ընդդիմությունն իշխանություններին վերջնաժամկետ է ներկայացրել մինչև դեկտեմբերի 16-ը, որն ընտրությունների երկրորդ փուլում հաղթած Սալոմե Զուրաբիշվիլիի երդմնակալության օրն է: Համամասնական խորհրդարանական արտահերթ ընտրությունների հետ մեկտեղ ընդդիմադիրները պահանջում են ընտրական համակարգի լայնամասշտաբ բարեփոխումներ, այդ թվում՝ տարածքային ընտրական հանձնաժողովների վերացում: Բարեփոխումների իրագործման և «ճգնաժամից ելքեր գտնելու» համար ընդդիմությունն իշխանություններին առաջարկում է նստել բանակցությունների սեղանի շուրջը՝ ստեղծելով համատեղ աշխատանքային խումբ:

https://news.am/arm/news/484139.html

<u>Քննարկման հարց.</u>

- Հարցի լուծման ինչ մոտեցում կցուցաբերի յուրաքանչյուր քաղաքական համակարգի ղեկավար կամ ղեկավար մարմին:

ԴԱՍ 5. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ (ԼԻԴԵՐՈՒԹՅՈՒՆ)

Թեմայի խորհուրդը

Ժողովրդավարական երկրներում քաղաքական առաջնորդների և ղեկավարների գործունեությունը լրացնում են միմյանց, իսկ մրցակցությունն ու պայքարը հնարավորություն են տալիս ապահովելու կառավարման գործառույթները:

Թեմայի ուսումնասիրման նպատակը

Բնութագրել քաղաքական առաջնորդին և առանձնացնել նրան բնորոշող էական հատկանիշները: Կարողանալ գնահատել քաղաքական առաջնորդի դերը հասարակական կյանքում:

Դասի ընթացքը

Առաջարկվում է ուսուցչին դասն սկսել հետևյալ վարժությամբ:

Դասի սկզբին ուսուցիչը, առանց ներկայացնելու դասի թեման, առաջարկում է սովորողներին միասին դասարանի կենտրոնում կառուցել հնգաթև աստղ, սակայն դա անել առանց խոսելու: Ուսուցիչը, առանց միջամտելու, հետևում է մասնակիցների քայլերին և առանձնացնում այն սովորողին (սովորողներին), որ կարողանում է կարգավորել այդ աշխատանքը: Երբ աստղն արդեն պատրաստ է, ուսուցիչը հարց է ուղղում բոլորին.

? - Ինչ եք կարծում, առանց որևէ բառ արտասանելու հեշտ էր աստղ կառուցելը:

- Իսկ ամենից շատ ո՞վ օգնեց աշխատանքի արագ կազմակերպմանը:

Սովորողները կհնչեցնեն տարբեր պատասխաններ, իհարկե, կնշեն այն երեխաներին, որոնք օգնեցին մնացած երեխաներին այդ դժվարին գործում: Պատասխանները լսելուց հետո ուսուցիչն ասում է դասի թեման և շեշտում, որ այն երեխաները, որոնք օգնեցին մյուսներին և կազմակերպեցին ողջ աշխատանքը, օժտված են առաջնորդական հմտություններով:

@ ***Առաջադրանք 1.***

Սովորողները, առանց որոշակի պայմանի, հերթով մոտենում են գրատախտակին և գրում իրենց կարծիքով առաջնորդին բնորոշ հատկանիշները և համեմատում դասագրքում ներկայացված աղյուսակին, որտեղ բերված է առաջնորդի որակական հատկանիշների ընդարձակ ցանկը: Այնուհետև իրենց գրած հատկանիշները խմբավորում են ըստ որակների՝ ֆիզիոլոգիական, հոգեբանական, ինտելեկտուալ, անձնային:

Առաջնորդին բնորոշ որակական հատկանիշների համեմատական սանդղակի օրինակ

Որակներ	**Սովորողների նշած հատկանիշները**	**Դասանյութում բերված հատկանիշները**
Ֆիզիոլոգիական	Բարձրահասակ, ժպտերես, մարզված, արագաշարժ և այլն	Հաճելի տեսք, ամուր առողջություն, բարձր աշխատունակություն և այլն
Հոգեբանական	Զուսպ, շփվող, հավասարակշռված, համարձակ և այլն	Անձի տեսակը՝ էքստրավերտ, ինտրավերտ, խառնվածքը և այլն
Ինտելեկտուալ	Կրթված, շատ կարդացած, զարգացած, լայնախոհ, բանիմաց և այլն	Ինտելեկտի բարձր մակարդակ, բանականություն, դատողականություն և այլն

Անձնային	Կամային, մարդասեր, կարեկցող, հոգատար, պատասխանատու, բարի և այլն	Գործնական հմտություններ՝ ճշտապահություն, ինքնուրույնություն Վերլուծական հմտություններ՝ ինքնուրույնություն, ճկունություն Բարյացակամություն, կարեկցանք, ազնվություն և այլն

Վերլուծելով կատարված աշխատանքը՝ ուսուցիչը և սովորողները եզրակացնում են, որ նշված շատ հատկանիշներ համընկան դասանյութում բերված հատկանիշներին, այնուհետև առանձնացնում են այն որակները, որոնք առավել կարևոր են առաջնորդի համար:

@ *Առաջադրանք 2.*

Հաջորդ քայլով ուսուցիչը դասարանը բաժանում է երեք խմբի և յուրաքանչյուր խմբին տալիս է աշխարհի հայտնի քաղաքական առաջնորդների ելույթներից հատվածներ: Կարդալուց հետո յուրաքանչյուր խումբ առանձնացնում է այն հատկանիշները, որոնք, ըստ իրենց, բնորոշ են այդ առաջնորդին, և փորձում է գուշակել, թե դա ում ելույթը կարող է լինել: Հատկանիշները լրացվում են աղյուսակում:

	Առաջնորդ 1	**Առաջնորդ 2**	**Առաջնորդ 3**
Հատկանիշ			
Հատկանիշ			
Հատկանիշ			
Հատկանիշ			

Այդ աշխատանքն ավարտելուց հետո նրանք փորձում են դասակարգել՝ տվյալ առաջնորդը Մաքս Վեբերի առաջարկած որ խմբին է պատկանում՝ ավանդական, խարիզմատիկ, թե լեգալ (բաշխման նյութ 1.):

@ Առաջադրանք տանը

Հաջորդ դասի համար ուսուցիչն առաջարկում է տանն ընթերցել Մաքսիմ Գորկու «Դանկոյի սիրտը» լեգենդը «Պառավ Իզերգիլը» երկից՝ հաջորդ դասին կարճ քննարկում կազմակերպելու և առաջարկվող աղյուսակը լրացնելու համար:

Լսել 45:20 րոպեից:
http://grqaser.org/language/hy/%D5%BA%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE-%D5%AB%D5%A6%D5%A5%D6%80%D5%A3%D5%AB%D5%AC%D5%A8/?fbclid=IwAR3SRXhApFQadUytRPxRkq-nRz4tfNFM_TtoFITDXnbbDaeCi72RZST1jhI

Իրավիճակը/ միջավայրը	Հերոսները	Դրդապատճառ-ները	Քայլերը	Արդյունքը

Բաշխման նյութ 1.

Ավանդական առաջնորդին բնորոշ են անձնական հավատարմությունը, ավանդական գործողությունները, բարքերը և սովորույթները: Ավանդական առաջնորդի իշխանությունը հիմնված է հնուց գոյություն ունեցող կարգերի և կանոնների լեգիտիմության և հավատի վրա: *Օրինակ՝ միապետը, որի իշխանությունը հիմնված է «տեր-ծառա» կամ «իշխող-հպատակ» հարաբերությունների վրա:*

Խարիզմատիկ առաջնորդին բնորոշ են խարիզման՝ արտասովոր որակները, մոգական ունակությունները, մարդու հոգու և խոսքի բացառիկ ուժը: Խարիզմատիկ առաջնորդի համար առանցքային նշանակություն ունեն հավատը, անսովոր կամ արտասովոր երևույթները, գերզգայական գործողությունները: Նման առաջնորդները հետևորդներից պահանջում են անվերապահորեն ենթարկվել՝ ցուցաբերելով զգացմունքային նվիրվածություն և հավատ իրենց խարիզմայի (շնորհքի) հանդեպ: *Օրինակ՝ հերոսները, մեծ զորավարները, փաղանդավոր հասարակական-քաղաքական գործիչները, գրողները, նկարիչները, հոգևորականները և ուրիշներ:*

Լեգալ առաջնորդի իշխանությունը հիմնված է օրենքի գերակայության, նպատակառացիոնալ գործողությունների, շահերի, ձևական և ռացիոնալ կանոնների վրա, որոնց ենթարկվում են կառավարողները և կառավարվողները: Նման առաջնորդների համար կենսական նշանակություն ունեն բյուրոկրատիայի (մասնագետ-պաշտոնյաների) գիտելիքները և արհեստավարժ աշխատանքը՝ դառնալով ժողովրդավարական առաջնորդության բաղկացուցիչ տարրեր: *Օրինակ՝ ընտրական օրենսդրության համապատասխան երկրի նախագահի կամ պատգամավորների ընտրությունները, որոնք սահմանադրությամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում են պետական կառավարման գործառույթներ:*

ԴԱՍ 4-5. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Թեմայի խորհուրդը

Առանց պետության կսկսվի բոլորի պատերազմը բոլորի դեմ:

Թեմայի ուսումնասիրման նպատակը

Իմանալ պետության հատկանիշներն ու գործառույթները, կարողանալ զանազանել պետական իշխանության ճյուղերը, տարբերակել պետությունները՝ ըստ կառուցվածքի և կառավարման ձևի, բնութագրել ՀՀ պետական կառուցվածքը և կառավարման ձևը:

ԴԱՍ 4.

Դասի ընթացքը

Առաջարկվում է ուսուցչին դասն սկսել հետևյալ հարցադրումով.

? - Ձեր կարծիքով աշխարհագրական տվյալ միավորը պետություն կոչվելու համար ի՞նչ հատկանիշներ պետք է ունենա:

Բնականաբար, կինչեն տարբեր պատասխաններ, օրինակ՝ պետք է ունենա բնակիչներ, օրենսդրություն, ղեկավարություն, պետք է զարգացնի տնտեսությունը և այլն:

Պատասխաններն ամբողջացնելով՝ ուսուցիչը ներկայացնում է պետության հիմնական հատկանիշները (առաջարկում ենք կիրառել կարճ դասախոսության մեթոդը):

Տարածք: *Տարածքը պետության գործառնության վայրն է, որը ներառում է մշտական բնակչությունը, սահմանված տարածքը, աշխարհագրական դիրքը, բնական ռեսուրսները և կառավարությունը, որն ընդունակ է արդյունավետ վերահսկողություն հաստատելու համապատասխան տարածքի վրա և կարգավորելու այլ պետությունների հետ միջազգային հարաբերությունները:*
Բնակչություն: *Բնակչությունը որոշակի տարածքում մշտական բնակութ-*

յուն հաստատած մարդկանց ամբողջությունն է (ազգեր, էթնիկական խմբեր, համայնքներ), որոնք ապրում են գյուղում, քաղաքում, մարզում, երկրում:
Իշխանություն: *Իշխանությունն անհրաժեշտ է պետության կազմավորման և պահպանման, համապատասխան տարածքի ու բնակչության բնականոն գործունեությունը կարգավորելու համար: Պետությունը քաղաքական համակարգի հիմնական ինստիտուտն է, որը կազմակերպում, ուղղորդում և վերահսկում է մարդկանց, հասարակական խմբերի, կուսակցությունների, քաղաքացիական հասարակության և միավորումների համատեղ գործունեությունն ու հարաբերությունները: Պետությունը նշանակալի է նրանով, որ նրա ձեռքում են կենտրոնացված հանրային իշխանությունն ու ռեսուրսները, ինչն էլ հնարավորություն է տալիս կառավարելու ու նպատակաուղղված կարգավորելու սոցիալական հարաբերությունները:*

Հաջորդ քայլով ուսուցիչն անցում է կատարում իշխանության տարանջատման գաղափարին՝ նշելով, որ ժողովրդավարական երկրներում իշխանությունները բաժանվում են ճյուղերի՝ օրենսդիր *(օժտված է գերակայությամբ, քանի որ հենց նա է սահմանում իշխանության մյուս ճյուղերի գործունեության իրավական հիմքերը)*, գործադիր *(ի դեմս իր մարմինների կոչված է անմիջականորեն ապահովելու օրենսդիր իշխանության ընդունած իրավական նորմերի իրացումը)* և դատական *(գլխավոր կոչումը իրավունքի պաշտպանությունն է):* Յուրաքանչյուրը գործում է ինքնուրույն՝ կատարելով տարբեր գործառույթներ: Գծապատկերի և դրա մեկնաբանության միջոցով ներկայացվում են իշխանության ճյուղերի գործառույթներից մի քանիսը:

ՕՐԵՆՍԴԻՐ- *Երկրի սահմանադրությանը համապատասխան՝*
ընդունում, կատարելագործում և բեկանում կամ ուժը կորցրած է ճանաչում օրենքները:

ԴԱՏԱԿԱՆ- *Սահմանադրությանը համապատասխան և պետության անունից կայացնում է որոշումներ՝ լուծելով որոշակի վեճեր:*

ԳՈՐԾԱԴԻՐ- *Երկրի սահմանադրությանը համապատասխան՝ առաջնորդվում է ընդունված օրենքներով ու իրականացնում հանրային կառավարումը՝ ընդունելով որոշումներ:*

Այս գծապատկերը ցույց է տալիս, որ իշխանության երեք ճյուղերը գործում են անկախ, այսինքն՝ տարանջատված են, սակայն երեքի գործունեության հիմքում ընկած է զսպումների և հակակշիռների սկզբունքը:

Օգնություն ուսուցչին

«Զսպումների և հակակշիռների» համակարգ

Իշխանությունների տարանջատման սկզբունքը ժողովրդավարական պետության մեջ պետական իշխանության բանական կազմակերպումն է, որի առկայության պարագայում իրականացվում են պետության բարձրագույն մարմինների փոխադարձ վերահսկողությունը և փոխգործակցությունը՝ հակակշիռների և զսպումների համակարգի միջոցով: Այս սկզբունքի էությունն այն է, որ միասնական պետական իշխանությունը բաժանվում է երեք հարաբերականորեն անկախ ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական: Սրան էլ համապատասխան՝ ստեղծվում են պետության բարձրագույն մարմինները, որոնք փոխներգործում են հակակշիռների և զսպումների մեխանիզմի հիման վրա՝ միմյանց նկատմամբ իրականացնելով մշտապես գործող հսկողություն: Իշխանության յուրաքանչյուր ճյուղ, բացի ընդհանուր շահերից, ունի նաև իր՝ որպես որոշակի համակարգի յուրահատուկ օբյեկտիվ շահերը: Բացի այդ՝ գոյություն ունեն նաև օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների պաշտոնատար անձանց սուբյեկտիվ, խմբային և անհատական շահեր, որոնք նույնպես էականորեն ազդում են այդ ճյուղերի գործառնության վրա: Հենց այդ շահերի ազդեցությամբ է հիմնականում բացատրվում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջև հավասարակշռությունն ապահովելու, նրանց միջև հակակշիռների և զսպումների մեխանիզմ կիրառելու անհրաժեշտությունը:

Իշխանության երեք ճյուղերի գործունեությունն ամփոփելուց հետո ուսուցիչը նշում է, որ իշխանության վարած քայլերը, իրականացրած գործունեությունը մեկ արտահայտությամբ կոչվում է *պետական քաղաքականություն:*

Այն տեսանելի ներկայացնելու համար գրատախտակին գրվում են պետական քաղաքականության իրականացման հաջորդական փուլերը.

- **Առաջին փուլ** - Հասարակական կյանքում առկա խնդիրների և պատճառների վերհանում:
- **Երկրորդ փուլ** - Լուծում պահանջող ոլորտում պետական քաղաքականության նպատակների սահմանում:

- **Երրորդ փուլ** - Պետական իշխանության մարմինների կողմից իրավական ակտերի և ծրագրերի ընդունում:
- **Չորրորդ փուլ** - Պետական քաղաքականության արդյունքների գնահատում (խնդրի լուծման արդյունավետության չափում):

Առաջադրանք

Սովորողներին բաժանվում է **բաշխման նյութ 1-ը՝** հատված **«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին»** ՀՀ օրենքից, հանձնարարվում է կարդալ այն և փորձել դասակարգել այն փուլերը, որոնք պետությունն իրականացնում է ներկայացված խնդիրն արդյունավետ լուծելու համար՝ նշելով նաև հատվածում բացակայող փուլը:

Բաշխման նյութ 1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի դեկտեմբերի 14-ին

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՈՒ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սևանա լիճը իր եզակի ու հարուստ ֆլորայով և ֆաունայով արժեքավորվում է հանրապետության կենսաբազմազանության համակարգում, իսկ կենսապաշարները կարևոր տեղ են գրավում մարզի և հանրապետության բնակչության սննդաբաժնում, մասնավորապես՝ դրա ձկնային պաշարները: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության, էներգետիկայի

և տնտեսության այլ ճյուղերի զարգացումը սերտորեն կապված է Սևանա լճի ջրային ռեսուրսների օգտագործման հետ, հատկապես նրա քանակական և որակական հատկանիշների հետ:

Սևանա լիճը իր ֆիզիկական, քիմիական, կենսաբանական ցուցանիշներով համարվում է խմելու համար բարձրորակ բնական ջրամբար և այդ տեսակետից՝ ՀՀ ռազմավարական գերակայական նշանակություն ունեցող բնական պաշար:

Ցավոք, սկսած 30-ական թվականներից, Սևանա լճի ջրի ինտենսիվ և ոչ հաշվենկատ օգտագործման հետևանքով խախտվել է լճի հավասարակշռությունը՝ առաջ բերելով ջրակենսաբանական պրոցեսների և ամբողջ էկոհամակարգի խաթարում, որի շարունակման դեպքում վտանգվում է Սևանա լճի՝ որպես քաղցրահամ ջրամբարի գոյությունը:

Հաշվի առնելով Սևանա լճի էկոլոգիական վիճակի բարելավման հրատապությունը՝ ՀՀ Ազգային ժողովը 2001 թ. ընդունել է «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում է, որ Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանում մարդկային ցանկացած գործունեություն պետք է իրականացվի Սևանա լճի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման համալիր և տարեկան ծրագրերի հիման վրա (13-րդ և 14-րդ հոդվածներ): Վերջինների պահանջների հիման վրա ՀՀ կառավարությունը մշակել և ՀՀ Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացրել սույն ծրագրերը:

Համալիր և տարեկան ծրագրերի ռազմավարությունը և դրանց իրականացման անհրաժեշտ գործողությունները սահմանվել են համաձայն «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-15-րդ հոդվածների:

Ծրագրերի նախապատրաստման համար հիմք են ծառայել նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից իրականացված և ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած «Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնում» և «Շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողություններ» ծրագրերը, Սևանա լճի էկոլոգիական հիմնախնդրի լուծման վերաբերյալ ԽՍՀՄ ԳԱ Լճաբանության ինստիտուտի կողմից մշակված վերլուծություններն ու ծրագրերը: Ծրագրի միջոցառումների ցանկի պատրաստման համար հիմք են ծառայել ՀՀ տարբեր նախարարությունների, գերատեսչությունների, ինչպես նաև գիտահետազոտական կազմակերպությունների կողմից ՀՀ բնապահպանության նախարարությանը ներկայացված ծրագրերը և առաջարկությունները:

http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=11483

Առաջադրանքը կատարելուց հետո ուսուցիչը սովորողների հետ քննարկում է կատարված աշխատանքը:

ԴԱՍ 5.

Դասի ընթացքը

Դասի երկրորդ հատվածում ուսուցչի կողմից անդրադարձ է կատարվում պետությունների տիպերին՝ ըստ կառուցվածքի և ըստ կառավարման ձևերի:

Առաջադրանք

Դասարանը բաժանվում է երեք խմբի: Խմբերից յուրաքանչյուրը, օգտվելով դասանյութում ներկայացված *պետությունների տիպերն ըստ կառուցվածքի* հատվածից, գրատախտակին լրացնում է աղյուսակի՝ իրեն հանձնարարված հատվածը.

1. **Պարզ (ունիտար) պետության հատկանիշները**
2. **Բարդ (դաշնային և համադաշնային) պետության հատկանիշները**
3. **Պարզ և բարդ կառուցվածք ունեցող պետությունների նմանություններ**

Օգնություն ուսուցչին

Պետությունների տիպերը՝ ըստ կառուցվածքի

Տարբերություններ	Նմանություններ	Տարբերություններ
Պարզ (ունիտար)		Բարդ (դաշնային և համադաշնային)
1.Պետությունն ունի միասնական սահմանադրություն և քաղաքացիություն: 2.Ունի իշխանության ճյուղերի միասնական համակարգ: 3.Վարչատարածքային միավորները չունեն պետականության հատկանիշներ: 4. Լինում են պարզ և բարդ, կենտրոնացված և ապակենտրոնացված. օր.՝ Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, ճապոնիա, ՀՀ, Լեհաստան և այլն:	1. Պետությունների դասակարգման սկզբունքները: 2.Ցույց են տալիս պետության կառուցվածքը: 3.Այս բաժանումը հենվում է իշխանության բաժանման վարչատարածքային կազմակերպման սկզբունքի վրա: 4. Կառուցվածքի երկու ձևն էլ կա այսօր:	1.Միավորներն ունեն պետականության հատկանիշներ, սահմանափակ իշխանություն: 2.Պետության գործառույթները բաժանված են դաշնության կենտրոնական և սուբյեկտների (նահանգ, հանրապետություն, մարզ) իշխանության մարմինների միջև: 3.Դաշնության սուբյեկտներն ունեն գործադիր և օրենսդիր մարմիններ, օրենսդրություն: 4. Լինում են տարածքային, ազգային և խառը. օր.՝ Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, ԳԴՀ, Շվեյցարիա և այլն:

Հաջորդ՝ պետությունների կառավարման ձևի տիպերն առավել մատչելի բացատրելու համար առաջարկում ենք կիրառել հետևյալ խմբային աշխատանքը:

@ *Առաջադրանք 2.*

Դասարանը բաժանվում է երկու մեծ խմբի. պատահականության սկզբունքով ամեն մի խումբ ստանձնում է պետությունների կառավարման ձևերից մեկի՝ միապետության կամ հանրապետության բանավոր ներկայացումը *(աղյուսակ 1):* Ամեն մի խումբ իր ներսում բաժանվում է ենթախմբերի հետևյալ կերպ.

1-ին խումբ՝ միապետություն.

- բացարձակ
  - ❖ կրոնապետություն
- սահմանադրական
  - ❖ դուալիստական
  - ❖ խորհրդարանական

2-րդ խումբ՝ հանրապետություն

- նախագահական
- խորհրդարանական
- կիսանախագահական

Յուրաքանչյուր խումբ, օգտվելով **բաշխման նյութ 2-ից**, ասում է իր խմբին բնորոշող մեկական հատկանիշ, հատկանիշները թվարկվում են այնքան ժամանակ, մինչև բոլորը սպառվում են:

Բաշխման նյութ 2.

5.1.2 Պետությունների տիպերը՝ ըստ կառավարման ձևի

*Պետությունների դասակարգման մեկ այլ սկզբունք է **կառավարման ձևը**՝ ինչպես են ձևավորվում պետական բարձրագույն իշխանության մարմինները, և ինչ իրավասություններ ունեն դրանք: Ըստ այդ սկզբունքի՝ պետությունները լինում են **միապետական և հանրապետական:** Միապե-*

<u>փություններում</u> բարձրագույն իշխանությունն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է պետության միանձնյա ղեկավարին՝ միապետին (թագավոր, կայսր, սուլթան), որը հաշվետու չէ բնակչության առջև, իսկ նրա իշխանությունը ժառանգական է: Միապետությունների տարատեսակներից են.

- *Բացարձակը, որտեղ պետական բարձրագույն իշխանության միակ կրողը միապետն է, իսկ նրա իշխանությունը ոչնչով սահմանափակված չէ (Օման, Սաուդյան Արաբիա): Սրա ենթատեսակ է կրոնապետությունը (Վատիկան), որտեղ միապետը միաժամանակ նաև կրոնական առաջնորդն է:*

- *Սահմանադրականը, որտեղ միապետի իշխանությունը սահմանափակված է սահմանադրությամբ: Սրա ենթատեսակներն են դուալիստականը, երբ միապետն ունի գործադիր բարձրագույն իշխանություն և կրում է օրենսդիր ու դատական բարձրագույն իշխանության մի մասը (Հորդանան, Մարոկկո), և խորհրդարանականը, որտեղ միապետն ընդամենը ավանդութային կամ արարողակարգային նշանակություն ունի, իսկ բարձրագույն պետական իշխանությունը բաշխված է օրենսդիր, գործադիր և դատական մարմինների միջև (Մեծ Բրիտանիա, Դանիա, Նորվեգիա, Իսպանիա, Ճապոնիա):*

<u>Հանրապետություններում</u> պետական բարձրագույն իշխանության մարմինները որոշակի ժամկետով և պարբերականությամբ ընտրվում են քաղաքացիների կամ նրանց հատուկ ներկայացուցիչների կողմից ու հաշվետու են ընտրողների առջև: Բացի դրանից՝ պետական բարձրագույն իշխանությունը ձևավորվում է իշխանությունների տարանջատման սկզբունքով, ըստ որի՝ պետական իշխանությունը պետք է բաշխվի միմյանցից անկախ գործող ու միմյանց հակակշռող օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի միջև (տես նաև աղյուսակ 1):

Հանրապետություններն ունեն երեք տարատեսակ.

- *Նախագահական, որտեղ նախագահն ընտրվում է քաղաքացիների կողմից՝ ուղղակի (էկվադոր) կամ անուղղակի (ԱՄՆ) ընտրությունների միջոցով: Նա պետության և կառավարության գլուխն է, զինված ուժերի գլխավոր հրամանատարը: Նախագահն է միանձնյա ձևավորում և գլխավորում կառավարությունը, հսկում նրա գործունեությունը, վարում պետության ներքին և արտաքին քաղաքականությունը:*

- *Խորհրդարանական, որտեղ իշխանության բարձրագույն մարմինը խորհրդարանն է, իսկ կառավարությունը ձևավորվում է խորհրդարանի կողմից ու հաշվետու է նրա առջև: Կառավարության ղեկավարը վարչապետն է, որը, սակայն, պաշտոնապես չի համարվում պետության գլուխ: Այս պետություններում (Ավստրիա, Իտալիա, Գերմանիա) նախագահը կատարում է ձևական, արարողակարգային գործառույթներ:*

- *Կիսանախագահական (Ֆրանսիա, Պորտուգալիա), որտեղ նախագահն ունի բավական լայն լիազորություններ, բայց գործադիր իշխանության գործունեության նկատմամբ խորհրդարանն իրականացնում է խիստ վերահսկողություն: Կառավարությունը ձևավորվում է նախագահի կողմից՝ հաշվի առնելով խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցությունը: Կառավարությունը երկակի պատասխանատվություն է կրում նախագահի և խորհրդարանի առջև:*

Օգնություն ուսուցչին

Պատասխանները ներկայացվում են աղյուսակով.

Միապետություն		*Հանրապետություն*		
Բացարձակ	**Սահմանադրական**	**Նախագահական**	**Խորհրդարանական**	**Կիսանախագահական**
• Բարձրագույն իշխանությունը պատկանում է միանձնյա ղեկավարին: • Միապետը հաշվետու չէ բնակչության առջև: • Միապետի իշխանությունը ոչնչով սահմանափակված չէ: • Ենթատեսակ է կրոնապետությունը:	•Միապետի իշխանությունը սահմանափակված է սահմանադրությամբ: • Միապետն ունի գործադիր իշխանություն, նաև՝ օրենսդիր ու դատական իշխանության մի մասը: • Միապետը միայն ավանդութային նշանակություն ունի:	•Նախագահն ընտրվում է քաղաքացիների կողմից: • Նախագահը պետության և կառավարության գլուխն է: • Նախագահը զինված ուժերի հրամանատարն է: • Նախագահն է ձևավորում և գլխավորում կառավարությունը:	• Իշխանության բարձրագույն մարմինը խորհրդարանն է: • Կառավարությունը ձևավորվում է խորհրդարանի կողմից: • Կառավարության ղեկավարը վարչապետն է: • Նախագահը կատարում է ձևական, արարողակարգային գործառույթներ:	•Նախագահն ունի բավական լայն լիազորություններ: • Գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանն իրականացնում է խիստ վերահսկողություն: • Նախագահն է ձևավորում կառավարությունը. վերջինս պատասխանատու է նախագահի և խորհրդարանի առջև:

Ձեռքի տակ ունենալով նմանատիպ աղյուսակ՝ հեշտությամբ կարելի է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարման ձևը: Գիտենք, որ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին կայացած համաժողովրդական հանրաքվեի արդյունքում ՀՀ-ն որդեգրեց նոր՝ խորհրդարանական կառավարման ձևը: Սովորողները գտնում են խորհրդարանական կառավարման ձևը բնութագրող սյունակը, կարդում կետերը և դրանք հիմնավորում օրինակներով:

- Իշխանության բարձրագույն մարմինը խորհրդարանն է:
- Կառավարությունը ձևավորվում է խորհրդարանի կողմից:
- Կառավարության ղեկավարը վարչապետն է:
- Նախագահը կատարում է ձևական, արարողակարգային գործառույթներ:

@ Առաջադրանք տանը

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է հաջորդ դասին բերել յուրաքանչյուր կետը հաստատող օրինակներ ԶԼՄ-ներից (թերթեր, հեռուստացույց, ռադիո, համացանց)՝ վկայակոչելով ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածը:

Օգնություն ուսուցչին

ԵՐԵՎԱՆ, 5 ՆՈՅԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը նոյեմբերի 5-ին ստորագրել է հրամանագիր Երվանդ Մանարյանին ՀՀ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում շնորհելու մասին: Այս մասին «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ նախագահի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի վարչությունից:

«Հիմք ընդունելով Սահմանադրության 136-րդ հոդվածը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5.3-րդ հոդվածի 1-ին մասը և 28-րդ հոդվածը.

Հայ մշակույթի բնագավառում ունեցած ծանրակշիռ վաստակի համար Երվանդ Քրիստափորի ՄԱՆԱՐՅԱՆԻՆ շնորհել Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստի պատվավոր կոչում»,- ասվում է նախագահի հրամանագրում:

Հիմք՝ ՀՀ Սահմանադրության 136-րդ հոդված.

Պարգևատրումը և պատվավոր կոչումների շնորհումը

Հանրապետության նախագահին օրենքով սահմանված դեպքերում և կարգով պարգևատրում է Հայաստանի Հանրապետության շքանշաններով և մեդալներով, շնորհում է պատվավոր կոչումներ:

Այլընտրանքային դաս 1.

Դասի ընթացքը

Առաջարկում ենք ուսուցչին դասն սկսել հետևյալ ներածականով:

Ինչպես արդեն խոսել ենք նախորդ դասերին, քաղաքականությունը մի գործընթաց է, որով տարբեր կարծիքներ և շահեր ունեցող մարդիկ կոլեկտիվ որոշումներ են ընդունում այն մասին, թե ինչպես պետք է կազմակերպվի համատեղ կյանքը: Այն ներառում է համոզելը, բանակցությունը և վերջնական որոշում ընդունելու մեխանիզմները, օրինակ՝ քվեարկությունը:

Կոլեկտիվ որոշումներն օժտված են իշխանությամբ, իրավասությամբ և որոշակի հարկադրանքով: Ուստի ***քաղաքականություն*** սահմանվում է պետական հաստատությունների և քաղաքացիների միջև: Քաղաքական տարբեր համակարգերում հարաբերությունները կառուցվում են տարբեր ձևերով:

Ժողովրդավարական հասարակությունում քաղաքացիներն ունեն քաղաքական հավասարություն: Կոլեկտիվ որոշումներն ընդունվում են քվեարկության որևէ ձևով՝ կա՛մ անմիջականորեն քաղաքացիների կողմից, կա՛մ նրանց կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով: Բայց ժողովրդավարական քաղաքականությունը միայն քվեարկությամբ չի սահմանափակվում: Այն քննարկման և բանավեճի, քաղաքացիների կողմից հանրային կարևորության հարցերի շուրջ իրենց ձայնը լսելի դարձնելու հնարավորություն է: Ժողովրդավարության պայմաններում կարևոր են պետական հաստատությունների պատշաճ գործառույթի պահպանումը և քաղաքացիների պարտավորությունների կատարումը:

Երկրորդ քայլով առաջարկում ենք ուսուցչին սովորողներին բաժանել ստորև ներկայացված բաշխման նյութերը, որոնցում ներկայացված է առաջադրանքի պահանջը: Առաջադրանքը ցանկալի է կատարել խմբերում:

Բաշխման նյութ 1.

Եթե դու լինեիր վարչապետ

Խմբին առաջարկվում է բացատրել վարչապետի գործառույթները և պարտականությունները, պատկերացնել, որ ձևավորվում է կառավարություն, որը պետք է որոշում կայացնի, թե ինչպես պետք է ծախսվեն պետական փողերը: Խմբի ներսում քննարկումն ավարտելուց հետո պետք է ներկայացվի սոցիալական իդեալներին հասնելու առաջարկ:

Բաշխման նյութ 2.

Աշակերտական խորհուրդ

Խումբը կարող է սահմանել չափանիշներ, որոնք վերաբերում են դպրոցի կառավարմանը և այդ գործընթացում աշակերտական խորհրդի դերին: Նրանք քննարկում են.

- Ինչպե՞ս պետք է աշխատի աշակերտական խորհուրդը:
- Ի՞նչ իշխանություն պետք է ունենան աշակերտները, և ի՞նչ իշխանություն պետք է ունենան դպրոցի տնօրենը և ուսուցիչները:
- Ո՞ւմ պետք է պատկանի վերջին խոսքի իրավունքը դպրոցի կառավարմանը վերաբերող որոշումների կայացման ժամանակ:
- Դպրոցը կարո՞ղ է լինել ժողովրդավարության մոդել:

Խմբի ներսում քննարկումն ավարտելուց հետո պետք է ներկայացվի առաջարկ դպրոցի աշակերտական խորհրդին:

Բաշխման նյութ 3.

Ապրել ժողովրդավարության ներքո

Խումբը պետք է գծապատկերի տեսքով ներկայացնի, թե ում է պատ-

կանում իշխանությունը, ինչպես է իշխանությունը փոխանցվում ժողովրդին, որտեղ է ինքնիշխանության (սուվերենության) սահմանը, և ինչպես են կիրառվում օրենքները:

Քննարկման ընթացքում պետք է հաշվի առնել հետևյալը:

Ժողովրդավարական հասարակությունում կառավարությունն ունի ընդհանուր բարիքի ստեղծումը խթանելու պարտականություն: Դա պետք է լինի ի շահ հասարակության բոլոր անդամների, ինչպես նաև, թե ինչ պարտականություններ պետք է քաղաքացիներն ունենան, և ինչպես կարելի է խրախուսել նրանց:

Բաշխման նյութ 4.

Կառավարություն և քաղաքականություն

Հանձնարարվում է խմբին պատկերացնել, որ իրենք ապրում են ապագայում և պատասխանատու են երկիրը կառավարելու համար: Որպես կառավարություն՝ նրանք տարվա ծախսերի համար ունեն 6 միլիարդ դոլար: Խմբին տրվող առաջադրանքի պահանջն է որոշել, թե ինչպես են ծախսելու այդ գումարը տարվա ընթացքում՝ հաշվի առնելով սոցիալական ապահովությունը, անվտանգությունը, արդարությունը, սոցիալական ներդաշնակությունը, մարդու իրավունքները: Խումբը պետք է կարողանա հիմնավորել ծախսերը:

Առաջադրանքն առավել արդյունավետ դարձնելու համար առաջարկվում է հաշվի առնել հետևյալ հարցադրումները.

- *Դուք մտածե՞լ եք, որ այդ գումարի մի մասը պետք է ծախսվի արտաքին պարտքը մարելու համար:*
- *Պե՞տք է արդյոք այդ գումարի մի մասն օգտագործել նոր աշխատատեղեր բացելու համար:*
- *Կարևորո՞ւմ եք արդյոք, որ կառավարությունը հիմնական գումարը ծախսի կրթության ոլորտի բարեփոխումների համար:*

Առաջադրանքն ավարտելու համար խմբերին տրվում է ժամանակ, որից հետո սովորողները լսում են ներկայացվող պատասխանները: Քննարկումն ու փոխադարձ հարցադրումներն արվում են ներկայացման ավարտից հետո:

Առաջադրանքի պահանջները հիմնավորելու համար խորհուրդ է տրվում օգտվել դասանյութերից:

Այլընտրանքային դաս 2.

Դասի ընթացքը

Առաջարկվում է ուսուցչին դասն անցկացնել գործնական աշխատանքների ժամին:

Առաջին քայլով առաջարկվում է ուսուցչին սովորողներին բաժանել բաշխման նյութ 1- ը:

Հանձնարարվում է բոլորին կարդալ պատմությունը: Այնուհետև դասարանը բաժանվում է երկու մեծ խմբի՝ բանավեճ անցկացնելու համար: Մի խմբին հանձնարարվում է հիմնավորել, որ երկիրը պետք է շարունակի կառավարվել թագավորի կողմից: Մյուս խմբին հանձնարարվում է հիմնավորել, որ թագավորն ու բոլոր բնակիչները պետք է մասնակցություն ունենան երկրի կառավարման գործընթացում: Բանավեճը հիմնավորված ներկայացնելու համար խմբերին առաջարկվում է օգտվել դասանյութերից և այլ աղբյուրներից:

*(**«Բանավեճ»** մեթոդի նկարագրությունը ներկայացված է ձեռնարկի հավելվածում):*

Սթինգի թագավորությունը

Սթինգը բարձր լեռնային գոտում գտնվող երկիր է: Դարեր շարունակ այն քիչ կապեր է ունեցել արտաքին աշխարհի հետ:

Սթինգն ընդամենը փոքր թագավորություն է, սակայն այդ թագավորության նկատմամբ վերջերս հետաքրքրությունն աճել է: Պատճառն այն է, որ Սթինգում ոչ ոք քաղցած չի մնում: Սթինգի ժողովուրդը սեփական սնունդն է արտադրում և կիսում բոլորի հետ, ովքեր դրա կարիքն ունեն: Անվճար տուն է տրամադրվում յուրաքանչյուր ընտանիքի: Տան չափերը պայմանավորված են ընտանիքում ապրող անդամների թվով: Տունը տաքացնելու և ճաշ պատրաստելու համար վառելիքն անվճար է տրամադրվում: Անվճար են նաև վերանորոգման աշխատանքները: Եթե որևէ մեկը հիվանդանում է, նրան տրամադրվում է անվճար բուժօգնություն: Յուրաքանչյուր վեց ամիսը մեկ բոլորն անցնում են անվճար բժշկական ստուգում, և սոցիալական աշխատողները կանոնավոր կերպով այցելում են ծեր մարդկանց, երեխա

ունեցող ընտանիքներին և ցանկացած այլ մարդու, որը լրացուցիչ ուշադրության կարիք ունի:

Սթինգում կյանքի բարիքները հասանելի են բոլորին: Յուրաքանչյուր ընտանիքի տրվում են գումարային քարտեր, որոնք նրանք տարվա ընթացքում փոխանակում են պերճանքի տարբեր առարկաներով, օրինակ՝ օծանելիք, կահույք և այլն: Գումարային քարտերով կարելի է առևտուր անել միանգամից կամ պահել դրանք՝ հետագայում որևէ հատուկ բան գնելու համար:

Ինչպե՞ս է կարողացել Սթինգի ժողովուրդը կազմակերպել այս ամենը: Սթինգը հին ժամանակներից կառավարել է թագավորական ընտանիքը: Ներկայիս թագավորը Սթինգ 3-րդն է: Նա է որոշում, թե յուրաքանչյուր աշխատանքի համար որքան աշխատող է անհրաժեշտ, օրինակ՝ սնունդ արտադրելու, տուն կառուցելու կամ բժշկության համար: Այն մարդիկ, որոնք պետք է կատարեն այդ աշխատանքները, ընտրվում են հինգ տարեկան հասակում և ուղարկվում են հատուկ դպրոցներ՝ վերապատրաստում ստանալու համար: Ֆերմերներին ուղարկում են գյուղատնտեսական դպրոց, շինարարներին՝ տեխնիկական դպրոց, առողջապահության աշխատակիցներին՝ բժկական դպրոց և այլն: Գործունակ տարիքի յուրաքանչյուր մարդու աշխատանքի է ընդունում թագավոր Սթինգը իր թագավորական պալատներից մեկում: Սթինգում ամենազարմանալին այն է, որ այնտեղ փող չկա: Ոչ մեկին պետք չէ վճարել, որովհետև յուրաքանչյուրն արդեն ունի այն, ինչ պետք է:

Կարող եք հարց տալ, թե արդյոք Սթինգում որևէ մեկը դժգո՞հ է նման կարգից: Իրականում դա հազվադեպ է պատահում: Այն քիչ թվով մարդիկ, որոնք բողոքում են, խնամք են ստանում հոգեբուժարաններում: Ի վերջո, պետք է «խելագար» լինել նման հասարակությունում ապրելուց բողոքելու համար, այնպես չէ՞:

Հավելված 1.

ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԵՎ ՀՆԱՐՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Անկյուններ

«Անկյունները» ուսուցման բանավիճային մեթոդական հնար է, որն ակտիվացնում է սովորողների համագործակցային ուսուցումն ու խմբային աշխատանքը, խթանում կառուցողական փաստարկներ ձևավորելու, հակափաստարկներ բերելու, հիմնավորելու և եզրահանգումներ անելու կարողությունները: «Անկյունները» կարող են դառնալ երկու և ավելի տեսակետներ ծնող, հակասական հարցերի շուրջ ծավալված բանավեճերի կառավարման աշխույժ և ակտիվ միջոց: Դասի ընթացքում այս մեթոդը կարող է հաջորդել տեքստի ընթերցմանը, դասախոսությանը, ֆիլմի դիտմանը կամ պարզապես սովորողներին հետաքրքրող որևէ թեմայի: Այս մեթոդի իմաստն այն է, որ մասնակիցները պետք է ներկայացված խնդրի վերաբերյալ որևէ դիրքորոշում ընդունեն և պաշտպանեն այն: Ընթացքում մասնակիցները պետք է ուշադիր լսեն միմյանց, քանի որ նրանց հնարավորություն է տրվում դիմացինի փաստարկների համոզիչ և տրամաբանական լինելու դեպքում ճշգրտել իրենց տեսակետները, նույնիսկ փոխել իրենց կարծիքը և պատկերացումները: Սակայն արդյունքում ակնկալվում է, որ յուրաքանչյուր աշակերտ ի վերջո ձևավորում է սեփական դիրքորոշումն ու տեսակետը, ինչի մասին կարող է ինքնուրույն գրավոր փաստարկել:

Ընթացքը

Սովորողների հետաքրքրությունների շրջանակում գտնվող որևէ կարևոր խնդրի, թեմայի շուրջ կազմակերպվում է քննարկում:

- Բաժանվում են անհատական թերթիկներ, որոնց վրա սովորողները շարադրում են իրենց կարծիքը:

- Որոշվում են դասասենյակի անկյունները՝ ըստ հետևյալ կառուցվածքի.

1.միանգամայն համաձայն եմ,

2. համաձայն եմ,

3. դեմ եմ,

4. կտրականապես դեմ եմ:

Սակայն հաճախ քննարկումների ժամանակ դժվար է լինում հստակ սահման դնել դիրքորոշումների միջև: Ուստի անկյունները կարող են լինել նաև երեքը՝ ***կողմ եմ, դեմ եմ, չեմ կողմնորոշվում:***

Ուսուցիչը կարող է դիրքորոշումները սահմանել նախօրոք կամ էլ մտքերի տարափի միջոցով սովորողների հետ հանգել մի քանի տեսակետների:

Ուսուցչի հրահանգից հետո.

- Ըստ իրենց դիրքորոշման՝ մասնակիցները տեղափոխվում են այն անկյուն, որին համապատասխանում է իրենց թերթիկում նշվածը:
- Նույն անկյունում հանդիպողները ողջունում են իրար և հանդես են գալիս որպես մեկ թիմ և քննարկումներ են անցկացնում: Այս ընթացքում կազմակերպված մտքերի տարափը նպատակ ունի հավաքագրել բոլոր այն գաղափարները, որոնք միավորում են նրանց:
- Սկզբնական քննարկման ժամանակ նպատակահարմար է, որ թիմի անդամների քանակը 5-ից չանցնի: Սակայն մեթոդի ընթացքն այնպիսին է, որ մի անկյունում համակարծիք մասնակիցների թիվը կարող է ավելանալ կամ պակասել:
- Բոլոր խմբերի փաստարկված կարծիքներն ու համապատասխան հիմնավորումները լսելուց հետո մասնակիցներին առաջարկվում է ճշտել իրենց նախնական վերաբերմունքը, դիրքորոշումը և տեղափոխվել համապատասխան անկյուն:
- Անհրաժեշտ է խրախուսել տեղափոխությունները՝ խնդիրը բազմակողմանի ընկալելու նպատակով:
- Վերջում սովորողներին հանձնարարվում է անհատապես գրավոր ձևակերպել, շարադրել իրենց վերջնական կարծիքը:

ԶՐՈՒՅՑ

<u>Մեթոդի նպատակը</u>

Զրույցը ուսուցման առավել հին մեթոդներից է: Այն վարպետորեն կիրառում էր դեռևս Սոկրատեսը:

Զրույցը ուսուցման բազմակողմանի և արդյունավետ մեթոդ է, որի դեպքում ուսուցիչը նպատակամետ և հմտորեն առաջադրված հարցերի միջոցով սովորողների մեջ արթնացնում է նրանց արդեն ունեցած գի-

տելիքներն ու կարողությունները և մղում նոր գիտելիքների ձեռքբերման ինքնուրույն դատողությունների, եզրահանգումների և ընդհանրացումների ճանապարհով:

Զրույցի, ինչպես և ուսուցման այլ մեթոդների դեպքում իմացությունը կարող է զարգանալ դեդուկտիվ կամ ինդուկտիվ ճանապարհով: Դեդուկտիվ զրույցի հիմքում դրվում են սովորողներին արդեն հայտնի դրույթներ, կանոններ, սկզբունքներ, հասկացություններ, որոնց քննարկման արդյունքում նրանք հանգում են եզրակացությունների: Զրույցի ինդուկտիվ ձևի դեպքում առանձին փաստերի, հասկացությունների և մասնավոր պնդումների քննարկման հիման վրա սովորողները հանգում են ընդհանուր եզրակացությունների:

Ժամանակակից մանկավարժական գիտության մեջ ընդունված տեսակետների համաձայն՝ զրույցն առավել արդյունավետ է՝

- սովորողներին դասարանական աշխատանքի նախապատրաստելիս,
- նոր դասանյութին ծանոթացնելիս,
- գիտելիքների համակարգման և ամրագրման դեպքում,
- ընթացիկ ստուգման և գիտելիքների յուրացման հայտորոշման (դիագնոստիկայի) համար:

Ըստ նպատակի՝ առանձնացվում են զրույցի հետևյալ տեսակները.

ա. ներածական կամ կազմակերպական,

բ. նոր գիտելիքների հաղորդման (սոկրատեսյան, էվրիստիկ և այլն),

գ. ընդհանրացնող կամ ամրապնդող,

դ. ստուգող - շտկող:

Ներածական զրույցը սովորաբար անցկացվում է ուսումնական պարապմունքի սկզբում: Դրա նպատակն է պարզել՝ ճիշտ են արդյոք սովորողները հասկացել առաջիկա աշխատանքի իմաստը, որքանո՞վ են նրանք պատկերացնում, թե ինչը և ինչպես է պետք անել:

Զրույց - հաղորդումը սովորաբար լինում է՝

- ավտորիտար – հեղինակավոր (առարկություն չընդունող հարց և պատասխան),

- սոկրատեսյան (ուսուցչի նկատմամբ հարգալից, բայց ինքնուրույն կարծիք, քննադատություն, առարկություններ հանդուրժող),
- էվրիստիկ (սովորողներին հիմնահարցեր առաջադրող և այդ հարցերին սեփական պատասխաններ ենթադրող): Այս, ինչպես և այլ բնույթի զրույցի հիմնական նպատակը գիտելիքների նկատմամբ հետաքրքրության ձևավորումը և իմացական գործունեության պահանջի դաստիարակումն է:

Ընդհանրացնող կամ ամրապնդող զրույցն ուղղված է սովորողների գիտելիքների համակարգմանը, իսկ ստուգող–շտկող զրույցը կիրառվում է հայտորոշման նպատակներով, ինչպես նաև այն դեպքում, երբ պետք է սովորողների առկա գիտելիքները զարգացնել, ճշգրտել և լրացնել նոր փաստերով և դրույթներով:

<u>Ընթացքը</u>

- Զրույցի հաջող կիրառման համար ուսուցիչը պետք է լրջորեն նախապատրաստվի դրան: Նա պետք է հստակ սահմանի զրույցի թեման, դրա նպատակը, կազմի պլան, ընտրի դիտողական պարագաներ, ձևակերպի հիմնական և օժանդակ հարցերը, որոնք կարող են առաջանալ զրույցի ընթացքում, մտածի դասը կազմակերպելու և անցկացնելու մասին, այն է՝ հարցերի առաջադրման հերթականության, առանցքային հարցերի շուրջ տրվող ընդհանրացումների ու եզրակացությունների մասին և այլն:
- Շատ կարևոր է հարցերի ճիշտ ձևակերպումն ու հերթականությունը: Դրանք պետք է որոշակի տրամաբանական կապ ունենան, ընդհանուր առմամբ բացահայտեն ուսումնասիրվող նյութի էությունը, նպաստեն գիտելիքների համակարգված ընկալմանը: Իրենց բովանդակությամբ և ձևով հարցերը պետք է համապատասխանեն սովորողների զարգացման մակարդակին: Հեշտ, պարզունակ հարցերը չեն խթանում սովորողների ակտիվ իմացական գործունեությունը: Պետք չէ նաև տալ «հուշող»՝ պատրաստի պատասխաններ ենթադրող հարցեր:
- Շատ կարևոր է նաև հարց ու պատասխանի, իբրև ուսուցման միջոցի, կիրառումը: Յուրաքանչյուր հարց տրվում է ամբողջ դասարանին, խմբին: Մտածելու համար տրված ոչ մեծ դադարից հետո

միայն լսվում է սովորողներից որևէ մեկի պատասխանը: Չի կարելի խրախուսել տեղից հնչող պատասխանները: Պետք չէ տալ երկարաշունչ կամ երկիմաստ հարցեր: Եթե սովորողներից ոչ մեկը չի կարողանում պատասխանել հարցին, պետք է այն վերաձևակերպել-հստակեցնել, մասնատել կամ օժանդակող-ուղղորդող հարցեր տալ: Ցանկալի չէ սովորողներին մղել թվացյալ ինքնուրույնության՝ բառեր, վանկեր կամ սկզբնատառեր հուշելով:

- Զրույցի հաջողությունը կախված է դասարանի հետ հաղորդակցության աստիճանից: Պետք է հետևել, որ բոլոր սովորողներն ակտիվորեն մասնակցեն զրույցին, ուշադիր լսեն հարցերը, մտածեն պատասխանը, քննարկեն իրենց ընկերների պատասխանները, ձգտեն արտահայտել սեփական կարծիքը: Պատասխանները պետք է խրախուսել, անհրաժեշտության դեպքում՝ մեկնաբանել կամ շտկել: Սովորողին պետք է հնարավորություն տալ շտկելու սեփական պատասխանը և միայն դրանից հետո դիմելու մյուսների օգնությանը: Ուսուցչի խրախուսմամբ սովորողները կարող են նաև իրար հարցեր տալ, բայց հենց որ դրանք կորցնում են իմացական արժեքը և ինքնանպատակ ակտիվության բնույթ են ստանում, այդ զբաղմունքը պետք է անմիջապես դադարեցնել:

<u>Մեթոդի առավելությունները</u>

- Զրույցը նպաստում է սովորողների մտահորիզոնի ընդլայնմանն ու գիտելիքների հարստացմանը:
- Ինքնուրույն դատողությունների, եզրահանգումների և ընդհանրացումների ճանապարհով նպաստում է մտածողության զարգացմանը:
- Առավելագույնս ակտիվացնելով սովորողների մտագործունեությունը՝ զրույցը միաժամանակ նրանց կողմից յուրացված գիտելիքների ու կարողությունների հայտորոշման հրաշալի միջոց է:
- Նպաստելով սովորողների ճանաչողական ունակությունների զարգացմանը՝ զրույցը պայմաններ է ստեղծում իմացական գործունեության անմիջական կառավարման համար:
- Զրույցը կարևոր միջոց է հաղորդակցական հմտությունների ձևավորման համար:

Մեթոդի սահմանափակումները

Այսուհանդերձ, զրույցը չի կարող համարվել ուսուցման կատարյալ միջոց, և դրանով հնարավոր չէ հասնել դիդակտիկայի բոլոր հիմնական խնդիրների լուծմանը:

- Այն կարող է անարդյունավետ լինել, եթե սովորողները չունեն գիտելիքների և պատկերացումների որոշակի պաշար:
- Զրույցը չի կարող ուսուցման համակողմանի մեթոդ լինել և անպայման պետք է զուգակցվի դասախոսության, բանավեճի և այլ մեթոդների հետ:
- Զրույցը սովորողներին գործնական կարողություններ ու հմտություններ չի տալիս, հնարավոր չի դարձնում դրանք ձևավորելու համար անհրաժեշտ վարժությունների անցկացումը:
- Զրույցը ուսուցման ոչ խնայողական և բարդ միջոց է, ժամանակ, ուժերի լարում ու համապատասխան պայմաններ է պահանջում, ինչպես նաև մանկավարժական վարպետության բարձր մակարդակ: Ընտրելով զրույցի մեթոդը՝ անհրաժեշտ է կշռադատել սեփական հնարավորություններն ու սովորողների պատրաստվածության մակարդակը: Այդ ամենը անհրաժեշտ է խուսափելու համար զրույցի «ձախողումից», այսինքն՝ այն դատարկախոսության վերածելուց:

ԲԱՆԱՎԵՃ

Կազմակերպումը

Սկիզբը

Բանավեճը հաջող սկսելու համար խիստ կարևոր է, որ՝

- սովորողները նախապես հստակ պատկերացում ունենան բանավեճի նյութի և անցկացման կարգի վերաբերյալ.
- դասարանում ձևավորվի բարենպաստ հոգեբանական մթնոլորտ (դրան մեծապես կարող է նպաստել սովորողների նստելու ձևը. ցանկալի է, որ յուրաքանչյուր մասնակից տեսնի մյուսների դեմքը).
- ուսուցիչը կարողանա ճիշտ կազմակերպել ներածական մասը՝ արդյունավետ և հնարավորինս սպառիչ նախնական բացատրություն-

ներ ներկայացնելով բանավեճի նյութի շուրջ: Բանավեճը սկսելու արդյունավետ տարբերակ է նաև խթանող հարցերի և առաջադրանքների կիրառումը:

Ընթացքը

Բանավեճի անցկացման ընթացքում ուսուցչից պահանջվում է դիտել, կարգավորել, ուղղորդել: Շատ կարևոր է, որ ուսուցիչը զերծ մնա կարգադրող դիտողություններից կամ սեփական տեսակետների պարտադրումից: Նրա հիմնական գործառույթը հարցերի միջոցով բանավեճի ուղղորդումն է: Ուսուցիչը պետք է կարողանա ճիշտ ընտրել և կիրառել հարցերը, որպեսզի դրանց միջոցով խթանի քննարկումը և սովորողների ինքնուրույն մտածողությունը: Եթե բանավեճի ընթացքում ի հայտ են գալիս ոչ ճիշտ փաստական տվյալներ, եզրահանգումներ, հասկացություններ, ապա ուսուցիչը պետք է միջամտի իր բացատրող, տեղեկացնող և հակիրճ խոսքով: Եթե սովորողի միտքը հստակ չի ձևակերպված, ուսուցիչը կարող է համառոտ վերաշարադրել այն և հստակեցնել: Կարող է նաև փոխել քննարկման ուղղությունը հետևյալ կերպ. «Ինձ թվում է՝ կարելի է հարցի քննարկումը շարունակել նաև հետևյալ ուղղությամբ…», կամ «Դուք ճիշտ եք, սակայն եկեք դիտարկենք նաև հետևյալը…»:

Ամփոփումը

Բանավեճի ավարտին ուսուցիչը պետք է ամփոփի արդյունքները: Այդ ամփոփումը կարող է հետևյալ կերպ կատարել.

- արդեն ասվածի, քննարկվածի ընդհանրացում,
- արված եզրակացությունների վերաձևակերպում,
- հետագա քննարկման կարիք ունեցող հարցերի առաջադրում:

Բանավեճի անցկացման կանոններ

- Յուրաքանչյուր մասնակից պետք է արտահայտվելու հնարավորություն ունենա:
- Պետք է խոսել կարճ, հստակ և պահպանել նախապես սահմանված ժամակարգը:
- Չի կարելի վիրավորել որևէ մեկին:

- Պետք է հարգել յուրաքանչյուրի կարծիքը, եթե նույնիսկ համաձայն չեն դրա հետ:

Ելույթները պետք է կազմակերպված բնույթ կրեն, յուրաքանչյուր մասնակից կարող է խոսել միայն վարողի թույլտվությամբ, կրկնակի ելույթները կարող են լինել հիմնական ելույթներից հետո:

Հանրային խնդիրների մոդելը

Ուժեղ ժողովրդավարությունը հենվում է քննարկման վրա:

Բենջամին Բարբեր

Հարվարդի համալսարանի կողմից մշակված մոդելի հիմքում ընկած է այն միտքը, որ ժողովրդավարական հասարակության քաղաքացիներն ունեն տարբեր հայացքներ ու առաջնայնություններ, և հաճախ որոշակի դեպքերի համատեքստում դրանք բախվում են: Ժողովրդավարական հասարակության մեջ հանրային խնդիրների լուծումը քաղաքացիներից պահանջում է բանակցել հանրային քննարկման միջոցով: Այսպիսով, հասարակագիտական կրթության խիստ կարևոր նպատակներից է օգնել սովորողներին համապատասխան ունակություններ զարգացնելու նման քննարկումներին մասնակցելու համար:

Ըստ հանրային խնդիրների մոդելի՝ քաղաքացիները պետք է մի շարք հատկանիշներ ունենան.

- պետք է ծանոթ լինեն քաղաքացիական մշակույթի արժեքներին, որոնք ամրագրված են օրենսդրության մեջ,
- պետք է ունենան հմտություններ տարբեր խնդիրներ (քաղաքական, հասարակական, տնտեսական) հստակեցնելու և լուծելու, փաստեր ու վկայություններ հավաքելու և կշռադատելու, համապատասխան իրավական և բարոյական հարցերը վերլուծելու, տարբեր կողմերի փաստարկները գնահատելու համար,
- պետք է լինի եռանդուն և նվիրված մասնակից, որը ձգտում է իր հմտություններն ու գիտելիքներն օգտագործել մյուս քաղաքացիների հետ միասին նոր ընկալումների և հնարավոր լավագույն որոշումների հանգելու նպատակով:

Իրավական/բարոյական արժեքների շրջանակը

Հանրային խնդիրների մոդելը սովորողների ուշադրությունը կենտրոնացնում է սահմանափակ փաստական իրավիճակներ պարունակող առանձին դեպքերի ուսումնասիրությունների վրա:

Իսկ ինչպե՞ս պետք է ընտրվեն հիմնախնդիրները: Կարևոր է հիշել երկու չափանիշ՝

- խնդիրների ընդհանուր կարևորությունն այն հասարակության և քաղաքական միջավայրի համար, որում ապրում ենք,
- խնդիրների անհատական կարևորությունը մեր և անհատների համար:

Հանրային խնդիրների հստակեցումը և լուծումը քննարկումների միջոցով

Հնարավոր չէ առանց համապատասխան փորձի և կշռադատման խնդիրները խելամիտ և քաղաքակիրթ քննարկելու ունակություններ զարգացնել: Հանրային խնդիրների մոդելը հնարավորություն է տալիս օգնելու սովորողներին, որպեսզի ոչ միայն զարգացնեն ճիշտ հարցեր տալու և համապատասխան տեղեկություններ գտնելու ունակությունը, այլև իրենց հարցերին հետամուտ լինեն այնպիսի եղանակներով, որոնք խթանում են ժողովրդավարական արժեքները:

Ցանկացած իրավիճակ կարող է հակասություններ և տարաձայնություններ հարուցել:

Փաստ, բացատրություն, խնդիրներ

Քննարկման ընթացքում հնչած պնդումները կարող են հիմնավորվել տարբեր ձևերով.

- *«Ընդհանուր գիտելիքներ» կամ «առողջ բանականություն»*. սրանք թույլ աղբյուրներ են, քանի որ տարաձայնությունը վերացնելու համար ոչ մի նոր գործընթաց չեն առաջարկում:
- *Սեփական դիտարկումների ներկայացում*: Անհատական դիտարկումները սահմանափակ կիրառում ունեն հանրային խնդիրների ուսումնասիրության մեջ, քանի որ քչերին է իրադարձությունների իրական վկա դառնալու հնարավորություն ընձեռվում: Այդ պատճառով էլ մենք հիմնականում հենվում ենք այլոց վկայությունների վրա՝ հույս ունենալով, որ նրանք կարող են վստահելի տեղեկություններ տալ:

- *Մեջբերում հեղինակավոր աղբյուրից:* Հեղինակավոր աղբյուրներից մեջբերումներ կատարելիս պետք է նախ պարզենք աղբյուրի իրական որակը: Արդյոք այն իսկապես հավաստի՞ է և երաշխավորված: Որոշ դեպքերում փաստացի պնդումները կարող են ստուգվել լրացուցիչ տեղեկությունների միջոցով:
- *Սահմանման խնդիրներ:* Սահմանման խնդիրները վերաբերում են քննարկման ընթացքում բառերի կամ բառակապակցությունների օգտագործմանը: Սահմանման խնդիրները կարելի է լուծել քննարկման միջոցով, քանի որ դրանք հիմնականում զուտ ձևակերպման հարցեր են, և տվյալ բառի կամ արտահայտության օգտագործումը հիմնավորելու համար քննարկման մասնակիցները կարող են հղում անել որևէ հեղինակավոր աղբյուրի:
- *Բարոյական կամ արժեքային խնդիրներ*: Սրանք սահմանում են, որ այս կամ այն վարքագիծը լավ է կամ վատ, և այդ որակը հիմնվում է որևէ կարևոր համընդհանուր սկզբունքի վրա: Որպես կանոն՝ հանրային քաղաքականության շուրջ եղած հակասությունների մեծ մասը վերաբերում է հենց բարոյական կամ արժեքային հարցերին:

Օրինակ՝ արդյոք կառավարությունը պետք է ֆինանսավորում հատկացնի համընդհանուր առողջապահությանը (անհատական բարօրությունն ու մարդկային արժանապատվությունն ընդդեմ գործարարության ազատության և անհատական ընտրության):

Այս և նման հարցերում հանրային քաղաքականությունը ցանկացած որոշման դեպքում բախվելու է մարդկանց այս կամ այն խմբի համար կարևոր որևէ արժեքի: Նման հարցերի քննարկման նպատակն է գտնել քաղաքական այլընտրանքներ, որոնք ամենաքիչը կխախտեն կարևոր ու առաջնային ժողովրդավարական արժեքները:

Արժեքային այս կամ այն պնդումը պաշտպանելու կամ հերքելու համար մասնակիցները կարող են մի շարք ռազմավարություններ կիրառել.

- **Հեղինակություն և հարգանք վայելող աղբյուրի օգտագործում:**
- **Արժեքային դատողություններից բխող հետևանքի կանխատեսում:** Քաղաքական դիրքորոշումները և արժեքային դատողությունները հաճախ համատեղ են օգտագործվում ցույց տալու համար, որ տվյալ քաղաքականությունը ցանկալի նպատակին կհանգեցնի կամ հետ կպահի անցանկալի հետևանքներից:

- **Զուգահեռներ (անալոգիա):** Բարոյական և արժեքային խնդիրների մասին մեր միտքը հստակեցնելու ամենազորեղ միջոցներից մեկը նշելն է, որ մեկ կամ ավելի դեպքերում խնդիրը կարող էր այլ կերպ լուծվել:

Քննարկման գործընթացը

Դասարանում հանրային խնդիրներ քննարկելու նպատակն է գաղափարները քննադատելու և միմյանց հանդեպ հոգածություն դրսևորելու, հարաբերությունների ուժն օգտագործելու միջոցով կրթել անհատներին և խմբերին: Հանրային խնդիրների ուսումնասիրման մոդելը կիրառելիս ուսուցիչը հանդես է գալիս որպես խթանող՝ օգնելով սովորողներին արդյունավետ քննարկումներ վարելու միմյանց հետ: Նման քննարկումներին նախապատրաստելու համար ուսուցիչը պետք է աշխատի գործնական երկխոսություն խթանող և քննարկման հմտությունները զարգացնող միջավայր ստեղծել:

Դասարանային միջավայր և քննարկում

Հակասական հարցերի ամենաբարդ խնդիրներից է խմբի ներսում միաբանության և ներդաշնակության հասնելը, առանց որոնց հնարավոր չէ արդյունավետ լուծումներ գտնել: Քննարկումը հնարավորություն է ստեղծում հստակեցնելու և հետազոտելու նյութն ու միմյանց տեսակետները: Քննարկումը պետք է դիտարկել որպես հարցադրումների և ուսումնասիրության հնարավորություն և գնահատել, թե ինչպես է խումբը դրա համար համարժեք դաշտ ստեղծում:

Հանրային խնդիրների քննարկումը կարելի է համեմատել թիմային մարզաձևերի հետ: Ֆուտբոլի, բասկետբոլի ժամանակ խաղը չենք դիտարկում առանձին անհատների գործողություններով, այլ որպես խաղացողների միջև հարաբերությունների և փոխազդեցությունների շարք: Յուրաքանչյուր խաղացողից պահանջվում է որոշակի անհատական և կանոնակարգված տեխնիկա, սակայն միասնական ու ներդաշնակ թիմում հաճախ խաղն ինքնաբերաբար է ստացվում: Հետաքրքիր քննարկումը պահանջում է ողջ խմբի եռանդուն և անկաշկանդ մասնակցություն: Ավելին, ուսուցիչներին խորհուրդ է տրվում հանրային խնդիրների քննարկման ժամանակ սովորողների համար օրինակ ծառայել՝ ուշադիր լսելով խոսողին, հարգանք, անհրաժեշտության դեպքում նաև սեփական տեսակետը փոխելու պատրաստակամություն դրսևորելով: Ի դեպ, դիրքորոշման նման փոփոխությունը պետք է կատարվի թափանցիկ և հասկանալի ձևով:

Քննարկման հմտությունները

Հանրային խնդիրների քննարկումներին արդյունավետ մասնակցելու համար անհրաժեշտ են տարբեր հմտություններ, որոնցից շատերի ձեռքբերումը պահանջում է վերացնել առօրյա խոսակցությունների ընթացքում արմատացած անարդյունավետ սովորությունները: Այլ խոսքով, սովորողները պետք է յուրացնեն կարգապահ քննարկման տեխնիկաները: Դրանք ներառում են.

- ուշադրություն ուրիշների ասածների նկատմամբ,
- տարաձայնություն հարուցած խնդրի հստակեցում,
- օրակարգի ու ընթացակարգի մշակում և կիրառում,
- քննարկման ընթացքում անցումների և փոփոխությունների նշում,
- հնարավոր խոչընդոտների վերացում,
- անդրադարձ քննարկման գործընթացին և կշռադատում:

Խնդրի հստակեցում

Հաճախ քննարկման հենց սկզբից մասնակիցները կենտրոնանում են խնդրի որևէ կողմի վրա: Բարդ իրավիճակ քննարկելիս միանգամից կարծիքների հեղեղ է սկսվում: Կարգավորված քննարկում անցկացնելու համար պետք է հստակեցնել, թե ինչ կարծիքներ են արտահայտվել տարբեր խնդիրների կամ որոշակի խնդրի տարբեր կողմերի վերաբերյալ: Անհրաժեշտ է հստակեցնել նաև, թե որ կետերն են ընդհանուր համաձայնության արժանացել և որոնք են տարաձայնություններ հարուցել: Այս քայլերը մասնակիցներին հնարավորություն են տալիս կենտրոնանալու խնդրի սահմանափակ կողմերի կամ սահմանափակ խնդիրների վրա և հետևողականորեն քննարկելու դրանք:

Օրակարգի և ընթացակարգի մշակում

Օրակարգը խմբի անդամների ընդհանուր համաձայնությամբ քննարկման դրված խնդիրների ցանկն է: Երբ խումբը սկսում է որևէ բարդ իրավիճակ քննարկել, տարբեր մարդիկ տարբեր խնդիրներ են տեսնում: Որպես կանոն, յուրաքանչյուրը խոսում է այն խնդրի մասին, որն իր կարծիքով ամենակարևորն է, և չի փորձում զգայուն ուշադրություն դրսևորել այլոց համար կարևոր խնդիրների նկատմամբ:

Այս խնդիրը լուծելու տարբերակներից մեկը կարևոր թվացող բոլոր խնդիրների ցանկ կազմելն է: Այդ դեպքում մասնակիցները կարող են որոշել, թե ցանկում ներառված խնդիրներից որոնք են ուզում քննարկել և ինչ հաջորդականությամբ:

Քննարկման ժամանակ կարևոր է նաև խնդիրների շարունակականությունն ապահովելը: Չափազանց արագ մի խնդրից մյուսին անցնելը կխոչընդոտի ծագած տարաձայնությունները հստակեցնելուն և հաղթահարելուն: Խնդիրը շարունակաբար և հետևողականորեն քննարկել նշանակում է բավարար ժամանակ հատկացնել բոլոր տարաձայնությունները քննարկելու և լուծելու համար:

Հստակ անցումներ կատարել

Քննարկման ընթացքում լինում են պահեր, երբ անհրաժեշտ է թողնել մի խնդիրը և անցնել մյուսին: Մասնակիցների բանավեճը կարող է հանգեցնել այնպիսի փակուղու, որը համաձայնության ոչ մի հնարավորություն չի թողնում: Այդ դեպքում նրանք կարող են «համաձայնության գալ տվյալ խնդրի շուրջ համաձայնության չգալու մասին» և անցնել հաջորդ խնդրին: Երբեմն հայտնվում է մի նոր խնդիր, առանց որի քննարկման հնարավոր չէ տվյալ պահին քննարկվող խնդիրն արդյունավետ լուծել: Այդ դեպքում նա, ով որոշում է փոխել քննարկման խնդիրը, պետք է հստակ ասի այդ մասին՝ բացատրելով, որ նոր խնդրին անցնելը կխթանի քննարկման արդյունավետությունը: Անցում կատարելիս օգտակար կլինի նախ ամփոփել նախորդ խնդրի շուրջ մասնակիցների տարաձայնությունները:

Հնարավոր խոչընդոտներ

Քննարկումն արդյունավետ դարձնելու համար պետք է բացահայտել նաև հնարավոր խոչընդոտները և դրանք վերացնելու ռազմավարություններ մշակել: Նման խոչընդոտների օրինակներ կարող են լինել այլ կարծիքները չլսելը, խնդիրը հետևողականորեն չքննարկելը, մտքերի կրկնությունները, հարձակողականությունը և ամեն գնով հաղթելու ձգտումը: Խոչընդոտ կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ մասնակիցներին չի հետաքրքրում տվյալ իրադրությունը, կամ ընդհակառակը՝ այնքան շահագրգիռ են թեմայով, որ չեն կարող սթափ մոտենալ հարցին: Ուստի քննարկման խնդիրներն ընտրելիս անհրաժեշտ է շրջահայաց լինել:

Անդրադարձ քննարկմանը, կշռադատում

Արդյունավետ քննարկման հմտություններ զարգացնելու ամենահավաստի եղանակներից մեկը սովորողներին պարբերաբար անդրադարձ

կատարելու և կշռադատման մղելն է: Քննարկման ընթացքում խումբը կարող է դադար տալ և հարցնել. «Ինչ է հիմա տեղի ունենում»: Ներկայացված հարցերը կարող են օգնել պարզելու՝ քննարկումն արդյունավետ է ընթանում, թե՞ շարժվում է շրջագծով:

- Ինչ խնդիրներ են քննարկվել:
- Ինչպիսի՞ դիրքորոշումներ են ներկայացվել և ո՞ւմ կողմից:
- Արդյոք հաջողվե՞լ է համաձայնության գալ խնդիրներից որևէ մեկի կամ մի քանիսի շուրջ: Որո՞նք են այդ խնդիրները: Որո՞նք են համաձայնության գալու պատճառները:
- Ո՞ր գործոններն են օգնել առաջ տանելու քննարկումը:
- Ինչն է խոչընդոտել քննարկումը կամ այն դարձրել անարդյունավետ:
- Ինչ խնդիրներ դեռ պետք է քննարկվեն և ինչու:

Չնայած նման հարցերը կօգնեն սովորողներին կանոնավորելու քննարկումը և բարելավելու իրենց համապատասխան հմտությունները, սրանք ինքնին բավական չեն քննարկման արդյունավետության գնահատման համար:

Քննարկման որակական գնահատման համար առաջարկում ենք կիրառել հետևյալ չափանիշը. եթե քննարկումն ավելի բարդ ու թեժ է դարձել, քան սկզբում էր, ուրեմն արդյունավետ ընթացք է ունեցել:

Հմտություններ և եզրահանգումներ

Հմտությունն ուսուցանելու քայլեր

1. Պարզե՛ք, թե ինչ գիտեք կամ ենթադրում եք, որ ճիշտ է:
2. Տրամաբանորեն բխող ենթադրությու՛ն արեք:
3. Ձեր մտահանգումը ձևակերպե՛ք «եթե…., ապա» կառույցով:
4. Օգտագործե՛ք մեկ կամ ավելի հետևություններ եզրակացություն անելու համար:
5. Ստուգե՛ք, թե եզրակացությունը որքանով է տրամաբանական:

Սովորենք հմտությունը

Ընթերցել հետևյալ հատվածը:

Անցյալ տարի դպրոցի խորհուրդը ցրեց բասկետբոլի թիմը մարզական բյուջեի կրճատման պատճառով: Բասկետբոլ խաղացողների թիվն ամենափոքրն էր: Շուտով խորհուրդը պետք է նորից հավաքվի որոշելու, թե ինչպես նույն ծավալով կրճատի հաջորդ տարվա մարզական ծախսերը: Թենիսն այժմ միակ մարզաձևն է, որը մոտավորապես նույնքան խաղացող ունի, որքան բասկետբոլն ուներ: Թենիսի թիմը կարծում է, որ իրենց մարզաձևը կվերանա:

Առաջին քայլով պարզենք, թե ինչի մասին գիտենք կամ ենթադրում ենք, որ ճիշտ է:

Ճիշտ է, որ դպրոցի խորհուրդը ցրել է բասկետբոլի թիմը, որովհետև այն ամենից քիչ խաղացողներ ուներ: Խորհուրդը շուտով նորից հավաքվելու է, որպեսզի հաջորդ տարվա ծախսերից նույնչափ գումար կրճատի: Թենիսի թիմը նույնքան խաղացող ունի, որքան բասկետբոլի թիմն ուներ:

Հետևություններ անելը երբեմն որպես տողերի արանքը կարդալ է նկարագրվում:

Թենիս խաղացողներն այսպիսի հետևություն են անում:

Բասկետբոլի թիմը ցրվեց, որովհետև ամենից քիչ խաղացողներ ուներ: Խորհուրդը դարձյալ կցրի ամենից քիչ խաղացողներ ունեցող թիմը:

Այժմ ձևակերպենք հետևությունը. «եթե..., ապա» կառույցով: «Եթե»-ի մասն այն է, ինչ դուք գիտեք, իսկ «ապա»-ի մասը՝ հիմնավորված ենթադրությունն է: Ահա թենիս խաղացողների մեկ այլ հետևության օրինակ.

Եթե խորհուրդը պետք է նույն ծավալով կրճատի բյուջեն, ապա դպրոցում դարձյալ որևէ մարզաձևի խմբակ կփակվի:

Հաջորդ քայլը, երկու կամ ավելի հետևություններ օգտագործելով, հիմնավորված դատողություն կամ եզրահանգում ձևակերպելն է:

Օրինակ՝ թենիս խաղացողները եզրակացրին, որ եթե խորհուրդը որոշի ամենից քիչ խաղացողներ ունեցող մարզաձև կրճատել, ապա կփակվի թենիսի խումբը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Համագործակցային ուսումնառության արդյունավետ եղանակ է խմբային աշխատանքը: Այս մեթոդն ունի մի շարք առավելություններ: Այն որոշակի սկզբունքով կազմավորված խմբի անդամներին հնարավորություն է տալիս՝

- աշխատել միասին,
- լսել իրար,
- քննադատորեն վերաբերվել յուրաքանչյուրի արտահայտած կարծիքին,
- միասին փնտրել և գտնել անհրաժեշտ լուծումը,
- կատարել եզրահանգումներ:

Խմբային աշխատանք կազմակերպելը բարդ գործընթաց է, այն պահանջում է խմբի ներսում հարգանք միմյանց նկատմամբ, բարձր կարգապահություն, դերերի հստակ բաշխում, խմբի յուրաքանչյուր անդամի ուժեղ կողմերի բացահայտում և օգտագործում, ժամանակի ճիշտ բաշխում և այլ հմտություններ:

Խմբային աշխատանքի տարբեր հնարներ կան, որոնցից առաջարկում ենք երկուսը:

«ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԿԱՆԳԱՌ» ՄԵԹՈԴ

- **Քայլ 1.** Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի՝ ըստ իր նախընտրած մեթոդի:
- **Քայլ 2.** Ուսուցիչը խմբերին առաջարկում է նստել նախօրոք պատրաստված սեղանների շուրջը, որտեղ դրված կամ փակցված են կանգառի անունը և նյութին վերաբերող մեկ հարց:
- **Քայլ 3.** Խմբերին բաժանում է ուսումնասիրվող նյութը, վատման և մարկերներ:
- **Քայլ 4.** Յուրաքանչյուր խումբ 7-8 րոպեի ընթացքում կարդում է նյութը և վատմանի վրա գրում իր հարցին վերաբերող 2-3 ընդհանրացում (վատմանը պետք է մնա այդ սեղանին):
- **Քայլ 5.** Այնուհետև յուրաքանչյուր խումբ պտտվում է ժամացույցի սլա-

քի ուղղությամբ և հայտնվում մյուս սեղանի մոտ, վատմանի վրա ավելացնում մյուս խմբի հարցին վերաբերող մեկ միտք ու շարժվում առաջ:

Նկատառում: Չի կարելի արդեն գրված մտքի վրա որևէ ուղղում կամ ավելացում կատարել:

- **Քայլ 6.** Երեք սեղաններին մոտենալուց և գրառումներ կատարելուց հետո յուրաքանչյուր խումբ ի վերջո հայտնվում է իր հիմնական սեղանի մոտ և երեք րոպեի ընթացքում ծանոթանում բոլոր գրառումներին:
- **Քայլ 7.** Ավարտին յուրաքանչյուր խումբ ողջ դասարանի առաջ ներկայացնում է իր հարցի էությունն ու վերլուծությունը՝ ըստ գրառումների:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ «ՔԱՐՏԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ»

Համագործակցային այս քննարկումը սովորողների հաղորդակցման և ճարտասանական կարողությունները զարգացնելու լավ եղանակ է: Քննարկման ընթացքում բոլոր մասնակիցները խոսելու հնարավորություն ունեն (պայմանով, որ սահմանված կանոնները պահպանվում են):

- Քննարկումը վարողը թեմայի վերաբերյալ հակասական հայտարարություններ է անում: Այդ հայտարարությունները փակցվում են սենյակի տարբեր մասերում:
- Յուրաքանչյուր սովորող, ըստ իր կարծիքի/ընկալման, կանգնում է այդ հայտարարություններից մեկի մոտ:
- Քննարկման համար խմբեր ձևավորելուց հետո վարողը ժամանակ է սահմանում հնչեցված հայտարարությանը **կողմ** փաստարկները ներկայացնելու համար:
- Փաստարկները պատրաստելուց հետո յուրաքանչյուր խումբ ընտրում է իր խոսնակին:
- Խոսնակները նստում են սեղանի շուրջը և ստանում այսպես կոչված «քննարկման քարտեր» (3-6 քարտ՝ կախված քննարկման համար սահմանված ժամանակահատվածից և մասնակիցների թվից):
- Խմբի անդամները կանգնում են իրենց խոսնակի հետևում և նույնպես քարտեր են ստանում: Քարտերն օգտագործվում են հետևում կանգնած աշակերտներին քննարկման մեջ ներգրավելու

համար: Որպես այլընտրանք՝ խմբի անդամներն իրենց քարտերը կարող են տալ իրենց խոսնակին, եթե վերջինս սպառել է իր բոլոր քարտերը, սակայն դեռևս ներկայացնելու փաստարկներ ունի:

- Իր փաստարկներից յուրաքանչյուրը ներկայացնելիս խոսնակն իր քարտերից մեկը դնում է սեղանի կենտրոնում: Քարտերը որոշում են ելույթների թիվը: Մեկ փաստարկի գինը մեկ քարտ է: Այս եղանակն օգտագործելով՝ դասավանդողը ոչ միայն կառավարում է քննարկման ժամանակը, այլև մասնակիցներին սովորեցնում է իրենց փաստարկները ձևակերպել հստակ և հակիրճ:

ԻՆՉՊԷՍ ԳՐԵԼ ԷՍՍԵ

Էսսե գրելու հիմնական կանոններին անդրադառնալուց առաջ նախ սահմանենք՝ ինչ է էսսեն, և որն է դրա սկզբունքային տարբերությունը ստեղծագործական այլ շարադրանքներից:

Էսսեն գեղարվեստական արձակի ժանր է, որն ունի փոքր ծավալ և ազատ շարադրանք: Եզրույթը առաջ է եկել ֆրանսերեն essai՝ *ակնարկ, փորձ, փորձառություն* բառերից, որն էլ իր հերթին ծագել է լատիներեն exagium՝ *կշռադատում* բառից: Անգլերենում *essay* նշանակում է *ակնարկ, փորձ, ջանք*:

> *Դասական էսսեն փոքր ծավալի շարադրանք է, ազատ հորինվածք, որն արտահայտում է անձնական տպավորություններ և ենթադրություններ որոշակի հարցի կամ իրադարձության վերաբերյալ ոչ թե համակարգված գիտական մոտեցմամբ, այլ ազատ ոճով:*

Էսսե գրելը հնարավորություն է տալիս զարգացնելու այնպիսի հմտություններ, ինչպիսիք են թեմայի վերաբերյալ տեղեկությունների ստեղծագործական մոտեցումը, ձեռքի տակ ունեցած տվյալների վերլուծությունը, մտքերի տրամաբանական կառուցումը, կշռադատված եզրակացություններ կատարելը: Էսսեն նպաստում է հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային կյանքին առնչվող թեմաների վերաբերյալ ազատ մտածողության ձևավորմանը և սեփական կարծիքի արտահայտմանը, հնարավորություն է տալիս լուսաբանելու քննարկվող թեման, արտահայտելու և հիմնավորելու սեփական տեսակետը:

Էսսեի ոճը կարող է առանձնանալ պատկերավորման և արտահայտչական տարբեր միջոցներով, խոսակցական ոճին բնորոշ տարրերով:

<u>Սովորաբար առանձնացվում է էսսեի մի քանի տեսակ.</u>

- գեղարվեստական, պատմական, հոգևոր-կրոնական,
- պատմվածքներ, նամակներ, օրագրեր, ակնարկներ, մանրապատումներ,
- նկարագրական, ճանաչողական, քննադատական, վերլուծական,
- սուբյեկտիվ և օբյեկտիվ:

<u>Դասական էսսեին բնորոշ են.</u>

Թեմայի արդիականությունը: Շոշափված թեմաները պետք է սերտորեն առնչվեն այսօրվա կյանքին, մտահոգեն մարդկանց:

Մտորումների սուբյեկտիվությունը: Շարադրանքում խնդրի նկատմամբ հեղինակի վերաբերմունքով և անհատականացված գնահատմամբ պետք է հստակորեն երևա հեղինակի ինքնությունը:

Շարադրանքի՝ անհատականից ընդհանուրին անցում կատարելը: Հաճախ հեղինակի կարծիքն ու մոտեցումը կարող են երևալ հենց առաջին նախադասության մեջ ինչ-որ հայտնի մեջբերմամբ կամ հռետորական հարցով, այնուհետև այդ եզակի օրինակից հեղինակը կատարում է փիլիսոփայական, վերլուծական, ընդհանրացնող հիմնավորումներ էսսեում արտացոլված խնդրի շուրջ: Ի դեպ, այս գործընթացը կարող է սկսվել նաև հակառակ ծայրից՝ ընդհանուրից դեպի մասնավորը:

Փոքր ծավալը: Ծավալի որոշակի սահմանափակումներ չկան, բայց այն հիմնականում կարող է զբաղեցնել երկուսից տասը տպագիր էջ:

Կոնկրետացում: Էսսեն չի կարող արտացոլել շատ և բազմաբնույթ խնդիրներ:

Հակվածությունը պարադոքսներին: Էսսեի կարևոր հատկանիշներից է ընթերցողին զարմացնելը, հանկարծակիի բերելը: Հաճախ այդ դերը կարող են կատարել հետաքրքիր, բայց մի փոքր անսովոր ասույթը, մեջբերումը կամ աֆորիզմը:

Շարադրանքի պարզությունը: Տեքստում չպետք է լինեն անհասկանալի տերմիններ, խճճված մտքեր ու նախադասություններ, հեղինակը պետք է փորձի շահել ընթերցողի վստահությունը ոչ ծավալուն մտքերի ու հասկանալի հասկացությունների, եզրույթների միջոցով:

ԽՈՐՀՈՒՐԴ
Էսսեն գրելու հաջողությունը փվյալ թեմայի լավ տիրապետումն է. չէ՞ որ հեղինակը պետք է սեփական տեսակետը արտահայտի՝ փորձելով ապացուցել այն, իսկ դրա համար անհրաժեշտ է թեմայի լիակատար իմացություն:

Էսսե գրելու որոշ չափանիշներ

Էսսեն շարադրելիս անհրաժեշտ է լավ պատկերացնել լուսաբանվող թեման, հստակ և տրամաբանական հաջորդականությամբ շարադրել մտքերը, օգտագործել փաստերն առանց խեղաթյուրելու, կատարել համապատասխան վերլուծություններ և եզրակացություն, օգտագործել համապատասխան բառապաշար, հետևել գրական լեզվի քերականական և ոճաբանական կանոններին:

Էսսեն շարադրելիս և ցանկացած պնդում դիտարկելիս անհրաժեշտ է պատասխանել երեք կարևոր հարցի՝ *ինչ, ինչպե՞ս, ինչո՞ւ:*

«Ի՞նչ»: Առաջին հարցը, որ առաջանում է ընթերցողի մտքում, «ինչ» հարցն է: Այս հարցի հիմնավորումը ցուցադրում է՝ արդյոք էսսեում արտացոլված միտքը ճշմարիտ է: Պատասխանելով այդ հարցին՝ հեղինակը ուսումնասիրում է ապացույցները՝ ներկայացնելով սեփական տեսակետը: «Ինչ» կամ «ցուցադրում» բաժինը էսսեում արտացոլվում է հաճախ անմիջապես ներածությունից հետո:

Քանի որ հեղինակը ներկայացնում է իր դիտարկումները, այս հատվածն այն բաժինն է, որտեղ նա թեմայի վերաբերյալ առավելագույն ասելիք է ապահովում: Սակայն «ինչ» հարցի բացահայտումը չպետք է ընդհանուր էսսեի երկու երրորդից ավելին լինի, հակառակ դեպքում էսսեն կկորցնի իր հավասարակշռությունը՝ դառնալով միայն եզրակացություն կամ նկարագրություն:

«Ինչպե՞ս»: Ընթերցողը ցանկանում է իմանալ՝ արդյոք էսսեում արծարծված հարցերն ու տեսակետները ճշմարի՞տ են բոլոր պարագաներում: Հեղինակը, պատասխանելով «ինչպես» հարցին, հիմնավորում է իր տեսա-

կետը: Ինչպե՞ս կարող է թեզը ընդունել հակափաստարկների մարտահրավերները, ինչպե՞ս կարող է նոր նյութի ներկայացումը նոր մոտեցում լինել ապացույցների դիտարկման համար, այլ աղբյուրները ինչպե՞ս կարող են ազդել այն պնդումների վրա, որ կատարում է հեղինակը: Սովորաբար «ինչպես» հարցին պատասխանող հատվածը հաջորդում է «ինչ» պատասխանը պարունակող հատվածին:

«Ինչու՞»: Ընթերցողը պետք է իմանա նաև, թե թեմայի վերաբերյալ հեղինակի մեկնաբանություններն ինչու պետք է հետաքրքրեն նաև ընթերցողներին: Դա հնարավորություն է տալիս հասկանալու հեղինակի շարադրանքը ավելի մեծ համատեքստում: Պատասխանելով «ինչու» հարցին՝ հեղինակը շարադրանքի միջոցով բացահայտում է էսսեի նշանակությունը: Այս հարցի լիարժեք պատասխանը կնշանակի էսսեի ավարտ: Եթե հեղինակը չպատասխանի այդ հարցին, ապա ընթերցողը էսսեն կընկալի որպես անավարտ և անիմաստ շարադրանք:

Էսսեի կառուցվածքը

Մուտք (ներածություն/նախաբան)

Այս հատվածը արծարծված հարցի նկատմամբ ընթերցողի մեջ հետաքրքրություն և հուզական վերաբերմունք պետք է առաջացնի ՝ մղելով նրան ամբողջությամբ կարդալու տեքստը:

Հիմնական մաս

Այս հատվածում հեղինակն առաջ է քաշում պնդումներ, հիմնավորում դրանք՝ ապացուցելով իր տեսակետի ճշմարտացիությունը:

Եզրակացություն

Հիմնական մասում շարադրելով ասելիքը՝ հեղինակը կատարում է եզրակացություն:

Ասվածը ներկայացնենք գծապատկերի միջոցով.



Այժմ ավելի մանրամասն անդրադառնանք էսսեի կառուցվածքի յուրաքանչյուր հատվածին:

Ներածություն

Էսսեի շարադրանքն անհրաժեշտ է սկսել ընթերցողի ուշադրության գրավմամբ: Այն ակնհայտորեն կամ ոչ ակնհայտորեն հաղորդում է աշխատանքի նպատակի մասին:

Ահա կենդանի հետաքրքություն առաջացնելու մի քանի գործուն խորհուրդ.

- Հետաքրքիր (զարմացնող) տեղեկատվություն: Այս տեղեկատվությունը պետք է ճշմարիտ և հավաստի լինի և չպետք է ընթերցողի համար լիովին նորը լինի. այն կարող է պարզապես համապատասխան փաստ լինել, որը կարող է հստակորեն արտացոլել հեղինակի ներկայացվելիք տեսակետը:
- Եթե հեղինակն օգտագործում է փոքրիկ ապշեցնող տեղեկատվություն կամ պատմություն, անհրաժեշտ է դրան ավելացնել մեկ-երկու նախադասություն:
- Անեկդոտ: Անեկդոտը պատմություն է, որը ցուցադրում է հեղինակի տեսակետը: Այն պետք է կարճ և դիպուկ լինի, տեքստին համապատասխան: Անեկդոտի օգտագործումը շատ արդյունավետ կարող է լինել, սակայն այն պետք է զգուշորեն և տեղին կիրառել:
- Երկխոսություն: Համապատասխան երկխոսությունը չպետք է բացահայտի կողմերին, բայց ընթերցողը պետք է հասկանա, թե ինչ է հեղինակը փորձում փոխանցել: Երկխոսությունը կարող է բաղկացած լինել զրուցակիցների միջև փոխանակվող երկու-երեք նախադասությունից:
- Ամփոփող տեղեկատվություն: Վերջում ավելացվում է մեկ-երկու ընդհանուր նախադասություն, որն ընթերցողին մոտեցնում է հիմնական գաղափարին: Յուրաքանչյուր հաջորդ նախադասություն պետք է ավելի կոնկրետ լինի՝ քայլ առ քայլ բացահայտելով արծարծվող թեման:
- Այս հատվածը ավարտվում է թեզի ամրապնդմամբ:

Հիմնական մաս

Թեման, որն ընտրվել է, պետք է նկարագրվի, բացատրվի և հիմնավորվի փաստերով:

Հիմնական մասը թեմայի հետևողական շարադրանքն է: Այն ներկայացնում է հեղինակի տեսակետը, հայացքները, պատկերացումները, փաստարկներով և օրինակներով ամրապնդում է յուրաքանչյուր գաղափար՝ հիմնված սեփական փորձի, պատմության, գեղարվեստական գրականության օրինակների վրա: Պարունակում է վկայություններ և հղումներ, մեջբերումներ հայտնի մարդկանց մտքերից: Հիմնական մասը էսսեի ամենածավալուն հատվածն է: Այս մասում ընդգրկված ամեն մի գաղափար դառնում է մի ենթակետ. եթե հեղինակը երկու-երեք հիմնական գաղափար ունի,

դրանք շարադրանքում դառնում են երկու-երեք պարբերություն:

Հիմնական մասի յուրաքանչյուր պարբերություն պետք է նույն կառուցվածքն ունենա:

Հիմնական մասի շարադրման հրաշալի տարբերակ է հետևյալ կառուցվածքին հետևելը և առաջարկվող բառերն ու արտահայտությունները կիրառելը:

1. Գրի է առնվում հիմնական գաղափարներից մեկը: Եթե օրինակ՝ հիմնական գաղափարներից է «ավագ դպրոցում կրթության խնդիրները», ապա հեղինակը կարող է սկսել հետևյալ նախադասությամբ. «Ավագ դպրոցում կրթության կազմակերպման բազմաթիվ խնդիրներ կան»:
2. Այնուհետև շարադրվում է հիմնական գաղափարը հիմնավորող երկու-երեք ենթակետ, բայց յուրաքանչյուր ենթակետից հետո խորհուրդ է տրվում մի քանի տող բաց թողնել:
3. Դատարկ տողերում կարելի է ավելացնել որոշ պարզաբանումներ կամ կոնկրետացումներ տվյալ կետի վերաբերյալ:

Պնդում (հենման կետ).

«Ավագ դպրոցը դեռևս չի լուծել կրկնուսուցման խնդիրը հանրապետությունում»:

Փաստարկ (մշակում).

«Պատճառներից մեկը ավագ դպրոցում դասարանների մեծաքանակ լինելն է, որի պատճառով ցածր է սովորողների ներգրավվածության աստիճանը դասապրոցեսին, և ուսուցիչը չի կարողանում իր ուշադրության կենտրոնում պահել բոլոր աշակերտներին»:

4. Եթե հեղինակը ցանկանում է, կարող է յուրաքանչյուր պարբերության վերջում ամփոփում կատարել: Բայց դա պարտադիր չէ, այսպիսի ամփոփումները կարող են շարադրանքը դարձնել անբնական:
5. Հաջորդ միտքը կարելի է սկսել այսպես. «Որպեսզի ընթերցողը համաձայնի իմ պնդմանը, նա պետք է իմանա….»: Այնուհետև ավելացնում է, թե ինչու պետք է ընթերցողն իմանա այդ առաջին պնդման մասին, և ավելացնում է ապացուցման մեկ-երկու կետ. սա կստիպի հեղինակին պատասխանելու «ինչ» հարցին: Կարելի է հաջորդ նախադասությունն սկսել հետևյալ կերպ. «Հաջորդ պնդումը, որ կցանկանայի ներկայացնել ընթերցողի ուշադրությանը, այն է…»: Եվ անմիջապես պետք է հնչի «ինչու» պատասխանը և դրա հիմնավորումը: Այսպես շարունակվում է այնքան, մինչև ավարտին են հասցվում բոլոր պնդումներն ու դրանց ապացույցները: Օրինակ. «Հաջորդ միտքը, որ կցանկանայի ներկայացնել ընթերցողին, այն

է, որ ավագ դպրոցում աշակերտների բացակայությունների թիվը մեծ է»: Շարունակության մեջ հեղինակը պատասխանում է «ինչու» հարցին. «Դրա հիմնական պատճառը աշակերտների՝ կրկնուսույցների մոտ գիտելիքների այն պաշարի ձեռքբերումն է, որն անհրաժեշտ է բուհ ընդունվելու համար: Առաջացած խնդրի հիմնական պատճառը, իմ կարծիքով, դպրոցական և ընդունելության ծրագրերի անհամապատասխանությունն է»:

6. Անհրաժեշտ պնդումները մեկնաբանելուց և հիմնավորելուց հետո հեղինակը ավարտին է հասցնում հիմնական մասի շարադրանքը և նախապատրաստվում եզրակացություն կատարելուն: «Ինչու» հարցի պատասխանները տալուց հետո հեղինակը դրանք կոնկրետացնում է ամփոփման մեջ:

Եզրակացություն

Եզրակացություն կատարելու համար անհրաժեշտ է երկու-երեք ազդեցիկ նախադասություն, որոնք որոշակի կառուցվածք կամ ձև չունեն. պարզապես հեղինակը վերանայում է իր շարադրած մտքերը, որպեսզի տեսակետի վերաբերյալ ձևակերպումները ճիշտ լինեն, կարևոր է նաև հակիրճ շարադրել սեփական զգացողությունները թեմայի վերաբերյալ: Անգամ անեկդոտը կարող է դառնալ արդյունավետ ամփոփում: Եզրակացության մեջ նոր միտք կամ տեղեկատվություն չպետք է հնչի, միայն արդեն արծարծված մտքերի վերաբերյալ հեղինակի վերջնական տեսակետն ու ամփոփիչ խոսքը: Օրինակ. «Այսպիսով, ավագ դպրոցը չի կարողանում ապահովել այն գիտելիքն ու հմտությունը, որոնք անհրաժեշտ են այսօր բուհ ընդունվելու համար. պատճառը, ինչպես նշվեց վերևում, ավագ դպրոցի ծրագրերի և ընդունելության քննությունների անհամապատասխանությունն է, որի պատճառով հետզհետե մեծանում է կրկնուսուցման դերը մեր հանրապետությունում, դրա հետևանքով, ցավոք, նսեմանում է ավագ դպրոցի՝ որպես գիտելիքի և հմտությունների հիմնական կենտրոնի դերակատարությունը»:

Ներածությունն ու եզրակացությունը ամփոփում են էսսեի հիմնական մասը: Բայց դրանով չի ավարտվում էսսեի շարադրանքը: Մեկ քայլ է մնում այն ավարտելու համար: Եվ այդ վերջին քայլը աշխատանքի վերանայումն է: Ցանկալի է աշխատանքը ընդմիջել մի քանի օրով: Դա էսսեն վերագնահատելու հնարավորություն կընձեռի: Վերանայում նշանակում է տեքստի

խմբագրում, որի նպատակը շարադրանքի որակը, մտքերի հստակությունը, ըմբռնելիությունը, տրամաբանական կապը, գրագիտությունն ստուգելն է: Էսսեն ավելի հեշտությամբ և արագ կընթերցվի, եթե մտքերը շարադրված լինեն փոքրիկ պարբերություններով, նախադասությունները երկարաշունչ չլինեն, լինեն պարզ, առանց անհասկանալի եզրույթների, դժվարընկալելի բառերի և արտահայտությունների: Շատ կարևոր է նաև էսսեի արտաքին գեղեցիկ տեսքն ապահովելը: Եթե այն կոկիկ է և գրավիչ, ապա առաջին տպավորությունը դրական կլինի:

Էսսե գրելու կանոնները խիստ պայմանական են, որոնք էլ հնարավորություն են տալիս հեղինակին ամբողջությամբ ցուցադրելու իր ստեղծագործական հնարավորությունները և մտածողության ճկունությունը: Այս ամենն իսկապես գնահատվում է ցանկացած դասավանդողի կամ գործատուի կողմից, և պատահական չէ, որ պատասխանատու պաշտոնների հավակնող թեկնածուներին, որպես կանոն, հարցազրույցից առաջ խնդրում են գրել էսսե:

Օգտագործված գրականություն

https://www.thoughtco.com/how-to-write-an-essay-p2-1209096

https://writingcenter.fas.harvard.edu/pages/essay-structure

http://lklivingston.tripod.com/essay/ Last Updated: 25-June-2012
This site created by Kathy Livingston

https://edunews.ru/school/info/kak-napisat-ehsse.html#q5 © edunews.

https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1

1. Համաշխարհային գործարար բարոյագիտություն, Հայաստանի պատանեկան նվաճումներ, Երևան, Տիգրան Մեծ, 2008:
2. Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում (IREX):
3. Ինչպես կարող են բոլոր ուսուցիչները օժանդակել քաղաքացիության և մարդու իրավունքների կրթությանը (կոմպետենցիաների զարգացման շրջանակ):
4. Փիթեր Բրետ, Պասկալ Մամփոինթ-Գելարդ և Մարիա Հելենա Սալեմա, Ապրել ժողովրդավարության ներքո, ԺՔԿ/ՄԻԿ դասապլաններ, նախատեսված է միջնակարգ դպրոցի համար, Եվրոպայի խորհրդի հրատարակչություն:

Հավելված 2.

ԴԱՍԱՆՅՈՒԹԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՍՏԵՂԾՎԱԾ ԾԱՂՐԱՆԿԱՐՆԵՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

@ ***Առաջադրանք***

Առաջնորդվելով էսսե գրելու ուղեցույցով՝ շարադրել «Ո՞վ է իրական առաջնորդն ինձ համար» էսսեն:



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐԱՆԻ

? ***Քննարկման հարց***.

- Ինչ եք կարծում, պետության քաղաքական ընտրանու ներկայացուցչի լիազորություններն են ավելի շատ, թե՞ պարտականությունները:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳ



? ***Քննարկման հարց.***

- Ինչպե՞ս կմեկնաբանեք այս ծաղրանկարը:

ԻՐԱՎՈՒՆՔ, ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

? ***Քննարկման հարց.***

- Ի՞նչ եք կարծում, իրավունքի համընդհանրությունն ի՞նչ գործոններով է պայմանավորված:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

? ***Քննարկման հարց.***

- Ի՞նչ եք կարծում, մարդու իրավունքների պաշտպանությունն ի՞նչ հայտնի փաստաթղթերով է երաշխավորված:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Առաջադրանք

Առաջնորդվելով էսսե գրելու ուղեցույցով՝ շարադրել «Միջազգային իրավունքը և իմ երկիրը» էսսեն:

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Առաջադրանք

Ինչպե՞ս կմեկաբանեք այս նկարը. վերնագրե՛ք այն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐՔ



? ***Քննարկման հարց.***

- Ի՞նչ եք կարծում, ծաղրանկարում պատկերված հերոսներից յուրաքանչյուրը ինչպիսի՞ քաղաքական գիտակցություն է դրսևորում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

@ ***Առաջադրանք***

Ինչպես կմեկաբանեք այս նկարը.վերնագրեք այն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

? ***Քննարկման հարց.***

- Ինչ եք կարծում, քաղաքական մշակույթը կարո՞ղ է մարդուն թևեր տալ: Հիմնավորել պատասխանները:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

@ ***Առաջադրանք***

Ինչպես կմեկաբանեք այս նկարը. վերնագրեք այն:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

?

Քննարկման հարց.

- Ինչ եք կարծում, արդյոք ընտրություններն իշխանություն ձևավորելու ամենաարդյունավետ միջոցն են:

ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ***Արիստոտել*** - Հույն փիլիսոփա և գիտնական, ստեղծել է փիլիսոփայական ուսմունք՝ արիստոտելականությունը, ընդհանրացրել է Հին աշխարհի բնագիտության նվաճումները: Գիտության մեծ նորարար էր: 20 տարի սովորել է հույն մեծ փիլիսոփա Պլատոնի ակադեմիայում, խորամուխ եղել պատմության, աշխարհագրության, կենսաբանության, ֆիզիկայի, մանկավարժության և բժշկության մեջ:

2. ***Դավիթ Ալավկաորդի*** - Նաև հայտնի է որպես Դավիթ Գանձակեցի (մոտ 1070-80 -1140), միջնադարյան հայ նշանավոր իրավաբան: Եղել է բազմակողմանի զարգացած անձնավորություն, տիրապետել մի քանի լեզուների: Բացի մի շարք աշխատություններից՝ գրել է իրավաբանական ստվարածավալ, 97 հոդվածներից բաղկացած «Կանոնական օրենսդրություն» աշխատությունը: Այն կազմվել է մոտավորապես 1130 թ.: «Կանոնականում» անդրադարձել է իրավաբանության գրեթե բոլոր բնագավառներին: Նա առաջինն էր, որ տվեց հայ ժողովրդի բարքերի, սովորույթների, ավանդույթների մանրամասն պատկերը: Աշխատությունն իրավական շատ հարցերի, խնդիրների, վիճելի դրույթների պարզաբանման հիմք է դարձել՝ տալով դրանց արդարացի և իրավաբանական պարզաբանումներ, լուծումներ:

3. ***Թոմաս Հոբս*** – (Thomas Hobbes, 1588 – 1679), անգլիացի ականավոր փիլիսոփա և գրող, հասարակական դաշինքի տեսության հեղինակ: Առավելապես հայտնի է պետության մասին իր «Լևիաթան» (Leviathan or The Matter, Forme and Power of a Common Wealth Ecclesiasticall and Civil, 1651) երկասիրությամբ:

4. ***Թովմաս Աքվինացի*** - (լատիներեն՝ Thomas Aquinas, իտալերեն՝ Tommaso d'Aquino, 1225-1274), իտալացի աստվածաբան, փիլիսոփա, օրթոդոքսալ (ուղղափառ) սքոլաստիկայի համակարգող, կաթոլիկ եկեղեցու հայր, անվանվել է որպես Doctor Angelicus, Doctor Universalis, «princeps philosophorum» («փիլիսոփաների արքա-

յազն»), թոմիզմի փիլիսոփայական ուղղության հիմնադիր, դոմինիկյան միաբանության անդամ, 1879 թվականից ճանաչվել է ամենահեղինակավոր կաթոլիկ կրոնական փիլիսոփա: Կապել է կաթոլիկ եկեղեցու դավանաբանությունը (մասնավորապես Օգոստինոս Երանելու գաղափարները) Արիստոտելի փիլիսոփայությանը: Ձևակերպել է Աստծո գոյության հինգ ապացույցները:

5. ***Իմանուիլ Կանտ*** – Գերմանացի փիլիսոփա (1724-1804), ժամանակակից փիլիսոփայության կենտրոնական կերպարներից է: Կանտը համընդհանուր դեմոկրատիայի և միջազգային համագործակցության միջոցով հավիտենական խաղաղության պահպանման գաղափարի առաջամարտիկներից էր:

6. ***Համմուրաբի*** - (մոտ. մ. թ. ա. 1810-1750), Բաբելոնի արքա մ.թ.ա. 1792 - 1749 թթ.: Նրա անունով մեզ է հասել օրենքների ժողովածու:

7. ***Նիկոլո Մաքիավելի*** - (իտալերեն՝ Niccolò Machiavelli, 1469-1527), Վերածննդի ժամանակի իտալացի գրող, պատմաբան, փիլիսոփա, մարդասեր, քաղաքական գործիչ: Ուժեղ պետական իշխանության կողմնակից էր, որի ամրացման համար ընդունելի էր համարում ցանկացած միջոցի կիրառումը, ինչն արտահայտել և հիմնավորել է իր նշանավոր «Տիրակալը» երկում (հրատ. է 1532 թ.):

8. ***Շառլ Լուի Մոնտեսքիո*** - (ֆր.՝ Charles-Louis de Seconda, Baron de La Brède et de Montesquieu, 1689-1755), ֆրանսիացի գրող, իրավագետ և փիլիսոփա, «Պարսկական նամակներ» վեպի, «Հանրագիտարանի» մի շարք հոդվածների հեղինակ: Մոնտեսքիոն համարվում է ֆրանսիական լուսավորության կարկառուն ներկայացուցիչ, իրավաբան և քաղաքական մտածող:

9. ***Պլատոն*** - Պլատոն բառացի նշանակում է թիկնեղ, իսկական անունը՝ Արիստոկլես, ծնվել է արիստոկրատի ընտանիքում: Հույն փիլիսոփա Պլատոնն անտիկ իդեալիզմի խոշորագույն ներկայացուցիչն է: Նրա փիլիսոփայությունը մեծ ազդեցություն է ունեցել հետագա դարերի փիլիսոփայական մտքի զարգացման վրա. ստեղծվել են պլատոնականություն և նորպլատոնականություն փիլիսոփայական ուղղությունները:

10. ***Սոլոն*** - (հունարեն՝ Σόλων, մոտ մ.թ.ա. 638–558), Հին Հունաստանի Աթենք քաղաքի հայտնի պետական գործիչ, օրենսգիր և բանաստեղծ: Հին Հունաստանի յոթ իմաստուններից մեկը:

11. ***Վիլֆրեդո Պարետո*** - (1848-1923), իտալացի ինժեներ, տնտեսագետ և սոցիոլոգ: Էլիտայի տեսության հիմնադիրներից է:

12. ***Վլադիկ Ներսիսյանց*** - (1938-2005, Ստեփանակերտ, ԼՂԻՄ), ռուսաստանյան գիտնական, իրավաբան, իրավունքի փիլիսոփայության, քաղաքական և իրավական ուսմունքների մասնագետ: Իրավունքի փիլիսոփայության, պետության և իրավունքի տեսության, քաղաքական և իրավական ուսմունքների հիմնարար աշխատությունների հեղինակ:

13. ***Ցիցերոն*** - Մարկոս Տուլիոս Կիկերոն (Ցիցերոն, լատ.՝ Marcus Tullius Cicerō, մ. թ. ա. 106- 43), հին հռոմեական քաղաքական գործիչ և փիլիսոփա, նշանավոր հռետոր: Գագաթնակետին է հասցրել լատինական ճարտասանական արվեստը: Նրա ատենախոսություններն ու ճառերն օրինակ են ծառայել հետագա դարերի լատինական և եվրոպական ամբողջ հռետորական արվեստի համար:

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

1. **Աբսենտեիզմ** – Լատ. Absens/absentis- բացակայել բառից, ընտրություններից ընտրողների զանգվածաբար խուսափելը՝ ձայնի իրավունքից հրաժարվելը, ինչպես և ժողովներից զանգվածաբար բացակայելը բուրժուական երկրներում՝ իբրև բողոքի արտահայտություն:

2. **Ազատության տուն** – Freedom House, անկախ դիտորդական կազմակերպություն է, որը նվիրված է աշխարհում ազատության և ժողովրդավարության ընդլայնմանը: Հիմնադրվելով 1941 թվականին՝ սա առաջին ամերիկյան կազմակերպությունն էր, որը պայքարում էր գլոբալ ազատության առաջխաղացման համար:

3. **Առևտրի համաշխարհային կազմակերպություն** (ԱՀԿ) - Անգլերեն World Trade Organization (WTO), միջազգային կազմակերպություն է, ստեղծվել է 1995 թ., նպատակն է միջազգային առևտրի ազատականացումը և անդամ պետությունների առևտրաքաղաքական հարաբերությունների կարգավորումը: ԱՀԿ-ն պատասխանատու է նոր առևտրային համաձայնագրերի մշակման և ներդրման համար, ինչպես նաև ապահովում է, որ անդամները հետևեն այդ համաձայնագրերին: ԱՀԿ-ի գրասենյակը գտնվում է Ժնևում:

4. **Ավտոկրատիա** - Անձնիշխանություն, մենիշխանություն:

5. **Բյուրոկրատիա** - Կառավարչական իրավասություններով օժտված պաշտոնատար անձանց իշխանություն:

6. **Դատական իշխանություն** - Պետական իշխանության անկախ մարմիններին՝ դատարաններին պատկանող բացառիկ իրավունքը դատավարական կարգով քննելու և լուծելու իրավական վեճերը՝ օրինականության, մարդու իրավունքների պաշտպանության և վերականգնման նպատակով:

7. **Դատական համակարգ** – Պետության բոլոր դատարանների ամբողջությունն է, որը միավորում է միասնական սկզբունքներով կազմակերպված և գործող, միմյանց հետ արդարադատության իրականացման հարաբերություններով կապված բոլոր դատարաններին:

8. **Դատական նախադեպ** - Իրավունքի աղբյուրի ուժ ունեցող (այսինքն՝ իրավական նորմերը սահմանող, փոփոխող կամ բեկանող) որոշակի գործով որևէ դատարանի որոշում: Նախադեպ կարող են լինել համանման գործով և համանման դատավարության շրջանակներում սահմանված որոշումները: Ընդհանուր իրավունքի (անգլոսաքսոնական) իրավունքի համակարգում նախադեպային իրավունքը համարվում է իրավունքի առաջնային աղբյուր:

9. **Դատարան և դատավոր** - Դատարանը դատական իշխանության մարմին է, որն իրականացնում է արդարադատություն: Դատավորը դատարանում դատավորի պաշտոնում օրենքով սահմանված կարգով նշանակված անձն է: Դատարանն անկախ պետական մարմին է, որի թիկունքում կանգնած է պետության հեղինակությունը:

10. **Դեմոկրատիա** – Ժողովրդավարություն, ժողովրդաիշխանություն:

11. **Ենթաօրենսդրական նորմատիվ ակտ** - Օրենքով նախատեսված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած նորմատիվ ակտն է, որը հենվում է օրենքի վրա և չպետք է հակասի նրան:

12. **Եվրասիական տնտեսական միություն** (ԵԱՏՄ) - Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է՝ օժտված միջազգային իրավասուբյեկտությամբ և հիմնադրված Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով, որը ստորագրվել է 2014 թ. մայիսի 29-ին Աստանայում: ԵԱՏՄ-ն ստեղծվել է Բելառուսի, Ղազախստանի ու Ռուսաստանի Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի հիմքի վրա: Մաքսային միությունը սկսել է գործել 2010 թ. հունվարից, իսկ 2011 թ. դեկտեմբերին որոշում է կայացվել Միասնական տնտեսական տարածքը ձևավորող միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելու մասին, ինչն էլ նախանշել է 2012 թ. հունվարի 1-ից ՄՏՏ ձևավորող համաձայնագրերի կիրառումը՝ մինչև 2015 թ. Եվրասիական տնտեսական միության ստեղծման վերջնական նպատակով:

13. **Եվրոպայի խորհուրդ** - Պետությունների համագործակցության եվրոպական կառույց է, որի անդամները պարտավորվել են ճանա-

չել իրավունքի գերակայությունը և հարգել մարդու իրավունքներն ու հիմնական սկզբունքները: Եվրոպայի խորհուրդը հիմնադրվել է 1949 թ.:

14. **Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (**ԵԱՀԿ) – Հիմնադրվել է 1973 թ. և ներառում է 57 պետություն Եվրոպայից, Կենտրոնական Ասիայից և Հյուսիսային Ամերիկայից: Կազմակերպությունը կոչված է կանխելու ծագող հակամարտությունները տարածաշրջանում: ԵԱՀԿ մոտեցումը անվտանգության և կայունության ապահովման խնդիրներին բազմակողմանի է և համընդգրկուն: Կազմակերպության գործունեությունն ընթանում է 3 ուղղություններով, այսպես կոչված «զամբյուղներով»՝ ռազմաքաղաքական, տնտեսական/բնապահպանական և մարդկային/հումանիտար: ԵԱՀԿ տեսանկյունից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգումն ու պաշտպանությունը, ինչպես նաև տնտեսության ու շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառներում համագործակցությունը նույնքան կարևոր են անվտանգության, խաղաղության և կայունության հաստատման համար, որքան ռազմաքաղաքական խնդիրների լուծումը: Կազմակերպության գործունեության գերակայություններից են հակամարտությունների վաղ ազդարարումն ու կանխարգելումը, ճգնաժամերի կառավարումը, հետկոնֆլիկտային վերականգնումը: ԵԱՀԿ որոշումներն ընդունվում են կոնսենսուսով՝ ունենալով քաղաքական, ոչ թե իրավական պարտադրող ուժ: ԵԱՀԿ բոլոր անդամ երկրները ունեն հավասար կարգավիճակ:

15. **Զանցանք** - Համարվում է վարչական իրավախախտում, պետական կամ հասարակական կարգի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

16. **Էթնոկրատիա** –Էթնիկ խմբի իշխանություն, երբ ազգային ինքնատիպությունն օգտագործվում է քաղաքական նպատակներով:

17. **Էմանսիպացիա** - Լատ.՝ emancipatio, տարբեր տեսակի հակումներից հրաժարվելը, սահմանափակումների դադարեցում, համապա-

տասխան իրավունքների և պարտականությունների ձեռքբերում: Բառը առաջացել է լատիներեն /emancipare/ բայից, որ նշանակում է երեխային ազատել հայրական իշխանությունից, իսկ ավելի լայն իմաստով՝ հրաժարվել լիազորություններից կամ սեփականություններից, դրանք փոխանցվում են այլ անձի: Նման գործողությունը եղել է իրավական ակտ, որն արձանագրվել է դեռևս Տասներկու աղյուսակներում և կոչվում էր emancipatio:

18. **Թեոկրատիա** - Կրոնապետություն, աստվածապետություն:

19. **Ժողովրդավարություն**- Հին հունարեն՝ δη μοκρατία՝ ժողովրդի իշխանություն, δῆμος- ժողովուրդ և κράτος իշխանություն: Որպես քաղաքական վարչակարգի տեսակ ի հայտ է եկել մ.թ.ա. 5-րդ դարում Հին Հունաստանի քաղաք-պետություններում (պոլիսներ): Այն հասարակության քաղաքական կազմակերպման ձև է՝ հիմնված ժողովրդի՝ որպես պետական իշխանության միակ աղբյուրի ճանաչման, ինչպես նաև իրավունքի ու սահմանադրության գերակայության, քաղաքական բազմակարծության վրա:

20. **Իշխանագիտություն** –Իշխանության մասին գիտություն:

21. **Իշխանություն** - Երկու և ավելի սուբյեկտների միջև հարաբերությունների, կապերի, հաղորդակցության, տեղեկատվության փոխանակման գործընթաց է, որում նրանցից մեկն արձակում է հրամաններ, իսկ մյուսը կատարում և ենթարկվում է:

22. **Իրավական նորմ** - Իրավունքի «սկզբնական միավոր», վարքագծի կանոն: Այն սահմանում է մարդկային վարքագծի համապատասխան կանոն տվյալ նորմով սահմանված իրավաբանական փաստերի առկայության դեպքում: Իրավական նորմն այլ նորմերից տարբերվում է նրանով, որ այն սանկցիավորվում է (դրա կիրառությունը ապահովում է) պետական հարկադրանքի միջոցով: Այն իր ամրագրումը ստանում է պետական պաշտոնական ակտերում՝ սահմանադրությունում, օրենսգրքերում, օրենքներում, նախագահի որոշումներում և այլն:

23. **Իրավահավասարություն** – Օրենքի առջև հավասարություն, մարդու իրավունքների և իրավունքի հիմնարար սկզբունք է, որն ամ-

րագրված է ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավունքում: Իրավահավասարությունը ենթադրում է բոլոր քաղաքացիների իրավունքների և պարտականությունների, սոցիալական ազատության հավասար չափ, անձանց օրենքի առջև պատասխանատվության հավասար աստիճան՝ բացառելով նրանց փաստական տարբերությունները:

24. **Լեգիտիմություն** - Հանրային իշխանության մարմինների որակական բնութագիր է, որը ցույց է տալիս պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հասարակական աջակցությունն ու վստահությունը:

25. **Խարիզմա** - Քաղաքական գործչի գրավչությունը և ձգողականությունը, նրա գերմարդկային կամ յուրօրինակ անձնային որակը, որի շնորհիվ նա գնահատվում է որպես «առանձնահատուկ», յուրահատուկ ուժով, ընդունակություններով և հատկություններով օժտված մարդ: Խարիզմայի շնորհիվ քաղաքական գործիչը ուժեղ տպավորություն է թողնում շրջապատի վրա:

26. **Հանրաքվե** - Պետական և հասարակական գործերի ժողովրդավարական կառավարման բարձրագույն, հիմնարար ձևն է, որի դեպքում քաղաքացիները, ուղղակիորեն արտահայտելով իրենց կամքը, քվեարկության միջոցով ընդունում են որոշումներ պետական, հասարակական և տեղական նշանակության կարևոր հարցերով:

27. **Հանցագործություն** - Իրավախախտման տեսակ է, որը համարվում է մեղավորությամբ (դիտավորյալ կամ անզգույշ) կատարված, հանրության համար վտանգավոր այն արարքը, որ նախատեսված է քրեական օրենսգրքով: Հանցագործությունը կարող է լինել արգելքների չպահպանում, պարտականությունների չկատարում, իրավունքների չարաշահում:

28. **Մարդու իրավունքներ** - Բնական օրինաչափություններով պայմանավորված հնարավորություններ են, որոնք ապահովելու համար ամրագրվում են սահմանադրությամբ և օրենքներով և կոչված են երաշխավորելու մարդու կյանքը, ազատությունը, իրավահավասարությունը, արժանապատվությունը:

29. **Մարդու իրավունքների պաշտպան** (օմբուդսման) - Անկախ պաշտոնատար անձ է, որն իրականացնում է հանրային մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Ամեն ոք ունի մարդու իրավունքների պաշտպանի աջակցություն ստանալու իրավունք. օրենքով սահմանված հիմքերով և կարգով կարող է դիմել նրան և ստանալ աջակցություն: Մարդու իրավունքների պաշտպանի անկախության երաշխիքներն են ընտրովիությունը (ընտրվում է Ազգային ժողովում հասարակության մեջ հեղինակություն վայելող և պատգամավորին ներկայացվող պահանջները բավարարող անձը), անփոփոխելիությունը (պաշտոնավարում է վեց տարի, որի ընթացքում անփոփոխելի է), անձեռնմխելիությունը:

30. **Միավորված ազգերի կազմակերպություն** (ՄԱԿ)- Համընդհանուր միջկառավարական միջազգային կազմակերպություն է, որն ապահովում է պետությունների միջև վեճերի կամ խնդիրների, ինչպես նաև մարդկությանը հուզող ցանկացած հարցի լուծման միջազգային կառուցակարգը: ՄԱԿ–ը հիմնվել է 1945 թ. հոկտեմբերի 24-ին: Ստեղծման նպատակն էր պահպանել բոլոր ազգերի խաղաղությունն ու անվտանգությունը՝ առաջնորդվելով արդարության, մարդու արժանապատվության հարգման և ազգերի ինքնորոշման սկզբունքներով:

31. **Միջազգային պայմանագիր** - Միջազգային իրավունքի նորմերի գոյության գրավոր ձևերն են, որոնց կնքումով իրավական սկզբունքները և նորմերը դառնում են համաշխարհային իրավական արժեք, վերածվում են իրավական չափանիշների, որոնց պետք է ձգտեն ժողովուրդները և պետությունները:

32. **ՆԱՏՕ** - Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպություն, հիմնադրվել է 1949 թ. ապրիլի 4-ին Վաշինգտոնում Հյուսիսային Ամերիկայի երկու և եվրոպական տասը պետությունների կողմից: Ժամանակի ընթացքում ՆԱՏՕ-ի կազմն ընդլայնվել է, և այսօր նրան անդամակցում է 28 պետություն: ՆԱՏՕ-ն համարվում է աշխարհի ամենահզոր ռազմաքաղաքական դաշինքը: ՆԱՏՕ-ի կենտրոնակայանը գտնվում է Բրյուսելում:

33. **Նորմատիվ իրավական ակտ** - Իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավաստեղծագործության արդյունքում կամ հանրաքվեի միջոցով ընդունված պաշտոնական փաստաթուղթ է, որը բովանդակում է իրավունքի նորմեր:

34. **Պետական մարմին**- Պետության ապարատի հիմնական բաղադրատարրն է, որը մասնակցում է պետության խնդիրների իրականացմանը և օժտված է իշխանական լիազորություններով: Պետական մարմինների կազմավորման և գործունեության կարգը, կառուցվածքը սահմանվում են օրենսդրությամբ:

35. **Պլուտոկրատիա** - Հարուստների իշխանություն՝ մեծ հարստություն ունեցող անձանց տիրապետություն:

36. **Պոլիարխիա** - Բազմիշխանություն:

37. **Ռացիոնալ-** Բանական, տրամաբանական, խելացի, հիմնավորված:

38. **Սահմանադրություն** - Հիմնական օրենքն է կամ օրենքների օրենքը, որն ունի հիմնադիր, հիմնարար բնույթ: Սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է, որը սահմանում է նրա պետական կառուցվածքը, կառավարման և իշխանության մարմինների համակարգը, նրանց իրավասությունները և ձևավորման կարգը, ընտրական համակարգը, մարդու իրավունքները և ազատությունները, ինչպես նաև դատական համակարգը:

39. **Ցիվիլիարխիա (ցիվիլիկրատիա) -** Քաղաքացիավարություն, քաղաքացիական և քաղաքակիրթ իշխանություն:

40. **Քաղաքագիտություն** - Քաղաքականության մասին գիտություն:

41. **Օլիգարխիա** - Խմբիշխանություն:

42. **Օխլոկրատիա** - Ամբոխավարություն:

43. **Օրենք** - Օրենսդիր իշխանության կողմից կամ համաժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունված նորմատիվ ակտ, որ կոչված է կարգավորելու կարևոր նշանակություն ունեցող հասարակական հարաբերությունները և օժտված է գերակայությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Այվազյան Ն., Ապիյան Ն., Գաբուզյան Ա.և այլք, Պետության և իրավունքի հիմունքներ, Երևան, «Լույս» հրատ., 1998:
2. Գալստյան Ն., Վաղարշյան Ա., Քաղաքացիական կրթության բացատրական բառարան, Երևան:
3. Սաֆարյան Գ., Պետության և իրավունքի տեսություն (ուսումնական ձեռնարկ), Երևան, «Մխիթար Գոշ» հրատ., 1996:
4. Համաշխարհային գործարար բարոյագիտություն, Հայաստանի պատանեկան նվաճումներ, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2008:
5. http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2131#1.2
6. www.irtek.am
7. http://www.president.am/hy/constitution-2015/
8. https://www.arlis.am/documentview.aspx?docid=120340
9. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24616
10. http://www.un.am/res/UN%20Treaties/XIV_1.pdf
11. https://www.aravot.am/2018/09/28/983907/
12. Լուրեր Հայաստանից - NEWS.am
13. https://news.am/arm/news/484139.html
14. http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=11483
15. https://narekkharatyan.blogspot.com/p/blog-page_25.html
16. http://generationnation.org/CLC/entry/three-branches-of-government-for-kids
17. https://www.1000dokumente.de/index.html?c=dokument_de&dokument=0 005_tag&object=translation&l=ru
18. https://armwiki.wordpress.com/2011/09/03/luter-king-i-have-a-dream/
19. https://ru.wikisource.org/i/%D0%92%D1%8B%D1%81%D1%82%D1%83

%D0%BF%D0%BB%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5_%D0%98._%D0%92._%D0%A1%D1%82%D0%B0%D0%BB%D0%B8%D0%BD%D0%B0_%D0%BF%D0%BE_

20. https://www.thoughtco.com/how-to-write-an-essay-p2-1209096
21. https://writingcenter.fas.harvard.edu/pages/essay-structurehttp://lklivingston.tripod.com/essay/ Last Updated: 25-June-2012 This site created by Kathy Livingston
22. https://edunews.ru/school/info/kak-napisat-ehsse.html#q5© edunews.2
23. http://www.gov.am/am/independence/

ԳԼՈՒԽՆԵՐԸ ԸՍՏ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գլուխ 2. ՀՀ դատական համակարգ
Դաս 1. Դատական իշխանությունը իշխանությունների բաժանման համակարգում
Դաս 2. Առաջին ատյանի դատարաններ.

Գլուխ 3.
Դաս 1. Մարդու իրավունքներ և պետություն
Դաս 2. Մարդու իրավունքներ և սահմանադրություն

Գլուխ 4.
Դաս 1. Միջազգային իրավունքի աղբյուրները
Դաս 4. Միջազգային կազմակերպությունները և միջազգային իրավունքը

Գլուխ 6. Քաղաքական համակարգը եվ դրա հիմնատարրերը
Այլընտրանքային դաս 1
Այլընտրանքային դաս 2. Կիրառված մեթոդների և հնարների նկարագիր («Անկյուններ», «Զրույց», «Բանավեճ» մեթոդներ)

ԳԱՅԱՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Գլուխ 1. Իրավունք
Դաս 1.1. Հասարակական կարգավորում, հասարակական նորմեր
Դաս 1.2 Հասարակական կարգավորում. իրավունք
Դաս 4.1. Իրավունքի համակարգ
Դաս 4.5. Աշխատանքային իրավունք

Գլուխ 5. Մարդը և քաղաքականությունը
Դաս 1-2. Ինչ է քաղաքականությունը

Գլուխ 6. Քաղաքական համակարգը և դրա հիմնատարրերը
Դաս 1. Քաղաքական համակարգի էությունը
Դաս 5. Քաղաքական առաջնորդություն (լիդերություն)
Դաս 4-5. Պետությունը՝ քաղաքական համակարգի ինստիտուտ
Կիրառված մեթոդների և հնարների նկարագիր (Համագործակցային ուսումնառություն, «Ավտոբուսային կանգառ», «Քարտերով աշխատանք» մեթոդներ, «Ինչպե՞ս գրել էսսե» ուղեցույց)

Ձեռնարկի բովանդակության մեջ ընդգրկված հեղինակների մասին հակիրճ տեղեկատվությունը և հասկացությունների բառարանը կազմեց **Լիլիթ Միրզոյանը:**

Սրբագրիչ՝ Անահիտ Հարությունյան
Համակարգչային ձևավորումը՝ Անուշ Մեսրոպյանի

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Հայրիկ Մուրադյան 42/2, (գրասենյակ)
Ավան,Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ.՝ (374 11) 52 10 20, (374 55) 58 80 23
Էլ. փոստ՝ info@asoghik.com